ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

# ԼՈՌԻՆ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ



ԵՐԵՎԱՆ - 2010

9(47.925)
Ա-52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

1324

# ԼՈՌԻՆ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

(պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ 59

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES 59

Երևան - 2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա 523

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան

Ա 523 Ամիրջանյան Հ., Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին,- Եր.: Պատմության ինստիտուտ, 2010.- 163 էջ:

Մենագրությունը նվիրված է Գուգարաց աշխարհի Տաշիր և Ձորոփոր գավառների տարածքում ձևավորված՝ Արևելյան Հայաստանի մի ինքնատիպ վարչական և ազգագրական ամբողջության՝ Լոռու գավառի XVIII դ. վերջի և XIX դ. առաջին երեսնամյակի պատմաժողովրդագրական պատմությանը:

Ներկայացվել է XVIII դ. սկզբներին Անդրկովկասում ստեղծված նոր ռազմաքաղաքական իրադրությունը, Լոռու սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը Վրաստանի և Ռուսաստանի տիրապետության շրջանում, ժողովրդագրական իրավիճակը, էթնիկ տեղաշարժերը, վարչական բաժանումները:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-73-42-6

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմական Մեծ Հայքի 15 նահանգներից տասներեքերորդը՝
Գուգարքը, արևելքից սահմանակից էր Ուտիք, արևմուտքից՝ Տայք,
հարավից՝ Այրարատ նահանգներին, հյուսիսից՝ Իբերիային (հետա-
գայում՝ Վրաստան): Մենագրությունը նվիրված է Գուգարք աշխարհի
Տաշիր և Ձորոփոր գավառների տարածքում ձևավորված՝ Արևելյան
Հայաստանի մի ինքնատիպ վարչական և ազգագրական ամբողջու-
թյան՝ Լոռու գավառի XVIII դ. վերջի և XIX դ. առաջին երեսնամյակի
պատմաժողովրդագրական պատմությանը:

Մենագրության մեջ քննության են առված Լոռու ժողովրդագրա-
կան իրավիճակը, էթնիկական տեղաշարժերը, բնակավայրերը, ազ-
գաբնակչությունը, վարչական բաժանումները և մի շարք այլ հիմ-
նահարցեր: XIX դ. առաջին երեսնամյակն Արևելյան Հայաստանի և
առհասարակ Անդրկովկասի համար ազգաբնակչության լուրջ տեղա-
շարժերով և էթնոժողովրդագրական բուռն գործընթացներով լի մի
փուլ էր՝ պայմանավորված Ռուսաստանի՝ Անդրկովկասում իր տնտե-
սական, քաղաքական և ռազմական դիրքերն ամրապնդելու քաղա-
քականությամբ:

Ավելի քան յոթ տասնամյակ խորհրդահայ պատմագրությունը
պարտադրված էր մեր պատմության բազմաթիվ հարցերում կաղա-
պարվել գաղափարական շրջանակներում: Այդ պատճառով բազմա-
թիվ կարևոր խնդիրներ անաչառ լուսաբանում չեն գտել: Ըստ
արժանվույն գնահատելով ուսումնասիրվող ժամանակաշրջանի
վերաբերյալ նախորդ ուսումնասիրություններն ու աշխատանքները՝
այսուհանդերձ, հարկ է նշել, որ հրապարակում եղած գրականության
մեջ բացակայում է էթնոժողովրդագրական գործընթացների գիտա-
կան վերլուծությունը, հատկապես, երբ խոսքը վերաբերվում է ազգա-
բնակչության տեղաշարժերին, դրանց քաղաքական և սոցիալ-տնտե-
սական նախադրյալներին, ռուսական կառավարության վարած
վարչաժողովրդագրական քաղաքականությանը:

Մենագրության թեման խիստ արդիական ենք համարում, քանզի
կարևորվում է Լոռին Վրացական Պետության շրջանակներում տեղայ-
նացնելուն ուղղված՝ վրացական պատմագիտության անհեթեթ փոր-

ծերին հակահարված տալու անհրաժեշտությունը: Հայ-վրացական հարաբերությունների պատմության նորովի մեկնաբանումն ունի կարևոր նշանակություն, երբ մեր երկիրը մեկուկես տասնամյակից ավելի գտնվում է անկախ պետականության զարգացման և Վրաստանի Հանրապետության հետ նոր բնույթի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային հարաբերությունների ձևավորման ու զարգացման ճանապարհին:

Կարևոր է, թե Ռուսական կայսրության կողմից որչափ էր կարևորվում Լոռու գավառը, այն հայ բնակչությամբ համալրելը, ամուր ռազմական, տնտեսական գոտի ստեղծելու խնդիրը՝ Անդրկովկասում ռազմական առումով և հատկապես տնտեսապես ամրապնդվելու ճանապարհին: Ներկա ուսումնասիրության մեջ փորձ է արվում բացահայտել Կովկասի ռուսական զինվորական իշխանությունների իրականացրած վերաբնակեցումների դրդապատճառները, էթնիկ տեղաշարժերի հետևանքները, վարչական նոր բաժանումների, կայսրության ծայրամասային շրջաններ, մասնավորապես Անդրկովկաս, այդ թվում՝ Լոռի կազմակերպված վերաբնակեցումների պատմության մեկնաբանումը և այլն:

Մեծ կարևորություն է ստանում Լոռու աշխարհագրական սահմանների ճշգրտման հարցը, քանի որ ուսումնասիրվելիք ժամանակահատվածում տարածքն ընդգրկվելով Վրաստանի կազմի մեջ, վարչականորեն չի առանձնացվել և հստակ սահմանազատման չի ենթարկվել ոչ Վրաստանից, ոչ էլ վերջինիս մեջ ներառված հայկական մյուս տարածքներից: Ռուսական տիրապետության շրջանում Լոռին դարձյալ հիմնականում հանդես է եկել ոչ որպես առանձին տարածք, այլ՝ որպես Փամբակ-Շորագյալի դիստանցիայի (дистанция) մի մաս կամ Բորչալուի գավառի (համապատասխանում է պատմական Ծոբոփորին, Բողնոփորին, Թռեղքին և Կանգարքին) սահմաններում: Սիա ինչու էական տեղ է հատկացվել երկրամասի վարչական բաժանման ուսումնասիրությանը, տրվել է բնակավայրերի տեղագրությունը: Նշված հարցերը առավել հիմնավոր և ամբողջական վեր հանելու նպատակով հարևանցիորեն անդրադարձ է կատարվել նաև Փամբակի և Բորչալուի գավառների պատմությանը:



Բորչալուի հարթության հյուսիսային սահմանը կազմում էին
Թռեղք (Թրիալեթ) և Յաղլուջա լեռները՝ մինչև Խրամ գետ, արևելյա-
նը՝ Կուր գետը, արևմուտքում և հարավում՝ Վիրահայոց (Սոմխեթի)
լեռները: Բորչալուի սահմանները հաճախ փոփոխվում էին՝ տարբեր
ժամանակահատվածներում իրենց մեջ ընդգրկելով Լոռու տափա-
տանը կամ Ձորագետի ավազանը, այդ պատճառով Բորչալուն և
Լոռին տարածքային առումով հաճախ համընկնում էին, բացառու-
թյամբ Դեբեդ գետի ափին ընկած մի քանի գյուղերի, թեպետ երկու
տարածքներն էլ վաղ ժամանակներից հայտնի էին «Լոռի» ընդհանուր
անվամբ[1]: Լոռի ասելով երբեմն ի նկատի են ունենում Բորչալուի
հարավային, իսկ Հյուսիսային Լոռի ասելով՝ Բորչալուի հյուսիսային
հատվածները:

Բուն Լոռու կամ Բորչալուի հարավային մասը կազմող տարած-
քը, հետագայում՝ 1805 թ. կազմեց Փամբակ-Շորագյալի ուղեմասի մի
մասը և հիմնականում համապատասխանում է պատմական Գուգարք
աշխարհի հարավարևելյան մասում ընկած Ձորոփոր և Տաշիր
գավառներին: Տաշիրը համապատասխանում է Խորհրդային Հայաս-
տանի Ստեփանավանի և Կալինինոյի (այժմ՝ Տաշիր) շրջաններին,
Ալավերդու շրջանի հարավային մասին, Ձորոփորը՝ Ալավերդու
շրջանի մի մասին[2]: Լոռու հարավային սահմանը կազմում էր Փամ-
բակը: Լոռին Փամբակից բաժանվում էր Բազումի (Բզովդալ, Դվալ)
լեռնաշղթայով, որն սկսվում է Խոնավ լեռների հարավային մասից և
զուգահեռականի ուղղությամբ ձգվում դեպի արևմուտք՝ մինչև Գայլա-
ծորի կիրճը՝ հանդիսանալով Փամբակ և Ձորագետ գետերի
ջրբաժանը:

1801 թ. Վրաստանի կազմում Ռուսաստանին էին միացել Լոռին,
Փամբակը, Բորչալուն, Ղազախը և Շամշադինը: Լոռին և Փամբակը
միասին կազմեցին մեկ վարչական միավոր, չնայած պատմա-
գիտական գրականության մեջ հաճախ ներկայացվում են առանձին-

[1] Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XX в., Е., 2002, с. 90.

[2] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Ե., 1963, էջ 63-64, 85:

առանձին:

XVIII դ. սկզբներից սկսած՝ լեզգիների արշավանքների հետևանքով Լոռին զգալիորեն հայաթափվեց: Դարավերջերին, Անդրկովկասում ռազմաքաղաքական նոր իրավիճակի պայմաններում, Լոռու տարածքում տեղի ունեցան բնակչության տեղաշարժեր: Պարսից Աղա Մահմադ խանի արշավանքների պատճառով Լոռու, Փամբակի, Բորչալուի բնակչության մի մասը գերի ընկավ, շատերը զոհվեցին, մի մասն էլ հեռացավ բնակավայրերից: Սակայն հետագայում բացակա ժողովրդի տեղում բնակվողները մեծամասամբ հայեր էին, իսկ հեռացած ժողովրդի մի մասն էլ, իրավիճակի փոքր-ինչ կայունացման պայմաններում, վերադարձավ նախկին բնակավայրերը: Մենագրությունը շարադրելիս մեր առջև խնդիր ենք դրել ցույց տալ, որ հակառակ Կովկասի ռուսական հրամանատարության զեկույցներում ներկայացվող տվյալների, XIX դ. սկզբին Լոռին ոչ միայն ամբողջովին ամայի չէր, այլև մեծամասամբ հայաբնակ էր:

XIX դ. սկզբին նպաստավոր ռազմաքաղաքական իրադրության պայմաններում ցարիզմը ձեռնամուխ եղավ Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ծրագրի իրագործմանը, ինչը հիմնականում համապատասխանում էր հայ ժողովրդի՝ թուրքական և պարսկական լծից ազատագրվելու վաղեմի ձգտումներին: XIX դարասկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների առաջին փուլում (մինչև 1813 թ.) Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետությունից Ռուսական կայսրության հովանու տակ ի թիվս այլ տարածքների, անցավ նաև Լոռու գավառը:

Ռուսական կայսրության կողմից Լոռու գավառի գրավումը առաջին քայլն էր Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման խնդրի լուծման ճանապարհին: Բացի այդ, ինքնակալությունն այստեղ ծավալեց տնտեսական լայն գործունեություն. ռուսական իշխանությունները իրենց ձեռքն առան Ալավերդու, Ախթալայի և Շամլուղի պղնձահանքերի ղեկավարումը՝ դրանց շահագործումը իրականացնելով հիմնականում տեղի հայկական գյուղերի բնակչության բանվորական ուժի հաշվին:

Խիստ կարևորվում է Լոռու սոցիալ-տնտեսական և քաղաքական



իրավիճակը Վրաստանի կազմում (մինչև 1801 թ.), ռուսական իշխանությունների ռազմատնտեսական և ժողովրդագրական քաղաքականությունն Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Լոռիում, կայսրության գաղութային քաղաքականության հիմնախնդիրները, Անդրկովկասում կազմակերպված վերաբնակեցումների հետևանքները Լոռիում, տարածքի էթնոժողովրդագրական իրավիճակը և վարչական բաժանումները: Համապատասխան նյութերի սակավությունը, երբեմն նաև՝ իսպառ բացակայությունը դժվարալուծելի է դարձնում ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերաբերյալ ամփոփ վիճակագրության կազմումը. ձեռագիր և տպագիր աղբյուրներում տեղ գտած տեղեկությունները գերազանցապես վերաբերվում են Վրաստանին (որի կազմում էր Լոռին) կամ սահմանափակվում ամբողջ գավառի մասին խիստ ընդհանուր հիշատակություններով: Գործը դժվարանում է նաև ռուս հրամանատարության բացթողումների պատճառով. այսպես օրինակ, կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ի. Գուդովիչի 1807 թ. հոկտեմբերի 17-ի համար 107 զեկուցագրում նշվում է, որ 1804 թ. Փամբակի ուղեմասում եղել է 2832 արական սեռի շունչ, որոնցից՝ թաթարներ՝ 1529, հայ հնաբնակներ՝ 926, Լոռուց եկածներ՝ 318, կալվածատիրական՝ 59 շունչ[3]: 1808 թ. մայիսի 8-ին դարձյալ Ի. Գուդովիչի կողմից պետական էքսպեդիցիային արված առաջարկության մեջ նույն թվական տվյալները բերվում են որպես նախորդ՝ այսինքն՝ 1807 թ. տվյալներ[4]: Ավելի հավանական ենք համարում, որ այս տվյալները կարող են վերաբերվել 1804 թ., քանի որ այդ թվականին Լոռու բնակիչների տեղաշարժերը ավելի մեծ չափերի են հասել:

Ժողովրդագրական հիմնախնդիրների քննության տեսանկյունից առանձնակի կարևորություն են ստանում ռուսական իշխանությունների կողմից XIX դ. առաջին երեսնամյակում Անդրկովկասյան երկրամասի վարչատարածքային բարեփոխումների քաղաքականությանը և դրանում Լոռուն հատկացված դերակատարության խնդիր-

3 АКАК, т. 3, Тифлис, 1869, док. 415, с. 228.
4 Նույն տեղում, док. 416, с. 229.

ների մանրազնին ուսումնասիրությանը: Ըստ այդմ՝ կարևորվում է Լոռու գավառի տեղը և դերն այդ բաժանումների համակարգում: Այդ քաղաքականությունը թելադրված էր ցարական ինքնակալության՝ երկրամասում հետապնդած գաղութատիրական շահերով, որոնցով պայմանավորված՝ ռուսական զինվորական և քաղաքացիական իշխանությունները ձեռնամուխ են լինում բնակչությունից նոսրացած Լոռու վերաբնակեցման քաղաքականությանը:

Ինչպես ամբողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ Լոռու ժողովրդագրական հիմնախնդիրների ուսումնասիրության առումով կարևորություն է ձեռք բերում արևմտահայերի, ջավախահայերի և Արցախի հայերի վերաբնակությունների, նոր վայրերում նրանց տեղաբաշխման, հետագայում մեծ մասի վերադարձի և այլ հարցերի քննարկումը: Թուրքմենչայի (1828 թ. փետրվարի 10) և Ադրիանապոլսի (1829 թ. սեպտեմբերի 2) հաշտության պայմանագրերի կնքումից հետո Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից սկսվեց հայերի վերաբնակեցումը Արևելյան Հայաստանի տարածքներ: Զանգվածային այդ տեղաշարժերը (հատկապես Արևմտյան Հայաստանից) որոշ չափով համալրեցին Լոռու գավառի բնակչության կազմը՝ գրեթե չխախտելով նրա էթնիկ պատկերը:

Արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների (փաստաթղթերի ժողովածուներ), խորհրդային և ժամանակակից պատմաբանների աշխատությունների, գիտական հոդվածների օգտագործմամբ փորձ է կատարվել հնարավորինս ամբողջական ձևով վերլուծել Լոռու XVIII դ. վերջի և հատկապես XIX դ. առաջին երեսնամյակի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը, վրաց ազնվականության անբարեհաճ վերաբերմունքը հայ բնակչության, հատկապես Արցախից եկած և այստեղ հաստատված մելիքների ու նրանց հպատակների նկատմամբ, ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը տարածաշրջանում, գավառի խոշոր վանքերի վանքապատկան և կալվածատիրական բնակչության նկատմամբ ցարիզմի վերաբերմունքի ընդգծված տարբերակվածությունը, էթնոժողովրդագրական տեղաշարժերի բնույթը: Ուսումնասիրվելիք ժամանակաշրջանի Լոռու պատմությանը վերաբերվող



նշված հիմնահարցերը, հատկապես տարածքը Ռուսական կայսրության տիրապետության տակ անցնելու ժամանակաշրջանում, պատմագիտական գրականության մեջ քննարկվել են ոչ որպես առանձին հետազոտության թեմա, այլ պատմական այդ ժամանակաշրջանն ընդգրկող տարաբնույթ ուսումնասիրությունների բաղկացուցիչ մաս[5]: Հետազոտությունը նպատակ է հետապնդում ի մի բերել Լոռու պատմության՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող պատմագիտական և ժողովրդագրական փաստերն ու տեղեկությունները, ուրվագծել գավառի սոցիալ-քաղաքական, ռազմավարական, ինչպես նաև էթնոժողովրդագրական ամբողջական պատկերը: Շրջանառության մեջ են դրվում արխիվային փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել Լոռու գավառի բնակչության մոտավոր թվաքանակի մասին:

XVIII դ. վերջի Լոռու տարածքում տեղի ունեցած պատերազմների ու ասպատակությունների պատճառով հայ բնակչության ծանր վիճակի վերաբերյալ կարևորագույն աղբյուր է Վարդան Օձնեցու «Պատմութիւն նոր քաղաքական և եկեղեցական Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու» խորագիրը կրող ձեռագիր աշխատությունը[6]: Օձնեցին, որն իր նկարագրած իրադարձություններից հեռու էր ընդամենը մի քանի տասնամյակով, պատկերավոր նկարագրում է լեզգիների ավերածությունները Լոռիում, տեղի բնակիչների պատսպարումը գյուղերին մերձակա վայրերում, բնակավայրերի ամայացումը:

XVIII դ. վերջի, մասամբ նաև XIX դ. սկզբի Լոռու բնիկ-տեղացի

[5] Տես՝ Գրիգորյան Զ., Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին, Ե., 1957, Иоаннисян А., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Е., 1958, Агаян Ц., Роль России в исторических судьбах армянского народа, М., 1978, Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Ե., 1978, Պարսամյան Վ., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Ե., 1978, Գրիգորյան Զ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978, Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия, Е., 1990.

[6] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4331:

բնակչության էթնիկ կազմի և թվաքանակի մասին արժեքավոր և եզակի աղբյուր են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող վանքերի եկամուտների և ծախսերի, տարբեր վանքապատկան գյուղերի մկրտվածների, ամուսնացածների, մահացածների ծխամատյանները: Դրանք թերի են, քանի որ տվյալները վերաբերվում են միայն վանքապատկան գյուղերի արական բնակչությանը: Այնուամենայնիվ, այդ նյութերի օգնությամբ հաջողվել է մոտավոր պատկերացում կազմել Լոռու գյուղերի բնակչության թվաքանակի վերաբերյալ: Կարևոր են նաև Մատենադարանի Ներսես Աշտարակեցու, Հարություն Աբրահամյանի, Ալեքսանդր Երիցյանի անձնական ֆոնդերի՝ Լոռու տարածքի ու բնակչության վերաբերյալ բացառիկ կարևորություն ներկայացնող մի շարք վավերագրեր, փաստաթղթեր, զեկուցագրեր ու անձնական նամակներ[7]: Դրանք տեղեկություններ են պարունակում Լոռու գավառի բնակավայրերի, բնակչության էթնիկ տեղաշարժերի, հայ ազգաբնակչության տնտեսական ծանր վիճակի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

Հայաստանի Ազգային արխիվի ֆոնդերում Վրացախմերեթյան թեմի Ղազախի նահանգի հայ բնակչության 1839 թ. մարտի 22-ի մարդահամարի տվյալների մեջ հանդիպում ենք միայն Արծիս և Շնող գյուղերի գերդաստանների թվի վերաբերյալ տվյալների[8]:

Հայ պատմիչների երկերում տարբեր բնույթի պատմական տեղեկություններ կան Մեծ Հայքի Գուգարք գավառի վերաբերյալ[9]:

---

[7] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու ֆ., ց. 54, թղթ. 164ա, վավ. 354, թղթ. 165, վավ. 682, թղթ. 166ա, վավ. 78, Ալ. Երիցյանի ֆ., թղթ. 154, վավ. 244, թղթ. 156, վավ. 337, Հարություն Աբրահամյանի ֆ, թղթ. 99, վավ. 74ա:

[8] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թթ. 107-110, գ. 3800, թթ. 49-50:

[9] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան տէրն Մամիկոնէից, քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Ե., 1984, Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Ե., 1987, Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, Ե., 1913, Անանիա Շիրակացի, Աշխարհացոյց, Ե., 1979, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Գ. Թոսունցյանի, Ե., 1996, Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմ. Վ. Առաքելյանի, Ե., 1982, Միքայել Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Ե., հ. Գ, 1984:



Գուգարք-Լոռին հիշատակվում է վրաց միջնադարյան աղբյուրներում (վերջիններում ողջ Հայաստանին տրված Սոմխեթ անվամբ կոչում են նաև Թիֆլիսից հարավ ընկած տարածքները՝ հիմնականում Գուգարք աշխարհի Ձորոփոր գավառը): Դավիթ Շինարար թագավորի (1089-1125) կողմից Լոռու միակցումը Վրաստանին վրացական պատմագրության մեջ դիտվում է որպես տարածքի ազատագրում[10]:

Լոռու քաղաքական, սոցիալ-տնտեսական և էթնոժողովրդագրական վիճակը անհնար է ուսումնասիրել առանց նույն ժամանակաշրջանում կատարվող պատմական իրադարձությունների հենքի: Հետևաբար Լոռու XIX դ. առաջին երեսնամյակի ռազմաքաղաքական իրադարձությունների պատմությունը դիտվել է ամբողջ տարածաշրջանի՝ Անդրկովկասի պատմական իրադարձությունների կտրվածքով: Ռուս-պարսկական (1826-1828) և ռուս-թուրքական (1828-1829) պատերազմներից հետո ռուսների հովանավորությամբ և դրդմամբ սկսվեց արևմտահայերի տեղաշարժը դեպի Արևելյան Հայաստան, այդ թվում՝ Լոռի: Հրապարակի վրա են տվյալ հարցերի վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուներ[11]:

Արցախի հայ մելիքների և նրանց հպատակների՝ Լոռու տարածք վերաբնակեցման ու բնակավայրերում նրանց տեղաբաշխման գործընթացների վերաբերյալ բազմաթիվ տվյալներ կան Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» մեծարժեք աշխատությունում[12], որը ստեղծվել է գրողի՝ Արցախ կատարած ուղևորության արդյունքում:

Արցախի մելիքների՝ Լոռի վերաբնակեցման վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ պարունակող մյուս ուսումնասիրությունը Լեոյի «Հայոց պատմություն» է: Նա ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է մելիքների՝ Լոռի գալու դրդապատճառները, ինչպես նաև այստեղ նրանց հակասությունները վրաց ազնվականության հետ,

---

[10] Տես՝ История Грузии, под. редакцией С. Джанашия, т. 1, Тбилиси, 1946, с. 165-166.

[11] Собрание актовъ относящихся к обозрению истории армянского народа, ч. 1, М., 1833, Армяно-русские отношения в XVIII веке, сборник документов под ред. акад. М. Нерсисяна, т. IV, Е., 1990.

[12] Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987:

ինչը եղավ նրանց Արցախ վերադառնալու պատճառներից մեկը[13]:

Այս հարցերի վերաբերյալ օգտակար տեղեկություններ ենք քաղել նաև Վ. Մաղալյանի[14] աշխատությունից, որը վերաբերվում է Վրաստանի Թեթրի-Ծղարոյի շրջանի հայկական Դաղեթ-Խաչեն գյուղի հարուստ պատմությանը:

Նշված հարցերի վերաբերյալ խիստ ուշագրավ են Ա. Մաղալյանի[15] հոդվածները, ինչպես նաև մենագրությունը, որը նոր լույս է սփռում Արցախի մելիքների պատմության մի շարք հիմնահարցերի վրա:

XIX դ. վերջերին Լոռու գավառի ժողովրդագրության վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություններ կատարեց մեծանուն հայ ազգագրագետ Երվանդ Լալայանը, ով կարողացավ հավաքել մեծ քանակությամբ պատմական, աշխարհագրական, ազգագրական նյութ՝ ներկայացնելով Բորչալուի գավառի ժողովրդագրական պատկերը և տալով գյուղերի տեղաբաշխումը[16]: Լալայանի աշխատությունն արժեքավոր է հատկապես, քանի որ հեղինակն անդրադառնում է յուրաքանչյուր գյուղի բնակչության կազմին՝ նշելով, թե որ գյուղում կան հաստատված վերաբնակիչներ:

Օգտագործվել են նաև ուսումնասիրություններ[17], որոնք թեև գավառի մասին ամբողջական պատկերացում չեն տալիս, սակայն դրանց հաղորդած տեղեկությունները մեծապես օգնում են լուսաբա-

[13] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1973:
[14] Մաղալյան Վ., Դաղեթ-Խաչեն, Ե., 1999:
[15] Մաղալյան Ա., Տոհմածառերի ուսումնասիրության նշանակությունը պատմական ժողովրդագրության բնագավառում, «Հայոց պատմության հարցեր», 2005, N 5, էջ 40-46, նաև՝ Արցախի մելիքական տների տոհմածառերը, «Բազմավէպ», Վենետիկ, թիւ 1-4, 2004, էջ 93-121, նաև՝ Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դարերում, Ե., 2007:
[16] Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, Թիֆլիս, ա. թ., նույնի՝ Երկեր, հ. 1, Ե., 1983, հ. 2, Ե., 1988:
[17] Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Զ, (1800-1820), Ե., 1934, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (այսուհետև՝ Վրաց աղբյուրները...), թարգմ.՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Բ, Ե., 1936, հ. Գ. Ե., 1955, Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму и другие страны Азии (1795-1827), М., 1969.



նել ժողովրդագրական ու էթնիկ բնույթի բազում կարևոր հարցեր:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Լոռին մեծ մասամբ եղել է օտար ասպատակությունների կիզակետում (լեզգիներ, պարսիկներ, թուրքեր), կամ էլ ընդգրկվել այլ պետությունների կազմում (Քարթլի-Կախեթի, վերջինիս հետ՝ Ռուսաստանի), ուստի կարևորվում են տարածքի ազգաբնակչության կազմի, էթնոժողովրդագրական գործընթացների և հատկապես վարչական բաժանումների հարցերը[18]: Խորհրդային և հետխորհրդային շրջանների ուսումնասիրողներից այդ հարցերին որոշ չափով անդրադարձել են Զ. Կորկոթյանը[19], Խ. Ավդալբեկյանը[20], Վ. Խոջաբեկյանը[21] և ուրիշներ: Այդ աշխատությունները նվիրված լինելով ամբողջ Արևելյան Հայաստանի՝ խնդրո առարկա ժամանակահատվածի էթնո-ժողովրդագրական դրության և այլ հարցերի ուսումնասիրությանը, որոշ չափով պատկերացում են տալիս Լոռու գավառի վերաբերյալ ուսումնասիրվելիք հարցերի վերաբերյալ:

Հայաստանի ռուս վերաբնակների և ռուսական բնակավայրերի հիմնադրման մասին արժեքավոր են Ա. Հայթյանի[22], Ի. Դոլժենկոյի[23] աշխատությունները: Հեղինակները բացահայտում են ռուս աղանդավորների Արևելյան Հայաստան, այդ թվում՝ Լոռի գալու և այստեղ հիմնավորվելու հանգամանքները:

XVIII դ. վերջերին Լոռու գավառի՝ որպես մասնավոր սեփականատիրական կալվածքի պատմության վերաբերյալ լուրջ աշխատու-

[18] Шахатунян А., Административный передель Закавказского края, Тифлись, 1918; Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XX в., Е., 2002.
[19] Կորկոթյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931 թթ.), Ե., 1932:
[20] Ավդալբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917), Ե., 1959:
[21] Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Ե., 1979, նույնի՝ Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, (XIX-XX դարերում - XXI դարի շեմին), Ե., 2002:
[22] Հայթյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակները (1830-1920), Ե., 1989:
[23] Долженко И., Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении, Е., 1985.

թյուններ ունի Պ. Չոբանյանը: Նա ներկայացնում է վրաց արքունիքի կողմից Լոռու գավառը հնդկահայ մեծահարուստ Շահամիրյանին նվիրաբերելու հանգամանքները, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի հայ-վրաց-ռուսական հարաբերությունների բազմակողմանի առնչությունները[24]:

Ռուսական կառավարությանն ուղղված ռուս զինվորական հրամանատարության կազմած հաշվետու զեկուցագրերի մեջ ընդգրկված վիճակագրական ցուցակները, որքան էլ հեռու են կատարյալ լինելուց, այնուամենայնիվ տեղեկություններ են պարունակում Լոռու գավառի ռազմաքաղաքական իրադարձությունների, ազգաբնակչության էթնիկ տեղաշարժերի, վարչական բաժանումների, երկրամասում կառավարչական նոր կարգեր հաստատվելու վերաբերյալ: Ընդ որում, ժողովրդագրական տեղաշարժերի հիմքի վրա առաջնային պլան են մղվում արևմտահայերի՝ Լոռու գավառում ըստ բնակավայրերի տեղաբաշխման հարցերը: Դրանց վերաբերյալ փաստերի մեծ մասը չեն պարունակում ըստ բնակավայրերի վերաբնակվողների տեղաբաշխման կոնկրետ թվական տվյալներ: Անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ, կարևորվում է վերջինիս տնտեսական քաղաքականությունը նորանված տարածքներում: Անդրկովկասը, այդ թվում Լոռու տարածքն այդուհետև դառնում են Ռուսաստանի հանքային-հումքային կցորդը, ինչը վերջինիս կողմից երկրամասը գաղութացնելու քաղաքականության մի մասն էր: Անդրկովկասի ռուսական գործարանային գերատեսչությունների ներկայացած հաշվետվություններում մանրամասն տվյալներ կան Ալավերդու հանքերի շահագործման վերաբերյալ: Այդ տեսանկյունից առաջնային է դառնում Լոռու տարածքի վերաբնակեցման հարցը՝ ելնելով հանքային աշխատանքները բանվորական ուժով ապահովելու անհ-

---

24 Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Ե., 1981, Հնդկահայ գաղթօջախի պատմությունից, Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1988, N 1, էջ 183-192, Հայ-վրաց-ռուսական յարաբերութիւնների պատմութիւնից, «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Ե., 1996, էջ 175-176, նույնի՝ Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ա., Ս. Էջմիածին, 2006:



րաժեշտությունից: Այս հարցերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան հրապարակի վրա գտնվող փաստաթղթային ժողովածուներում, ինչպիսիք են Կովկասյան հնագրական հանձնաժողովի հրատարակած 12 հատոր կազմող արխիվային նյութերը[25], ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին»[26] երկհատոր փաստաթղթերի ու նյութերի ժողովածուները[27]:

Լոռու գավառին առնչվող հարցերի տեսանկյունից որոշ չափով օգտվել ենք նաև վրաց հեղինակների աշխատություններից[28]՝ խիստ վերապահումով մոտենալով դրանց, ի նկատի ունենալով Գուգարքի Լոռին և այլ հարակից տարածքներ պատմական Վրաստանի Քվեմո Քարթլի՝ «Ներքին Քարթլի» երկրամաս ներկայացնելու վրաց հեղինակների մոտեցումները:

Լոռու ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերաբերյալ որոշ ուշագրավ տեղեկություններ կան նաև ռուս պատմաբաններ Պ. Բուտկովի[29] և Վ. Պոտտոյի[30] աշխատություններում:

Թերևս ավելի ամբողջական են Լոռու, Փամբակի, Բորչալուի գավառների առանձին ժամանակաշրջանների կամ տարածաշրջան-

---

25 Տես՝ Акты, собранные Кавказской археографической комиссией (այսուհետև՝ АКАК), тт. 1-12, Тифлис, 1866-1904.

26 Տես՝ Присоединение Восточной Армении к России, сборник документов, редактор Ц. П. Агаян, (այսուհետև՝ Присоединение...), т. 1, (1801-1813), Е., 1972, т. 2, (1814-1830), Е., 1978.

27 Документы и материалы по истории армянского народа, Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), составители Н. Тавакалян, Э. Костандян, В. Газарян, Г. Аракелян, С. Мирзоян, Е., 1993.

28 История Грузии, под. Редакции С. Джанашия, Тифлис, т. 1, 1946, Багратиони Д., История Грузии, Тбилиси, 1962, Бердзенашвили Н., История Грузии, т. 1, Тбилиси, 1962, Лордкипанидзе М., История Грузии XI-начала XIII века, Тифлис, 1974, Пайчадзе Г., Георгиевский трактат, Тбилиси, 1983.

29 Бутков П., Материалы для новой истории Кавказа, ч. 2, СПб., 1869.

30 Потто, В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 4, СПб., 1888.

ների պատմությանը վերաբերվող աշխատությունները[31], որոնք, հիմնականում սահմանափակվելով որոշակի տարածքի պատմությամբ, որոշ չափով օգնում են վեր հանել գավառի ամբողջական պատմությանը վերաբերող որոշ խնդիրներ:

Լոռու տարածաշրջանի վերաբնակեցման տեսանկյունից խիստ կարևորվում է արևմտահայ վերաբնակիչների տեղաբաշխման հարցերի քննությունը: Այդ իրադարձությունների վերաբերյալ օգտվել ենք Մ. Դարբինյանի շրջանառության մեջ դրած նյութերից[32], Հ. Մուրադյանի[33], Ե. Մանուկյանի[34] աշխատություններից:

Որպես պատմական միևնույն գավառի մասեր, Լոռու գավառի պատմությունը խիստ առնչվում է Ջավախքի պատմության հետ: Այս տեսանկյունից անգնահատելի նշանակություն ունեն և մեծ արժեք են ներկայացնում Ա. Մելքոնյանի[35] մենագրություններն ու հոդվածները:

Լոռու գավառի ժողովրդագրական հարցերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան գրեթե նույնատիպ քաղաքական ճակատագիր ունեցող Արևելյան Շիրակի XIX դ. առաջին կեսին պատ-

[31] Կոգմոյան Կ., Կիրովական, Ե., 1960, նույնի՝ Ալավերդի, Ե. 1966, Սաքևոսյան Ռ., Տաշիր-Ձորագետ, Ե., 1982, Ավետյան Վ., Շնող, Ե., 1998, Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., Մեծ Ղարաքիլիսա, Ե., h. 1, 2002, Ասլանյան Ս., Կարապետյան Ս., Շուլավեր, Ե., 2002, Քոչարյան Ս., Դսեղ, Ե., 2006:

[32] Դարբինյան Մ., Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթի վերաբերյալ, Բանբեր Հայաստանի արխիվների, (այսուհետև՝ «ԲՀԱ»), 1973, N 2, էջ 135-146, նույնի՝ Արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, «ՊԲՀ», 1974, N 2, էջ 91-100, նույնի՝ Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., «ԲՀԱ», 1977, N 3, էջ 3-23:

[33] Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 2006:

[34] Մանուկյան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թթ. վերջերին, 30-ական թթ. սկզբներին, Ե., 2005:

[35] Մելքոնյան Ա., Ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգի Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ գավառներում 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1988, N 5, էջ 13-24, նույնի՝ Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 1994, նույնի՝ ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին, Իրան-նամէ, 1998, N 1-2-3, էջ 12-16, նույնի՝ Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003:



մությանը վերաբերող Ա. Հայրապետյանի[36] մենագրության մեջ:

Վրաց պատմաբանները վարչականորեն Վրաստանի սահմաններ մեջ ներառված Հյուսիսայի Լոռին (ինչպես և Թիֆլիսից հարավ տարածվող այլ շրջանները), արհեստականորեն կոչում են «Ներքին Քարթլի» (Քվեմո Քարթլի) կամ «Վրաստանի հարավային գավառներ»: Այդ ուղղությամբ «բուռն» աշատանքներ են տարվում նաև ժամանակից վրաց պատմագրության մեջ[37]: Նրանք շրջանցում են այն փաստը, որ անգամ XIX դ. սկզբին՝ Վրաստանը Ռուսաստանին միացվելու պահին, Լոռու ազգաբնակչությունը մեծ մասամբ բաղկացած էր հայերից: Այդ իմաստով հատկապես աչքի է ընկնում Քեթևան Քութաթելաձեն («Ներքին Քարթլի: Քաղաքական պատմության հարցեր (Տաշիր-Ձորագետի թագավորությունը: Օրբելիների տոհմի պատմությունը)» (Թբիլիսի, 2000)[38]:

Էթնիկ տեղաշարժերի, ժողովրդագրական և այլ խնդիրներին վերաբերող արժեքավոր նյութեր կան նաև մամուլում: Խնդրի առնչությամբ հիշատակության արժանի են «Փորձ», «Կռունկ հայոց աշխարհին», «Արձագանք», «Մեղու Հայաստանի», "Кавказская старина", "Кавказский календарь" պարբերականներում զետեղված, իսկ Ալավերդու հանքերի շահագործման վերաբերյալ՝ տարածաշրջանում ավելի ուշ տպագրված մամուլի նյութերը[39]:

Այսպիսով, հրապարակի վրա եղած նյութերը, ամբողջովին Լոռու գավառին նվիրված չլինելով, միայն որոշակի պատկերացում են տալիս ուսումնասիրվող հարցերի վերաբերյալ:

[36] Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին; Գյումրի, 2005:

[37] Այս հարցերի վերաբերյալ տես՝ Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1999), նյութերի ժողովածու, թարգմ.՝ Հ. Բայրամյանի, Ե., 2001:

[38] Տես՝ Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 25:

[39] Տե՛ս «Դեբեդ », 1999, 16 ապրիլի, N 6, «Թումանյանական աշխարհ», 2005, 22 մայիսի, N 6:

# ԳԼՈՒԽ Ա

## ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌԸ XVIII Դ. ՎԵՐՋԻՆ - XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

«Կտրել Լոռին Հայաստանի մարմնից,
կնշանակե հոշոտել նրա ամբողջ
անցյալը և նրա կուլտուրական գանձերը.
դարերի հարյուրավոր սերունդների
մեծագործությունները թալանի տալ»:
Լեո

ա. Ռազմաքաղաքական իրավիճակն Անդրկովկասում Գուգարքը եղել է Հայաստանի ամենավաղ բնակեցված տարածքներից մեկը: Մարդաբանական ուսումնասիրություններով ապացուցվել է, որ այդտեղ ապրող ցեղերը եղել են հին հայկական ցեղեր, որոնցից առավել մեծաթիվ են եղել գուգարները: Հայկական լեռնաշխարհի ցեղերի մեջ սկզբնավորվող դասային հարաբերությունների վկայության նյութեր են հայտնաբերվել Գուգարքում պեղված հնագույն դամբարաններում[1]: Հայկական լեռնաշխարհի բրոնզի և երկաթի դարաշրջանների նշանավոր հուշարձաններից է Լոռի բերդը[2]:

Գուգարքի կազմում էին Ձորոփոր, Կողբոփոր, Ծոբոփոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Արդահան, Վերին Ջավախք և Կղարջք գավառները:

Լոռին պատմական Գուգարք գավառի մի հատվածն է կազմել, ընդ որում Լոռու աշխարհագրական սահմանների շրջանակները տարբեր ժամանակահատվածներում փոփոխություններ են կրել:

Լոռու պատմության կարևորագույն փուլ է հայոց թագավոր Աշոտ III Բագրատունու (953-977) որդու՝ Գուրգենի (Կյուրիկե, 979-991) կողմից Գուգարքում 969-970 թթ. հիմնված Տաշիր-Ձորա-

[1] Մելիք- Բախշյան Ս., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Ե., 1989, էջ 15:
[2] Ղևեջյան Ս., Լոռի Բերդ, Ե., 2006, էջ 5:



գետի թագավորության շրջանը[3]: Տաշիր-Ձորագետը Գուգարքի հարավարևելյան հատվածն էր, որը ձգվում էր Վիրահայոց լեռներից մինչև Աղստև գետը:

Լոռի[4] աշխարհագրական տերմինն առաջին անգամ հիշատակվում է, երբ Գուրգենի հաջորդ՝ «Ձորագետի և Սամշվիլդեի թագավոր»[5] Դավիթ Անհողինը (996-1048 (49) Գուգարքում կառուցեց 12 ամրոց, այդ թվում՝ Լոռին[6]: Դավթի օրոք Գուգարքի սահմանները ձգվում էին արևելքից արևմուտք՝ Շամխոր քաղաքից մինչև Կեչուտի լեռները (Ջավախքի լեռնաշղթան), հյուսիսից հարավ՝ Ալգետից մինչև Փամբակի լեռնաշղթա: 1064-1065 թթ. Շամշուլդեն (Սամշվիլդե) վիրաափխազաց թագավոր Բագրատ IV-ին (1027-1072) զիջելուց հետո[7] Կյուրիկյանները հաստատվեցին Լոռեում[8] (վերջինիս ավերակները գտնվում են ներկայիս Ստեփանավան քաղաքից 3 կմ հյուսիսարևելք), ուստի թագավորությունը կոչվեց Լոռու:

XII դ. 70-80-ական թթ. սկսվեց Տաշիր-Ձորագետի թագավորության մասնատման և թուլացման շրջանը: Դարի II քառորդում Կյուրիկյանների սերունդներն իշխում էին Տավուշ (մինչև 1145 թ.), Մածնաբերդ, Նոր-Բերդ ամրոցներում և հարակից տարածքներում՝ մինչև XIII դ. կեսերը[9]:

XVIII դ. վրաց անանուն հեղինակներից մեկը նշում է, որ վրաց

[3] Տաշիր-Ձորագետի X-XII դարերի մանրամասն պատմությունը տես՝ Մաթևոսյան Ռ., Տաշիր-Ձորագետ, Ե., 1982, Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Ե., 1980:
[4] Լոռէ, Լոռի և այլ ձևակերպումներից հանդես եկող բնակավայրի և համանուն գավառի անվանումը ոմանք ստուգաբանորեն բխեցնում են հայերեն լոռ (մանուռ) բառից՝ իբրև «Լոռալէտ տեղ», տես՝ Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, հ. 2, 1907, էջ 119:
[5] Мкртумян Г., Грузинское феодальное княжество Кахетии в VIII—XI вв. и его взаимоотношения с Арменией, Е., 1983, с. 110-111.
[6] Շահնյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986, էջ 40-41:
[7] Лордкипанидзе М., История Грузии XI-начала XIII века, Тбилиси, 1974, с. 82.
[8] Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, էջ 48:
[9] Մաթևոսյան Ռ., Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, «ՊԲՀ», 1968, N 3, էջ 205-207, Մարգարյան Հ., նշվ. աշխ., էջ 49-50:

թագավոր Կոստանդինի (1492-1496) որդի Դավիթ VIII-ի (1505-1525) տիրույթները հարավում հասնում էին «...մինչ Երևանի սահմանը, որ տարածվում է մինչև Բամբակ և Լոռի մինչ Ղազախի սահմանը»[10]:

1555 թ. Ամասիայի պայմանագրով Օսմանյան կայսրությանն է բռնակցվում Սամցխե-Ջավախքի իշխանապետության արևմտյան հատվածը, իսկ Պարսկաստանին՝ Գուգարք նահանգի Ջավախք և դրանից արևելք ընկած գավառները: Պարսկաստանին անցած տարածքների մեծ մասն ընդգրկվում են Քարթլի-Կախեթի մեջ, մնացած մասն ընդգրկվել է Չուխուր-Սաադի (Երևան և Նախիջևան) կուսակալության մեջ: 1590 թ. Կ. Պոլսի պայմանագրով պարսիկները Թուրքիային զիջեցին ողջ Անդրկովկասը՝ այդ թվում Գուգարք նահանգի հիշյալ գավառները՝ ներառյալ Ջավախքը[11]:

1604 թ. Շահ-Աբբասի հրամանով Լոռի-Ղազախ գավառներն առանձնացվեցին Վրաստանից և ենթարկվեցին Գանձակի բեկլարբեկությանը:

1628 թ. Օսմանյան Թուրքիան Սամցխեի աթաբեկության փոխարեն ստեղծեց վարչատարածքային նոր միավոր՝ Ախալցխայի (Չլդրի) փաշայություն, որի մեջ ընդգրկված էին Գուգարք նահանգի Արդահան, Ներքին Ջավախք, Շավշեթ և Թռեղք գավառները: Ժամանակ առ ժամանակ Չլդր-Ախալցխայի էյալեթը, հիմքում պահպանելով պատմական բաժանումները, ընդարձակվել է և իր մեջ միավորել ոչ միայն ողջ Տայք աշխարհն ու Գուգարքի մեծ մասը, այլև առանձին գավառներ Բարձր Հայքից, Այրարատից, Խաղտիկ-Լազիստանից[12]:

1639 թ. Կասրի-Շիրինում կնքված թուրք-պարսկական հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը, վերջինիս կազմում նաև՝ Գուգարքի կենտրոնական և արևելյան մասը, անցան Պարսկաստանին:

---

[10] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Ե., 1936, էջ 144:
[11] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Սաֆրաստյանը հ. Ա, Ե., 1961, էջ 37:
[12] Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին (այսուհետև՝ Ջավախքը...), Ե., 2003, էջ 69:



XVIII դ. սկզբին Անդրկովկասում ստեղծվեց նոր ռազմաքաղաքական իրավիճակ՝ պայմանավորված հյուսիսկովկասյան ցեղերի[13] մշտական հարձակումների և երկրամասի նկատմամբ ռուսական պետության հետաքրքրությունների աճով: Ամբողջ XVIII դ. ընթացքում Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից մեկն է դառնում Անդրկովկասում վերջնականապես հաստատվելը: Պարսկա-թուրքական ավերիչ արշավանքների պայմաններում Հայաստանի ազատագրման խնդրում ավելի է ակնառու դառնում ռուսական կողմնորոշման միտումը: 1701 թ. Ռուսաստան է ուղևորվում հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրին՝ խնդրելու Պետրոս I-ին (1682-1725)՝ ընդառաջել հայերին պարսկա-թուրքական զավթիչների դեմ պայքարում: Նա ուներ հայ մելիքների կողմից մի վստահագիր՝ հայերին պարսկական լծից ազատելու խնդրանքով[14]: Դեռևս 1699 թ. սեպտեմբերին Օրու զեկուցագրերում մանրամասն նկարագրվում է Հայաստանի ազատագրության համար գործողությունների ծրագիրը. այն ընդգրկում էր նաև Լոռու տարածքը[15]: Նկարագրելով ազատագրող զորքի մուտքը Հայաստան՝ Օրին առաջարկում էր գնդերը բաժանել չորս մասի, որի երկրորդ մասը պետք է գնար Լոռի: Ապա նշվում էին հայկական գավառները՝ ըստ զինվորներ տրամադրելու կարողության, այդ թվում նաև՝ Լոռին, որտեղից նախատեսվում էր 6000 մարդ[16]:

Օգտվելով Պարսկաստանում տիրող քաղաքական ծանր իրավիճակից, հյուսիսկովկասյան լեռնաբնակներն սկսեցին արշավել Վրաստան և պարսկական այլ նահանգներ: 1712 թ. լեզգիներն ապստամբելով Պարսից պետության դեմ, ասպատակեցին «...զբոլոր երկիրն Գուգարաց»[17]: 1719 թ. Դաղստանի լեռնաբնակներն անցան

---

[13] Սրանց տրվում է մեկ ընդհանուր «լեզգի», այսինքն՝ հյուսիսկովկասցի հավաքական անունը:
[14] Эзов Г., Сношение Петра Великого с армянским народом, СПб., 1869, с. 8-9.
[15] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, 1973, էջ 53:
[16] Նույն տեղում, էջ 56:
[17] Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, կազմեց Գ. Աղանեանց, Թիֆլիս, 1899, էջ 722:

Թիֆլիսի մոտով և մտան Լոռի: 1720 թ. լեզգիները Սուրխայի գլխավորությամբ դարձյալ ասպատակում ու ավերում են Լոռու գյուղերն ու ավանները և մեծաքանակ գերիներով ու ավարով վերադառնում Դաղստան:

Պետրոս I-ի օրոք ռուսական զորքերը գրավեցին Կասպիական արևելյան ծովեզրյա պարսկահպատակ տարածքները: Հայերն ու վրացիները ցնծությամբ ընդունեցին այդ լուրը: Նրանք իրենց ռազմական ուժերը միավորելով, 1722 թ. Գանձակ քաղաքի մոտ՝ Չոլակ գյուղում, սպասում էին Պետրոս Մեծին, սակայն լուր եկավ, որ կայսրը վերադարձել է Ռուսաստան: Դրանից հետո մահմեդականների հարձակումներն ավելի կատաղի դարձան: Թուրքերը գրավեցին իրենց սահմանակից պարսկական նահանգները, հասան մինչև Արցախ, իսկ 1724 թ. գարնանը փորձեցին գրավել Լոռին: Սակայն բերդի կայազորն ու հայ բնակիչները ետ մղեցին հարձակումը:

Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը 1724 թ. հոկտեմբերի 18-ին ուղարկած նամակով մի անգամ ևս օգնության խնդրանքով դիմում է ռուսաց կայսրին. «...հիմա Թուրքաց թագաւորի զօրք եկն էառ բազում տեղիս Ղզլպաշի հողէն, այսինքն՝ Թարվէզ, Նախչուան, Երևան, Թփլիզ, Պօրչալու, Ղազախ, այս ու ամենայն առաւ հոռմցին այժմ գալու է Գանջու և մեզ վրայ, ահա այսօր է մեզ օգնութեան օրն. խնդրեմք և աղաչեմք մի անփոյթ և անտես առնէր զմեզ...»[18]: Մեկ այլ նամակում՝ ուղղված Պետրոս Մեծին և վրաց Վախթանգ թագավորին ու վերջինիս որդի Շահնավազին, Եսայի կաթողիկոսը և Արցախի մելիքները գրում են. «...զի ահա Երևան, Նախջուան իւր երկրովն առան օսմանցիք ...Պօրչալու, Լօռի ևս թաման նոցա ձեռքն է ...Մեք մեծ յուսով եմք, և մեր աչքն գիշեր և ցերեկ ձեր գալու ճանապարհին է...»[19]:

1725 թ. գարնանը Սարը Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ թուրքերը վերսկսեցին իրենց հարձակումը: Նրանք մտան

[18] Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, կազմեց Գ. Աղանեանց, Թիֆլիս, 1899, էջ 160:
[19] Նույն տեղում, էջ 165:



Ղազախ, Շամշադին, Բորչալու, գրավեցին Լոռու բերդը: Թուրքերի ձեռքն անցավ ամբողջ Լոռի-Փամբակն ու Աղստևի շրջանը:

XVIII դ. 30-40-ական թվականներից Վրաստանն ու Հյուսիսային Հայաստանը կրկին հայտնվեցին լեզգիների հարձակումների կիզակետում[20]: 1734 թ. նրանք հերթական ավարառուական արշավանքը ձեռնարկեցին դեպի Լոռի: 1735 թ. Օսմանյան կայսրության զավթած Լոռի-Փամբակի տարածքը վերադարձվում է Պարսկաստանին: 1743 թ. լեզգիները հարձակվեցին Սանահինի վրա. «...և այն երկիրն ամբողջապես վնասեցին, տարան անթիվ գերիներ»[21]: 1745 թ. նրանք մեծ զորքով մտնելով Լոռի, գերեցին մարդկանց, քշեցին-տարան անասունները: Արշավանքները հաճախակի դարձան հատկապես 1754-1760-ական թթ., բնակչությունը թաքնվում էր ամրոցների շրջակայքում, ինչի հետևանքով երկրի տնտեսությունն անկում ապրեց[22]: 1754 թ. դարձյալ մտնելով Լոռի՝ հասան Հաղպատ, այնտեղից՝ Ղազախի լեռներով իջան Գանձակ: 1755 թ. լեզգիների զորքը դարձյալ ավերում է Լոռու գյուղերը, մտնում Հաղպատի ձոր, ապա Փամբակով անցնում Ղարաքիլիսա[23]:

1763 թ. մարտի 30-ին հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Էմինը Թիֆլիսում հանդես եկավ Հայաստանի ազատագրության իր առաջարկություններով: Սակայն նրա ծրագրերը չընդունվեցին վրաց արքունիքի կողմից: Էմինը վրաց Հերակլ II թագավորին (1744-1798) դիմում է մեկ այլ խնդրանքով՝ թույլ տալ իրեն իր 24 մարդկանցով ուղևորվել Լոռի՝ Հաղպատի վանք, բնակվել այնտեղ, պայքարել լեզգիների դեմ[24]: Նրա նպատակն էր այդ կերպ իր շուրջը հավաքել հայ կամավորներ՝ որպես Հայաստանի ազատագ-

[20] Այդ արշավանքների մասին տես՝ Эсадзе С., Историческая записка об управлении Кавказом, т. 1, Тифлис, 1907, с. 11-12, 14-15; Бердзенашвили Н., История Грузии, т. 1, Тбилиси, 1962, с. 358, 360, 397, Багратиони Д., История Грузии, 1971, Тбилиси, с. 163, 166-167, 169, 170-171, 173, 177.
[21] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Ե., 1955, էջ 117-118:
[22] Бердзенашвили Н., նշվ. աշխ., с. 360.
[23] Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., էջ 144-145:
[24] Иоаннисян А., Иосиф Эмин, Е., 1989, с. 118.

րության ապագա բանակ: Հերակլը չմերժեց նրա խնդրանքը և լիազորեց նրան մեկնել Հաղպատի շրջան՝ պայքարելու լեռնաբնակների դեմ: Ճանապարհին, ընդհարվելով լեզգիների հետ, Էմինը հասնում է Լոռու գավառ՝ Խրամ գետի ափին գտնվող Բայդար գյուղը, որտեղ չստանալով վրաց թագավորի խոստացած պարենը, ստիպված ազատ է արձակում իր հետ եղած մարդկանց:

1772 թ. Թուրքիայի դրդումով լեզգիներն Ավարայի Օմար (Ումմա) խանի գլխավորությամբ արշավանքներ ձեռնարկեցին դեպի Վրաստան, ինչի նպատակն էր ավերել երկիրը և ստիպել Հերակլ II-ին՝ հրաժարվել Ռուսաստանի հովանավորությունից: Նրանք մտան Լոռու գավառ, սարսափելի ավերածություններ գործեցին, այրեցին և ավերեցին բնակավայրերը, կոտորեցին բնակիչներին. «Ծերունիք մեր դեռ ևս յիշեն զամենի արձակումն Օմար-խանին Աւարիոյ ի 1772 ամին 50000 հատընտիր լեկզի զօրօք, որ ոտնակոխ արարեալ զՎրաստան և զբոլոր նահանգս Բօրչալուի եհաս մինչև Աղտալը գիւղ կոտորեաց զբոլոր բնակիչս հանքատեղւոյն, որք ամրացեալ էին յեկեղեցւոց անդ … խսպառ աւերեալ զՀաղբատ արարին զայն իբր ամայի անապատ և մնաց թափուր ի բնակչաց…»[25]: Այդ ավարառություններից մեծ չափով տուժեց նաև Շնող գյուղը[26]:

Լեռնականների և նրանց օժանդակող թուրքական ու պարսկական իշխանությունների կազմակերպած ավերածություններից խուսափելու համար վրաց թագավորները փորձում էին ավելի մերձենալ Ռուսաստանին: 1780-ական թթ. սկզբներին հայ-վրաց-ռուսական հարաբերությունները նոր որակ են ստանում: Վրաստանն իր աշխարհագրական դիրքի, ինչպես նաև ռազմաքաղաքական ու տնտեսական շահերի բերումով սկսում է էական դեր խաղալ հայ-ռուսական հարաբերություններում, հատկապես, որ Լոռու տարածաշրջանը՝ բացառապես հայ բնակչությամբ, շարունակում էր մնալ Քարթլի-Կախեթի

[25] Ռոստոմ-բէկ Երզնկեաց, Նկարագրական տեղեկութիւն աշխարհահռչակ սրբոյ Նշանի վանիցն Հաղբատայ, «Մեղու Հայաստանի», 1861, 25-ը սեպտեմբերի, N 59, էջ 400:
[26] Ավետյան Վ., Շնող, Ե., 1998, էջ 29-30:



թագավորության տարածքի մեջ[27]:

1782 թ. Օմար խանը կովկասյան լեռնաբնակներով կրկին հարձակվեց Վրաստանի վրա: Օմարի հրոսակախումբը մեծ վնաս հասցրեց ամբողջ Բորչալուին:

Հերակլը, չկարողանալով կասեցնել երկրի ներքին կազմալուծումը, ընդունում է Ռուսաստանի հովանավորությունը: 1783 թ. կնքվում է Գեորգիևյան համաձայնագիրը, որով Վրաստանն ընդունում էր Ռուսաստանի հովանավորությունը: Սակայն դա չկանխեց արտաքին վտանգները: Երբ լեզգիները 1784 թ. նորից արշավեցին Վրաստան, Լոռին մնաց անպաշտպան[28]:

Հաջորդ տարի Օմար խանը 20000 զորքով դարձյալ մտավ Վրաստան, հասավ Լոռու գավառ, ճամբար դրեց Խրամի և Ձորագետի միախառնման տեղում՝ Աղջա-Կալա ամրոցի մոտ: Լեզգիները պաշարեցին Գյումուշխանե[29] բերդը: Բերդում ամրացել էին տեղի հանքերում աշխատող հույները, այնտեղ էին ապաստանել նաև մերձակա հայկական գյուղերի բնակիչները: «…Յաւեր եւ յապականութիւն դարձուցին զամենայն վայր, որոց հասեալ յանառիկ ամրոցն կամ կամ յամուր արծաթիհանքին, որ Ախթալայն կոչի… յորում կային ամրացեալք բազմութիւնք Յունաց, որպէս եւ Հայոց բնակչաց եօթանց գիւղորէից…»[30]: Ավերելով ու թալանելով Ախթալայի պղնձահանքը, որը Հերակլին տարեկան 100 հազար ռուբլի եկամուտ էր բերում, արծաթի և ոսկու գործարանները, գերեցին մոտ 860 հոգի, սպանեցին 640-ի[31]: Այդ պահից սկսած՝ Ախթալայի հանքերը երկու տարի չգործեցին:

[27] Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия, с. 10, նույնի՝ Иосиф Эмин, с. 118.
[28] Լեո, Սահմանավեճեր, Աթենք, 1990, էջ 79:
[29] Գտնվում է Հաղպատի և Սանահինի մոտ և տեղային հանքերի անունով կոչվում է Գյումուշխան, որը նշանակում է արծաթի տուն կամ արծաթի հանք:
[30] Հովհաննես Ղրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965, էջ 127:
[31] История Грузии, под. редакцией С. Джанашия (այսուհետև՝ История Грузии...), т. 1, Тбилиси, 1946 с. 439, Бердзенашвили Н., նշվ. աշխ., с. 397, Бутков П., նշվ. աշխ., с. 181, Багратиони Д., նշվ. աշխ., с. 160.

Օմարի ուղարկած ջոկատներն ասպատակեցին Դսեղ, Շնող, Սանահին, Օձուն և Հաղպատ գյուղերը: «...Օմի խանն Լեզկեաց ժողովեալ զԿովկասեան զօրս իւր ԼՌ (30000-Հ. Ա.) և դիմէ ի Վրացտուն, և զանց արարեալ զբազում գաւառօք հասանի ի մատանն Լոռւոյ, որ մերձ է երկու ժամու ճանապարհի Սանահնու և Հաղպատու...»[32]: Հիմնովին ավերում են Արդվի գյուղն ու մենաստանը: Դսեղի բնակիչներն ամրացել էին գյուղի մոտակա ժայռերի մեջ[33]: Վարդան Օձնեցու նկարագրությամբ՝ լեզգիները վառում էին մեղվի փեթակները և նետում քարայրը, գազազած մեղուները խայթում էին մարդկանց, ծուխը՝ խեղդում: Այնուհետև Դեբեդի երկայնքով շարժվեցին վերև՝ հասնելով Օձուն գյուղ, բանակ դրին այդտեղ և մնացին ինը օր: Այստեղից մի ջոկատ է ուղարկվում՝ ավերելու Լոռու ամրոցի շրջակա գյուղերը: Ապա հեռացան Ախալքալաք՝ տանելով մոտ հազար գերի, որոնց մեծ մասն Ախթալայի պղնձահանքերում աշխատող հույներ էին[34]: Վ. Օձնեցին գրում է. «Իսկ Օման խան յետ մնալոյ ինն օր ի հայրենի գիւղն իմ Օձուն, առեալ զամենայն գերիս իբրև մի հազար անձինս զիայ և զիոյն, և զամենայն աւար նոցա էանց ընդ հովիտս Լոռու...»[35]: Հերակլ արքան զորքով փորձեց Օմարի առաջն առնել, բայց այդպես էլ չհամարձակվեց մոտենալ նրան. «Իսկ Հերակլ փոխէ զբանակ իւր ի Ճոճկան, որ հեռի է ի մատանէն մէկ ժամու ճանապարհի և առաքէ ըզկաղ Աւթանդիլ ոմն ի յիւրոց անտի զօրաց դեսպան խաղաղութեան առ Օմէին, բայց ի չանսալ Օմէուն...»[36]:

Օմարի հրոսակները Փամբակաձորով, ապա՝ Ապարանի և Սևանի վրայով գարնանն անցան Արցախ՝ նորանոր չարիքներ պատճառելով երկրին: Լոռուց զավթած ավարը և գերիներից

[32] Ոսկերչեան Յ., Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար, «Կռունկ հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, ապրիլ, էջ 281:
[33] Քոչարյան Ս., Դսեղ, 2006, էջ 48:
[34] Кавказская старина, Тифлис 1873, N 7-8, с. 196.
[35] Մատենադարան, ձեռ. 4331, թ. 70ա:
[36] Ոսկերչեան Յ., նշվ. աշխ., «Կռունկ հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, ապրիլ, էջ 282:



շատերին Օմար խանը վաճառում է Ախալցխայի փաշային[37]:

Լեզգիների արշավանքների պատճառով նոսրացավ վրացահպատակ Լոռու բնակչությունը, նրա մի մասը գաղթեց, մի մասն էլ սպանվեց կամ գերի տարվեց. «Քանզի բազում գունդք լէզկեաց Կովկասայ խաղացեալք ի վերայ Վրացտանու, զանչափ աւերս գործեցին՝ արիւն հեղութեամբ և գերութեամբ քրիստոնէից, և մերձեցան առ սահմանս երկրիս մերոյ»[38]:

Շնողի բնակչության մի մասը հեռացավ Արցախ՝ Խաչեն, որտեղ անհամեմատ ապահով էր, քան Լոռիում: Ժամանակ է եղել, երբ Դսեղ գյուղն ամբողջությամբ ամայի ու անմարդաբնակ է եղել[39]: Հաղպատի բնակիչները «...խոյս ետուն... եւ գնացեալ ամրացան յանմատոյց ծործորս լերանց եւ անտառայ»[40]: Հերակլ II-ի կարգադրությամբ 1770 թ. ապրիլի 5-ին կազմած Քարթլիի և Կախեթի վիճակագրության պատմության մեջ հանդիպում ենք հետևյալ վկայությանը. «...Ավեր են Տաշիրը, Գուջարեթը և Սոմխիթը, որ մեծ և բազմա(մարդ) երկիր է, ուր քառասունից մեկն է մնացել... Սաբարաթաշվիլոն ավերված բազմա(մարդ) երկիր է, ու հարյուրից մեկն է մնացել՝ խիզաններ»[41]:

XVIII դ. կեսերից Պարսկաստանում սկսված խռովությունների ընթացքում հաղթեց Զենդ-Քարիմ խանը (1750-1779), որի մոտ իբրև պատանդ պահվում էր Աղա Մահմադ խանը: Քարիմ խանի մահից հետո նա ապստամբեց և իրեն Պարսկաստանի թագավոր հռչակեց՝ Թեհրան աթոռանիստով, գահակալելով 1794-1797 թթ. (1796 թ. թագադրվեց որպես շահ): Աղա Մահմադ խանը եռանդուն գործունեություն ծավալեց՝ նպատակ ունենալով վերահաստատել Պարսկաստանի տիրապետությունը Ատրպատականում, Արևելյան Հայաստանում և Քարթլի-Կախեթում: Նրա՝ Անդրկովկաս կատարած արշավանքի նախօրեին, Լոռու բնակչությունը Ղազախի բնակչության հետ

[37] Մատենադարան, ձեռ. 4331, թ. 69բ-70ա, Քոչարյան Ս., նշվ. աշխ., էջ 48:
[38] Մատենադարան, ձեռ. N 4501, էջ 947:
[39] Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, հ. 2, 1907, էջ 622:
[40] Հովհաննես Ղրիմեցի, նշվ. աշխ., էջ 128:
[41] Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 154-157:

միասին շարժվում է դեպի Թիֆլիս՝ վերահաս վտանգից փրկվելու հույսը կապելով Վրացական թագավորության հետ[42]: 1795 թ. գարնանը Աղա Մահմադ խանը Թեհրանից արշավեց և նվաճեց Ատրպատականը, Թավրիզը, ապա՝ Երևանը և շարժվեց դեպի Թիֆլիս: Հերակլ II-ը, պարտվելով, փախավ Կախեթ, նրա զորքերը ցիրուցան եղան: 25 օր անց, երբ նա վերադարձավ, Թիֆլիսը լիովին ավերված էր[43]:

Աղա Մահմադ խանի արշավանքն ու Թիֆլիսի ավերումն ավելի վատթարացրին իրավիճակը Վրաստանում: Ղարաբաղի Իբրահիմ խանը Բորչալուից բուրք ազգաբնակչություն է գաղթեցնում Արցախ՝ թուրքական տարրն այնտեղ բազմացնելու նպատակով[44]: Այս վնասը մասամբ լրացնելու համար Հերակլի հրամանով տարբեր կողմերից (հիմնականում՝ Արցախից և Գանձակից) հայ բնակիչներ էին վերաբնակեցվում Վրաստանում և Սոմխեթում՝ Լոռու հյուսիսային մասերում (Բոլնիս և այլ վայրեր) և Թիֆլիսում, որպեսզի պաշտպանեն Վրաստանի արևելյան և հարավային սահմանները մահմեդական հորդաների հարձակումներից[45]: Այդ գաղթերի արդյունքում Վրաստանում, հատկապես Թելավում, բնակություն են հաստատել նաև Լոռուց գաղթած հայեր, մասնավորապես Հաղպատից, որի անունն էր կրում քաղաքի մի ամբողջ թաղամաս[46]:

Աղա Մահմադ շահը Թիֆլիսն ավերելուց հետո գնաց Գանձակ, որտեղից ասպատակություններ էր կատարում դեպի Լոռի և Արցախ[47]: Թշնամու ջոկատներից մեկն ուղղվեց դեպի Ախպալա, ուր պարսիկներն ավերեցին Օմար-խանի ասպատակություններից հետո Հերակլ

[42] Տիտանյան Ռ., Վարդան Օձնեցին պարսիկների 1795-1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքի մասին, «ՊԲՀ», 1965, N 3, էջ 214:
[43] Кавказская старина, N 7-8, 1873, с. 197-198; Бердзенашвили Н., նշվ. աշխ., с. 443-444.
[44] Багратиони Д., նշվ. աշխ., с. 166-167.
[45] Ջամալեան Ս., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 1928, ապրիլ, N 6, էջ 78:
[46] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1053, թ. 31:
[47] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմեդ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797), աշխ.՝ Ռ. Տիտանյանի, Ե., 1981, էջ 227, Լալայան Ե., Երկեր, հ. 2, Ե., 1983, էջ 207:



II-ի կողմից վերականգնված արծաթի ու պղնձի հանքավայրերը[48]: Ավերվեցին նաև Ալավերդու և Շամլուղի հանքավայրերը, հույն հանքագործներից 700-ը սպանվեց, 836-ը գերվեց[49]: Ավերածություններից տուժեց ամբողջ Փամբակաձորի հովիտը, խիստ նվազեց Լոռու, Փամբակի, Ղազախի բնակչությունը[50]: Վարդան Օձնեցին գրում է. «...գերելով անցեալ ապա մեջ ձորափորայ...ի գիշերի զգիւղն Օձուն:...գերեցին անդէն զվաքսուն անձինս զայր և զկին մեծ և փոքր»[51]: Մեծ հարվածներ կրեցին մինչ այդ Շահ-Աբբասի (1604 թ.), Նադիր շահի (1736 թ.), Օմարի արշավանքներից տուժած և գրեթե անմարդաբնակ դարձած Սանահինն և Հաղպատ գյուղերը: 1795 թ. Սանահինի վանքն ամայի էր[52]: «Յետ աւերման աշխարհին Վրաց ի Պարսիկ աղայ Մահմադ խանէ ամայի մնաց հոչակավոր մենաստուն Հաղբատոյ»[53]: Հաղպատի թալանված միաբանները ցրվեցին, իսկ Հաղպատ գյուղը մի փոքր ավելի ուշ՝ մոտավորապես 1796 թ. վրաց թագավորի կողմից որպես պարգև տրվեց վրացի իշխան Բարաթովներին՝ այնտեղ բնակություն հաստատելու պայմանով[54]: Իր ասպատակություններից հետո Աղա Մահմադ շահը, Երևանի խանությունը կրկին Պարսկաստանին ենթարկելուց հետո, նպատակ ունենալով թուլացնել Վրաստանը, հատուկ հրամանագրով Լոռին և Ղազախը տվեց Երևանի Մահմեդ խանին՝ անջատելով դրանք Քարթլիի թագավորությունից[55]:

Այդ արշավանքներից հետո Հերակլ II-ը նորից է խնդրում Ռուսաստանի օգնությունը[56]: 1796 թ. հունվարին նա հատուկ նամակով դիմեց փոխկանցլեր կոմս Ի. Օստերմանին՝ խնդրելով միջոցներ

[48] История Грузии, с. 444.
[49] Мелконян В., Металлургия меди в Армении, М., 1955, с. 45.
[50] Մատենադարան, ձեռ. 4463, թթ. 15-16, 22-26, 4331, թթ. 130-164:
[51] Նույն տեղում, ձեռ. 4331, թ. 134:
[52] Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 71, թ. 1:
[53] Ռոստոմ-բէկ Երզնկեաց, նշվ. աշխ., «Մեղու Հայաստանի», 1861, 25-ը նոյեմբերի, N 59, էջ 401:
[54] Երիցյան Ալ., Ամենայն հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 215:
[55] Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Ե., 1958, էջ 32:
[56] Эзов Г., նշվ. աշխ., с. CVII.

ձեռնարկել՝ Լոռին ու Ղազախը կրկին Վրաստանին կցելու համար[57]:

Աղա Մահմադ շահի արշավանքը մեծ հարված հասցրեց Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը: Ռուսներն աշխատում էին իրենց ազդեցությունը տարածել Անդրկովկասի քրիստոնյա և մահմեդական բնակչության վրա: Սակայն դեպքերը ցույց տվեցին, որ ժամանակին չօգնելով Վրաստանին, Ռուսաստանը կորցնում էր ոչ միայն իր դաշնակցին, այլ նաև՝ տարածաշրջանում իր ազդեցությունը, ինչն էական նշանակություն ուներ նրա հարավարևելյան ճանապարհի առաջխաղացման համար[58]: Ահա ինչու, Վրաստանին պաշտպանելու, Ռուսաստանի քաղաքական վարկը բարձրացնելու և Աղա Մահմադ շահին հարված հասցնելու նպատակով գեներալ Վ. Զուբովի գլխավորությամբ 1796 թ. գարնանը արշավանք սկսվեց դեպի Անդրկովկաս, որը հետապնդում էր Ռուսաստանի ազդեցությունը տեղում ամրապնդելու նպատակ: Ռուսները տիրեցին Դերբենդին, Շամախուն, Ղուբային, Բաքվին, իսկ հաջորդ տարվա գարնանը շարժվեցին դեպի Գանձակ: Սակայն Եկատերինա II կայսրուհու մահվանից հետո (1796 թ. նոյեմբեր) ռուսական բանակի հրամանատար գեներալ Վ. Զուբովը վերադարձի հրաման ստացավ: Ռուսական զորքի հեռանալուց հետո տեղի մահմեդական խաները կրկին գլուխ բարձրացրին և սկսեցին ավելի բարբարոսաբար վերաբերվել ռուսների կողմն անցած հայերի հետ և ստիպել նրանց՝ ընդունել իրենց հպատակությունը:

Այդ պատերազմների ու ասպատակությունների պատճառով տարածաշրջանում տնտեսությունն անկում ապրեց, շուտով սով սկսվեց, որին հետևեց ժանտախտը: Տագնապած հայ բնակչությունը սկսեց գաղթել: Գաղթից զերծ չմնաց Լոռու բնակչությունը: Վարդան Օձնեցին գրում է. «Բազում Հայք ի Տաւուշայ (Շէմշէդին) և ի Ղազախայ ամենայն գերդաստանեօք անցեալ ընդ Կուր գետ ամրացան ի Վրաստան, յորոց բազումք ոչ ևս դարձան անտի մինչև ցայսօր, որոց զորդիս և զքոռունս իշխանք և ազնուականք վրաց արարին իւրեանց իբրև արծաթագին ծառայ (ճորտ)...: Եւ իբրև այսպէս դատարկացաւ ի բնակչաց երկիրն Գագայ, Կողբոփորայ, Ծոբոփորոյ և Սօմխեթի...»[59]:

1797 թ. ամռանն Աղա Մամադ շահը նոր արշավանք սկսեց դեպի Անդրկովկաս: Հասնելով Շուշիի բերդին, այստեղ նա անսպասելիորեն սպանվեց: Պարսկական գահը ժառանգեց Ֆաթհ Ալի շահը (Բաբա խան, 1797-1834), որը շարունակեց իր նախորդների արշավանքներն ու ասպատակությունները: Այդ ամենին գումարվեցին սովն ու ժանտախտը: Արցախի հայ բնակչության մի մասը սկսեց հեռանալ երկրից՝ դեպի Օսմանյան կայսրություն, Պարսկաստան, Ռուսաստան, մի մեծ զանգված էլ՝ Վրաստան ու Լոռի, որն այդ ժամանակ դարձյալ գտնվում էր Վրաստանի տիրապետության տակ: Արցախի հայերը Լոռի եկան 1797-1798 թթ. սովի ու ժանտախտի տարիներին[60]:

Այսպիսով, Աղա Մահմադ խանի արշավանքներն ամայացրին Անդրկովկասի շատ տարածքներ, ֆիզիկական ոչնչացման վտանգ ստեղծեցին երկրամասի ժողովուրդների համար, որոնք մտածում էին, որ միայն Ռուսաստանի իշխանության տակ անցնելը կփրկի իրենց պարսկական լծից: Ցավոք, այդ արշավանքները հանգեցրին երկրամասի ժողովրդագրական պատկերի փոփոխության: Դրանց արդյունքում նոսրացավ արշավանքների ասպարեզ դարձած և դրանց հարևան տարածաշրջանների, հատկապես՝ Լոռու, Փամբակի, Ղազախի և Շամշադինի բնակչությունը: Լոռու բնակչության մի մասը գերի ընկավ, շատերը զոհ գնացին: Լոռու բնիկ տեղացի ազնվականներից շատերը լքեցին տարածքը՝ կորցնելով հողերի մի մասի նկատմամբ սեփականատիրական իրավունքները: Դրանց մի մասն անցնում է վրացի ազնվականների վերահսկողության տակ:

Կարևոր հանգամանք է, որ խաղաղ ժամանակաշրջան հաստատվելուց հետո Լոռուց հեռացած բնակչությունը վերադառնում էր նախկին օջախները, ինչը մեծապես կախված էր նաև լեզգիների՝ տեղում չհաստատվելու, նրանց արշավանքների զուտ ավարառուական

---

[57] Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 45:
[58] История Грузии, с. 445.

[59] Մատենադարան, ձեռ. 4331, թթ. 130-134:
[60] Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 531:

բնույթ կրելու հետ: «Թաթարների, պարսիկների և լեռնականների արշավանքների ժամանակ Տաշիրի հայ բնակչությունը գրեթե բնաջնջվում է: Բայց նրանց տեղը նորից բռնում են հայերը եւ նորից շենացնում երկիրը»[61], ինչի հետևանքով Վրաստանի տիրապետության ողջ ժամանակաընթացքում, հատկապես XVIII դ. վերջերին, տարածաշրջանը հիմնականում հայաբնակ էր:

## Բ. Լոռու գավառը Վրաստանի և Ռուսական կայսրության վարչատարածքային համակարգերում XVIII դ. վերջին, XIX դ. առաջին երեսնամյակին

XVIII դ. ընթացքում և XIX դ. Անդրկովկասյան երկրամասը կրել է վարչական մի շարք փոփոխություններ:

XVIII դ. վերջի և XIX դ. առաջին երեսնամյակի Լոռու վարչական բաժանումն այնքան էլ կայուն չի եղել՝ կապված Վրաստանի, ապա՝ վերջինիս հետ միասին Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հետ: Այդ բաժանումների ժամանակ հիմնականում անտեսվել են էթնիկ սկզբունքները: Լոռու նկատմամբ նման մոտեցումը պայմանավորված էր տարածքի կարևոր ֆիզիկա-աշխարհագրական դիրքով: Լինելով նախ Վրաստանի, այնուհետև՝ Ռուսաստանի հարավային սահմանը, տարածքն ամբողջությամբ գտնվում էր երկու պետությունների կառավարությունների տեղական վարչական մարմինների վերահսկողության ներքո:

XVIII դ. առաջին տասնամյակներին վրաց իշխողներին հաջողվել էր պարսկական գերակայության ներքո իրենց իշխանությունը տարածել Երևանի ու Ղազախ-Շամշադինի վրա՝ Երևանում որպես պարսկական արքունիքի կողմից նշանակված բեկլարբեկ, իսկ Ղազախ-Շամշադինում՝ որպես հողատեր սեփականատեր: Դարի ընթացքում Լոռիում աստիճանաբար սկսեցին կալվածատերեր հանդիսանալ նաև վրացի ազնվականները:

[61] Ջամալեան Ա., նշվ. աշխ., «Հայրենիք», Բոստոն, 1928, ապրիլ, N 6, էջ 84:



Անդրկովկասում Ռուսական կայսրության նվաճողական քաղաքականության ակտիվացմանը զուգընթաց՝ երկրամասում շարունակվում էին հյուսիսկովկասյան լեռնականների և նրանց օժանդակող պարսկական իշխանությունների կազմակերպած արշավանքներն ու ավերածությունները, ինչից խուսափելու համար վրաց թագավորները շարունակում են օգնության խնդրանքներով դիմել Ռուսաստանին: 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կնքվեց ռազմական դաշինք, որի համաձայն 1769 թ. Վրաստան մտցվեց ռուսական զորք: 1780-ական թթ. սկզբներին վրաց Հերակլ II թագավորը խնդրանքներով կրկին դիմեց ռուսական կառավարությանը, որպեսզի վերջինս Քարթլի-Կախեթի իշխանությունը վերցնի իր հովանավորության ներքո[62]:

1783 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Արևելյան Վրաստանի միջև կնքվեց «Բարեկամության պայմանագիր», որն ուժի մեջ մտավ 1784 թ. հունվարի 24-ից[63]: Պայմանագրով Ռուսաստանն իրավական հիմք ստացավ Արևելյան Վրաստանում հաստատել իր ազդեցությունը և զորք մտցնել, իսկ Վրաստանն ընդունեց Ռուսաստանի քաղաքական գերակայությունը: Այս քայլով Հերակլ II-ը հրաժարվում էր ինքնուրույն արտաքին քաղաքականությունից և արտաքին հարձակումների դեպքում, ի դեմս Ռուսաստանի, ունենում էր իր պաշտպանը: Դա Ռուսաստանի կողմից դիվանագիտական հաջող քայլ էր՝ Վրաստանի նվաճման ճանապարհին:

Դաշնագրից հետո Վրաստանի սահմանը Երևանի խանության հետ անցնում էր Շորագյալի հարավային մասով, թեքվելով հյուսիս, Փամբակաձորը թողնելով Վրաստանի սահմաններում, թեքվում էր հարավ-արևելք՝ Տանձուտի լեռների հարավային մասով՝ Ղարաքիլիսան թողնելով Վրաստանի կազմում՝ հասնում էր մինչև Սևանա լճի

[62] Иоаннисян А., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Е., 1958, с. XV; История Грузии, с. 424.

[63] Дубровин Н., Георгий XII, последний царь Грузии и присоединение ее к России, (այսուհետև՝ Георгий XII...), СПб., 1897, с. 63, 96, 120; Пайчадзе Г., Георгиевский трактат, Тбилиси, 1983, с. 80-81.

հյուսիսային մասերը՝ անցնելով դեպի Շամշադին[64]: Հետևաբար, Լոռու արևմտյան սահմանը կազմում էր Չլդրի (Ախալցխայի) էյալեթը, հարավայինը՝ Երևանի խանությունը, արևելյանը՝ Ղազախ-Շամշադինը[65]:

Գեորգիևյան դաշնագիրը նոր հույսեր ներշնչեց հայ ազատագրական շարժման գործիչներին: Դրա որոշ կետեր հայ ժողովրդի ազատագրական շարժումներին ծառայեցնելու միջոցներ էր փնտրում նաև հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը: Նա հատկապես շեշտում էր դաշնագրի 6-րդ կետը (ըստ որի՝ Վրաստանն իրավունք էր ստանում Ռուսաստանի օժանդակությամբ Անդրկովկասում ընդարձակել իր սահմանները) և կոչ անում՝ հենվելով դրա վրա՝ ընդլայնել Հայաստանի և Վրաստանի հարաբերությունները, առաջ քաշել հայ-վրացական պետության կազմավորման հարցը:

Վրաց արքունիքի հետ Շահամիրյանի նամակագրական կապերը սկիզբ են առնում 1770-ական թվականների սկզբներից: Հնդկահայ մեծահարուստ հայրենասեր գործիչը նվերների անվան տակ հաճախակի գումարներ էր տրամադրում ոչ միայն վրաց թագավորին, այլև նրա արքունիքի հայազգի իշխանավորներին (այդ տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում Շ. Շահամիրյանի՝ Մանուչար Թումանյանին գրած նամակները[66])՝ ցանկանալով միաժամանակ նրանց դրականապես տրամադրել իր ծրագրերի նկատմամբ[67]: Հերակլ II-ը 1775 թ. հրովարտակով Շահամիրյանին է նվիրում Լոռու գավառը[68], իսկ շնորհագիրը Հնդկաստան տանելու գործը

[64] Атлас Армянской ССР, "Армения накануне присоединение к России" (1785-1825 гг.), Ереван-Москва, 1961, с. 107.
[65] Տես՝ Հայաստանի Ազգային Ատլաս, «Հայաստանը XVIII դ. երկրորդ կեսին», հ. Բ, Ե., 2008, էջ 62, «Հայաստանը XVIII դ.–XIX դ. սահմանագլխին», էջ 66:
[66] Տես՝ Մատենադարան, Կյուրեղ Սրապյանի ֆ., թղթ. 81ա, վավ. 7:
[67] Չոբանյան Պ., Հնդկահայ գաղթօջախի պատմությունից, «ՊԲՀ», 1988, N 1, էջ 183:
[68] Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին (այսուհետև՝ Վրացական ուղեգրությունները...), Ե., 1981, էջ 81, Տեր-Ավետիսյան Ս., Նյութեր Հնդկաստանի հայ գաղթօջախների պատմության համար, Երևանի պետ. Համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 13, 1940, էջ 83:



հանձնարարվում է Հովսեփ Դանիբեկյանցին[69]: «1789 թ. Շամիր աղան կրկին նվերներ ու նշանակալի դրամական գումար է առաքում Հերակլին..., ընդ որում նա ցանկություն է հայտնել անձամբ ընտանիքով ու հազար հնդիկ ստրուկներով փոխադրվել Հնդկաստանից Հերակլի թագավորություն, որտեղ պետք է գործարանային ու ֆաբրիկային գործունեություն ծավալեր, բացեր շաքարի գործարաններ...»[70]:

Նման մեծահարուստին Վրաստան բերելն այնքան ձեռնտու էր Հերակլ արքային, որ վերջինս հանձնարարեց իր որդուն՝ գահաժառանգ Գեորգիին, Շահամիրյանին նվիրաբերել Լոռու ամբողջ տափաստանը: Թագաժառանգը 1790 թ. նոյեմբերի 16-ի հատուկ հրովարտակով Լոռին նվիրաբերեց Շահամիրյանին՝ որպես հավերժ ու ժառանգական տիրույթ: Նվիրաբերված երկրի սահմաններն էին՝ արևելքից՝ Շամլուղի, արևմուտքից՝ Կարախաչի, հարավից՝ Ղվալի և հյուսիսից՝ Լալվարի լեռները: Հովսեփ Դանիբեկյանը 1791 թ. մայիսին կրկին Հնդկաստան է գնում՝ տանելով Գեորգի արքայազնի հրովարտակը՝ Լոռին Շահամիրյաններին նվիրելու Հերակլ II-ի 1775 թ. հրովարտակին ի հաստատություն, ինչպես նաև Հերակլի մի նոր հրովարտակ և Լոռու քարտեզը[71]:

1792 թ. մայիսի 14-ին Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին գրած նամակում Շահամիրյանը նշում է, որ մտադիր է Լոռու երկրամասը տալ Արցախի Մելիք-Աբովին, որին նա անվանում էր սիրեցյալ և որը երկրից հեռացած իր ժողովրդի հետ կհաստատվեր Լոռիում[72]: Շահամիրյանը խնդրագիր է ուղարկում Հերակլ արքային՝ իրակա-

[69] Հովսեփ Դանիբեկյանցը վրացական արքունիքի քաղաքական, դիվանագիտական աչքի ընկնող դեմքերից էր: Նրա միջոցով են Հերակլ II-ը և հայոց կաթողիկոսները նամակագրական կապեր պահպանել Շ. Շահամիրյանի հետ: Տես՝ Աբրահամյան Ռ., Շահամիր Շահամիրյանի նորահայտ նամակագրությունը, «ԲՀԱ», 1969, N 3, էջ 153, Мурадян П., Новые материалы о Рафаиле Данибегове, «ԲԵՀ», 1973, N 3, էջ 176, Գրիգորյան Ռ., Նոր տեղեկություններ Հովսեփ Դանիբեկյանի մասին, «ՊԲՀ», 1979, N 1, էջ 107:
[70] Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները..., էջ 86:
[71] Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները..., էջ 86:
[72] Մատենադարան, Կյուրեղ Սրապյանի ֆ., թղթ. 81ա, վավ. 8, էջ 1-2:

նացնելու այդ ծրագիրը: Մի քանի տարի անց թագաժառանգ Գեորգին հայտնում է Շահամիրյանին, թե Մելիք-Աբովը չի կամենում ապրել Լոռիում և համոզում է, որ ինքը՝ Շահամիրյանը, գա ու ստանձնի այդ հողի տնօրինման իրավունքը. «...յայտնեալ եմք նմա եւ հրաւիրեալ, եւ նա ոչ յանձն է առեալ եւ ոչ ընկալեալ, այլ ի յերկիրն իւր գնացեալ, ...եթէ դու եւ կամ զմի ի յորդւոց Քոյ եւ յորդւոց որդիսն քո գան առ մեզ, ես բազում այս եւս ծեզավայել ողորմութիւնս եւ զսէրս ցուցանիմ»[73]:

1796 թ. գարնան վերջին Հովսեփ Դանիբեկյանը կրկին Հնդկաստան է մեկնում՝ տանելով Գեորգի թագաժառանգի նոր՝ 1796 թ. մայիսի 10-ի թվակիր նամակը Շ. Շահամիրյանին, որով թագաժառանգը տեղեկացնում էր Լոռի գավառի վերաբերյալ Շահամիրյանի կարգադրություններին իր համաձայն լինելու մասին[74]: Հովսեփը Հնդկաստանում էր գտնվում, երբ Հերակլ II-ի և Գեորգիի կարգադրությամբ նրա որդին՝ Ռաֆայել Դանիբեգովը [75], 1797 թ. գարնանը ճանապարհվում է Հնդկաստան՝ տանելով Հերակլի նոր հրովարտակը Շահամիրյանին[76]: Ռաֆայելը Հերակլի կողմից ուներ հստակ հանձնարարություն՝ «...մի հարուստ հայի հանձնելու գնված ամրոցը և գյուղը՝ (խոսքը Լոռի ամրոցի և գյուղի մասին է-Հ. Ա.) նրան նախկինում մատուցած իր ծառայությունների համար»[77]:

Հերակլ II-ի մահվանից հետո Գեորգի XII-ը (1798-1800) 1798 թ. գարնանը կրկին պատրաստվում էր Հնդկաստան ճանապարհել Հովսեփ Դանիբեկյանին: Հովսեփը Շ. Շահամիրյանին էր տանում մի նոր նամակ, ինչպես նաև Հերակլի՝ դեռևս 1797 թ. նոյեմբերի 20-ին գրված հրովարտակը և կրկին հրավիրում էր նրան գալ և տեր կանգնել Լոռու գավառին: Հրովարտակում նշվում է. «...վերանորոգեցինք ...գահաժառանգ Գիորգիի շնորհատվությունը, որ կատարել

[73] Նույն տեղում, Հարություն Աբրահամյանի ֆ., թղթ. 99, վավ. 74ա:
[74] Նույն տեղում:
[75] Ռաֆայելը աղբյուրներում երբեմն գրվել է նաև Դանիբեկով, Դանիբեգաշվիլի:
[76] Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму и другие страны Азии (1795-1827) (այսուհետև՝ Путешествия Рафаила Данибегашвили...), М., с. 68, Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները..., էջ 88-89:
[77] Соловьев О., Из истории русско-индийских связей, М., 1958, с. 43.



էր նա նորջուղայեցի իշխան Շահ(ա)միր Սուլթանումին, այն է՝ իր սեփական տիրույթ Լոռե քաղաքն իր ողջ ծորահովիտներով, որ է Գուգարաց աշխարհը...: ...ի հավելումն հաստատեցինք, որ այն Լոռե քաղաքը լինի ոչ միայն տեր Շահամիր Սուլթանումի տիրույթը, այլև (որպես այդպիսին) մնալով անցնի նրան ժառանգաբար՝ սերնդից սերունդ, մինչև ավարտն աշխարհի...»[78]:

Նա Հնդկաստան է հասնում 1798 թ. ամռան սկզբներին՝ Շ. Շահամիրյանի վախճանից հետո, ուստի վերոնշյալ հրովարտակը, ինչպես նաև Գեորգիի նամակը հանձնում է Շահամիրյանի որդուն՝ Եղիազար Շահամիրյանին[79]. «...Վրաց թագավոր Հերակլի կողմից ես ուղարկվեցի Հնդկաստան՝ հետևյալ պատճառով. Մադրասում ապրում էր մի հարուստ հայ, որը Հերակլին ամենամյա նվերներ էր ուղարկում: Արքան որպես փոխհատուցում, նրան նվիրեց Լոռի մեծ գյուղը և ամրոցը, և այդ մասին տեղեկացրեց իմ միջոցով: Գալով Մադրաս՝ ես կենդանի չգտա այդ հային, նա մահացել էր իմ գալուց մեկ տարի առաջ, ես հիշյալ ամրոցը հանձնեցի նրա որդուն[80]».-գրում է Ռաֆայելը: Հրովարտակը հետապնդում էր Շահամիրյանի և նրա տոհմի՝ Վրաստանում ունենալիք իրավունքների ու պարտականությունների ճշգրտման նպատակ:

1799 թ. աշնանը Գեորգի XII-ը հատուկ հրովարտակով և նամակով Ռաֆայել Դանիբեգովին կրկին Հնդկաստան՝ Մադրաս է ճանապարհում: Հրովարտակը գրված էր Շահամիրյանի որդու՝ Հովհաննեսի անունով[81]: Գեորգին հորդորում է Հովհաննեսին իրականացնել հանգուցյալ հոր նպատակներն ու ներկայանալ՝ տնօրինելու

[78] Չոբանյան Պ., Հնդկահայ գաղթօջախի պատմությունից, էջ 187:
[79] Ըստ Պ. Չոբանյանի՝ նամակը հանձնվում է Շահամիրյանի մյուս որդուն՝ Հովհաննես Շահամիրյանին, տե՛ս Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները..., էջ 89:
[80] Путешествия Рафаила Данибегашвили..., с. 15, Мурадян П., նշվ. աշխ., с 173.
[81] Այս, ինչպես նաև 1775 թ. հրովարտակը եղել են Շ. Շահամիրյանի ժառանգների՝ Հովհաննես և Նազար Շահամիրյանների՝ Լոռու մասին վավերագրերի ցուցակի մեջ: Տես՝ Մատենադարան, Հարություն Աբրահամյանի ֆ., թղթ. 99, վավ. 77ա, թթ. 1-3:

Լոռու կալվածքը. «...Ձխնդիրն լուսահոգի հօր ձերոյ, որ յաղագս Լոռոյ գաւառին, յօժարութեամբ կատարեալ երանելի հօր մերոյ արքային, զգրուածն ի ձեռն հինգ հարիւրապետն Ռաֆայէլ պատանեկին զկնի փոխիլոյն հօր մերոյ առաքեալ եմք առ ձեզ և յուսամք ցարդ բաժանեալ իցէ ձեզ և զայն ամենայն ծանուցեալ իցէք...»[82]:

Սակայն Շահամիրյանի ժառանգները չեկան տիրանալու իրենց սեփականությանը:

Այսպիսով, Հնդկաստանի հայ մեծահարուստն անմասն չէր Հայաստանի ազատագրության գործին ծառայելուն: Նրա ուշադրության կենտրոնում էր հատկապես Լոռու գավառը, Երևանի նահանգը և այլ տարածքներ, որտեղ կարելի էր զարգացնել բամբակի, շաքարեղեգի, լեղակի, ղահվեի (սուրճի-Հ. Ա.) մշակությունը, գործարաններ բացել և հայրենիքը տնտեսապես զարգացնել[83]: Սակայն գործնական հետևանք ունեցավ Շահամիրյանի միայն մեկ ցանկությունը՝ սեփական կալվածք ունենալը Լոռիում:

Վրաց թագավորի կողմից Լոռին մեծահարուստ տոհմին նվիրաբերելը, հավանաբար, պայմանավորված էր տարածքի՝ վերջին ժամանակաշրջաններում ասպատակությունների ու ավերածությունների ենթարկվելու, բնակչության թվաքանակի մեծ չափերի կորուստներ կրելու հետ: Լոռին Վրաստանի հարավային սահմանն էր, ուստի անհրաժեշտ էր վերականգնել տարածքի տնտեսական երբեմնի կայուն իրավիճակը:

Այսպիսով, XVIII դարն Անդրկովկասի ժողովուրդների կյանքում, մասնավորապես՝ հայ ժողովրդի պատմության մեջ, բնորոշվեց ազգային-ազատագրական գաղափարախոսության աշխուժացմամբ: Թուրք-պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման գործում աստիճանաբար առաջնային են դառնում վրաց և ռուս ժողովուրդների հետ դաշինքի և փոխօգնության անհրաժեշտությունը:

Հերակլ II-ի մահից հետո թուլացած երկրի դրությունը բարդացել

[82] Նույն տեղում, Ալեքսանդր Երիցյանի ֆ., թղթ. 10, վավ. 232, թթ. 1-2:
[83] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 479:



էր: Օգտվելով ռուսական զորքերի՝ Անդրկովկասից վերադառնալու հանգամանքից և Վրաստանում սկսված գահակալական ներքին պայքարից, իրենց գործողություններն այստեղ ավելի են ակտիվացնում թուրքական և պարսկական կողմերը: Վրաստանի նոր թագավոր Գեորգի XII-ը, համոզվելով, որ առանց դրսի օգնության չի կարող հաղթահարել ներքին և արտաքին դժվարությունները, պատվիրակների միջոցով 1800 թ. կրկին դիմում է ռուսական կառավարությանը՝ խնդրելով վերանայել 1783 թ. Գեորգիևյան դաշնագիրը, օժանդակել արտաքին թշնամիների դեմ պայքարում՝ ինչպես նախատեսված էր պայմանագրով:

1800 թ. Քարթլի-Կախեթի իրական իշխանությունն անցավ 1799 թվականից Վրաստանում ռուսական կառավարության լիազոր ներկայացուցիչ Պ. Կովալենսկու և Արևելյան Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Ի. Լազարևի ձեռքը: 1801 թ. հունվարի 18-ին Պետերբուրգում հրապարակվեց Պավել I (1796-1801) կայսեր հռչակագիրը՝ Քարթլի-Կախեթը Ռուսաստանին միավորվելու վերաբերյալ, իսկ փետրվարի 16-ին Սիոնի մայր եկեղեցում կատարվեց Վրաստանի՝ Ռուսաստանին միավորման տոնախմբությունը և ընթերցվեց կայսեր հրովարտակն այդ մասին[84]: 1801 թ. մարտի 11-ի լույս 12-ի գիշերը պալատական հեղաշրջմամբ սպանվեց Պավել I-ը: Նրան փոխարինած Ալեքսանդր I-ը (1801-1825) Վրաստանի միավորման հարցը քննարկման է դնում Պետական խորհրդում: Խորհուրդը գտնում է. «Որքան բուն Վրաստանի, այնքան էլ Ռուսաստանի շահերի համար անհրաժեշտ է, որպեսզի այդ երկիրը մնա ռուսական տիրապետության տակ, ընդ որում թողնելով այդ գործը նորին կայսերական մեծության *հայեցողությանը*»[85]: Ալեքսանդր I-ի սեպտեմբերի 12-ի հռչակագրով պաշտոնապես ամրագրվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին, որով այն դարձավ Ռուսական

[84] Մատենադարան, Ալ. Երիցյանի ֆ., թղթ. 157, վավ. 4, թ. 1, Дубровин Н, Георгий XII..., с. 198, Бердзенашвили Н., նշվ. աշխ., с. 449-450.
[85] Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին 30-ամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 147:

կայսրության վարչատարածքային միավորներից մեկը[86]:

Վրաստանի գրավումը նշանավորեց ցարական Ռուսաստանի քաղաքականության նոր կուրսն Անդրկովկասում: Այդ քայլով ռուսական արքունիքն ավելի լայն հնարավորություն ստացավ հասնելու Անդրկովկասում իր դիրքերի ամրապնդմանն ու սահմանների ընդլայնմանը: Այդ քաղաքականության նպատակակետերից մեկն էր՝ հայերով վերաբնակեցնել Վրաստանի սահմանային այն տարածքները, որոնք Աղա Մահմադ խանի արշավանքներից ամայացել էին:

Վրաստանի միացումը Ռուսաստանին կարևոր փուլ էր Հայաստանի համար ոչ միայն այն պատճառով, որ Վրաստանի կազմում Ռուսաստանին միացան Հայաստանի հյուսիսային շրջանները, այդ թվում՝ Լոռին, այլև այն, որ Վրաստանում մեծ քանակությամբ հայեր էին ապրում: Վրաստանի կազմի մեջ էին Շամշադինի գավառը, Փամբակի և Շորագյալի շրջանները (ներկայիս Ստեփանավանի, Ղարաքիլիսայի, Համամլուի, Ղլղոչի, Լենինականի տարածքներն ամբողջությամբ, բացի մի քանի գյուղերից, իսկ Արթիկն ու Ապարանը՝ կիսով չափ), Սոմխեթի գավառը (ներկայիս Ալավերդու շրջանի մի մասը), Ղազախի գավառը (սրա մեջ էր մտնում նաև ներկայիս Իջևանի ու Դիլիջանի շրջաններն ու Ալավերդուն անցած մի քանի գյուղեր)[87]:

Փաստորեն, հռչակագրով պաշտոնապես ձևակերպվում է նաև Արևելյան Վրաստանի կազմի մեջ մտնող Հայաստանի հյուսիսային շրջանների՝ Լոռու, Փամբակի, ինչպես նաև Ղազախի ու Շամշադինի միացումը Ռուսաստանին: Ռուսաստանին միացած Փամբակն ուներ 1100, Լոռին՝ 2700, Ղազախ-Շամշադինը՝ 3000 քառ. կմ տարածք[88]: Վրաստանի՝ Ռուսաստանի նահանգ դառնալով, Լոռին դարձավ արքունական կալվածք:

Այդ ընթացքում ռուսական արքունիքը դիվանագիտական լուրջ աշխատանքներ էր տանում Պարսկաստանի դեմ պատերազմ

---

[86] Արդի վրաց պատմագրության մեջ այսօր այդ միավորումը ներկայացվում է որպես բռնազավթում:
[87] Կորկոթյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931 թթ.), Ե., 1932, էջ XXVI:
[88] Ավդալբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Ե., 1959, էջ 5:



նախապատրաստելու համար: Վրաստանում ռուսական զորքերի
գլխավոր հրամանատար է նշանակվում գեներալ Կ. Կնորինգը, իսկ
Վրաստանի քաղաքացիական մասի կառավարիչ՝ գեներալ Պ.
Կովալենսկին:

Այսպիսով, վրացական տիրապետությունը Լոռիում XIX դարից
փոխարինվեց ռուսականով: Այդ միացումով Անդրկովկասում ուժե-
ղացավ Ռուսաստանի ազդեցությունը և դրա շնորհիվ Ռուսաստանի
հպատակության տակ անցավ Արևելյան Վրաստանում և վերջինիս
տիրապետության տակ անցած Ղազախ-Լոռիում բնակվող և պատկա-
ռելի թիվ կազմող հայությունը: Այլ բան է, որ վրացական պատմա-
գիտության մեջ Ռուսաստանին անցած տարածքները մեկ բառով
անվանվում են Վրաստան. «Մտնելով Ռուսաստանի կազմի մեջ,
Վրաստանը կարողացավ վերականգնել իր ազգային ամբողջա-
կանությունը և իր պատմական սահմանների զգալի մասը», կամ՝
«Ռուսաստանին միանալով, Վրաստանը միավորվեց»[89]:

XIX դ. սկզբներին Արևելյան Հայաստանի տարածքը բաժանված
էր Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի (Գյանջայի) խանու-
թյունների և Քարթլի-Կախեթի թագավորության միջև: Բացի այն, որ
Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանի
հյուսիսային, հյուսիս-արևմտյան և արևելյան շրջաններում գոյություն
ունեցած կառավարման ձևերը տարբերվում էին իրարից, հայտնի է
նաև, որ ցարական Ռուսաստանն Անդրկովկասի վարչատարածքային
բաժանում կատարելիս անտեսում էր ազգային, կրոնական
սկզբունքները, որի հետևանքով հետագայում Ախալքալաքի և
Բորչալուի գավառները ներառվեցին Թիֆլիսի նահանգի մեջ:

1801 թ. սկսած Լոռու տարածքն սկսում է ենթարկվել ռուսական
իշխանությունների կողմից Անդրկովկասում պարբերաբար կատար-
վող վարչատարածքային բաժանումներին, որոնց նպատակը տարա-
ծաշրջանը տնտեսապես և քաղաքական առումով վերահսկելի դարձ-
նելն էր: Անդրկովկասում ձևավորվում է վարչատարածքային նոր

---

[89] Սուրգուլաձե Ա., Գեորգիևսկի պայմանագիրը և նրա առաջադիմական նշա-
նակությունը, «ՊԲՀ», 1983, N 2-3, էջ 14-16:

միավոր՝ դիստանցիա՝ ուղեմաս: Հաստատվում է վրացական նոր «Բարձրագույն կառավարությունը» և Վրաստանի վարչական բաժանումը. կազմավորվում է Վրացական նահանգը, որի կազմի մեջ մտնում էին Վրաստանը (Քարթլին և Կախեթը) և այսպես կոչված՝ «Թաթարական դիստանցիաները»: Վրաստանն իր հերթին բաժանվում էր հինգ գավառների (ուեզդ), որոնցից երեքը Քարթլիում՝ Վերին Քարթլի (Դուշեթ կենտրոնով), Միջին Քարթլի (Գորի), Ներքին (Ստորին) Քարթլի (Թիֆլիս և Սոմխեթ (Լոռի), իսկ երկուսը Կախեթում՝ Թելավ և Սղնախ[90]: Գավառները բաժանվեցին վոլոստների: «Թաթարական դիստանցիաներն» էին՝ Շամշադինի, սրանից հյուսիս-արևմուտք՝ Աղստև գետի երկայնքով՝ Ղազախական, արևմուտքում՝ Դեբեդ գետի մոտ՝ Բորչալուի, սրանից դեպի հարավ՝ Փամբակի, իսկ սրանից էլ արևմուտք՝ Երևանի խանության և Թուրքիայի սահմանին՝ Շորագյալի[91], որոնք, մինչ այդ մասամբ բնակեցված էին թաթար քոչվոր ցեղախմբերով, ուստի դրանց կառավարումը հանձնված էր ցեղապետերին: Վերջիններս ստացած բնակավայրերի դիմաց պարտավորվում էին զինվորական ծառայություն կատարել վրացական արքունիքի համար: Վրաստանը և Հայաստանի հյուսիսային շրջանները կառավարվում էին 1801 թ. ստեղծված վրացական գերագույն վարչության կողմից: Այն կազմված էր չորս էքսպեդիցիաներից՝ գործադիր, տնտեսական, քրեական և քաղաքացիական գործերի: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր գործառույթը:

Այսպիսով, Լոռու գավառը, Թիֆլիսի հետ միասին, ընդգրկվում է Ներքին Քարթլի վարչամիավորի կազմում: Քիչ անց նահանգն ընդարձակվում է՝ Լոռու կազմի մեջ մտած Փամբակի միավորմամբ[92]: Լոռին և Փամբակը միասին կազմեցին մեկ վարչական միավոր՝ Լոռի-

[90] Дубровин Н., Георгий XII..., с. 250.
[91] Шахатунян А., Административный переделъ Закавказского края, Тифлисъ, 1918, с. 84, Ռուս-հայկական համագործակցությունը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանում, 1826-1828 թթ., փաստաթղթերի ժողովածու, «ԲՀԱ», 1978, N 2, էջ 104, Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին, Գյումրի, 2005, էջ 32:
[92] Шахатунян А., նշվ. աշխ., с. 84.



Փամբակ անվանումով (թեև պատմագիտական գրականության մեջ երբեմն նշվում են առանձին-առանձին): Լոռու հյուսիսարևելյան մասը կազմում էր Բորչալուն, որի սահմանները հաճախ փոփոխվում էին՝ տարբեր ժամանակահատվածներում իրենց մեջ ընդգրկելով Լոռու տափաստանից տարածքներ: Դրանով է բացատրվում, որ կան գյուղեր, որոնք ուսումնասիրվող ժամանակահատվածի տարբեր փուլերում ընդգրկված են տարբեր՝ Փամբակի, Լոռու, Ղազախի գավառների, կամ Շուլավերի վոլոստի մեջ:

1801 թ. հետո Ռուսաստանին անցած տարածքներն ենթարկվեցին հաշվառման, որի արդյունքներն ամփոփվեցին 1802 թ. մայիսի 8-ի՝ Վրաստանը գավառների բաժանելու վերաբերյալ վավերաթղթում: Վավերաթղթում նշված է բոլոր գյուղերի անվանական ցանկը: Ցանկի համաձայն Լոռու գավառի մեջ մտնում էին հետևյալ բնակավայրերը՝ Սցխեթ, Ձեմո-Ավճալա, Քվեմո-Ավճալա, Դիղոմի, Ծղնեթ, Ցավկիսի, Օքա Հավլաբար, Կուկիա Դիդուբե և Ցինցկարո, Լիլո, Նավթլուղ, Սողանլուղ, Կրծանիս, Շինդիս, Տաբախմելա, Խաթիս-Թելեթ, Ցալախկուրի, Թելեթ, Կումիս, Վաշլովան, Էրթիսի, Գոուբանի, Բորբալա, Մուխաթի, Կոդա, Մարաբդա, Մառնեուլ, Քոլագիր[93]:

Շուլավերի վոլոստում էին Մեծ Շուլավեր, Փոքր Շուլավեր, Ախթալա-Մադան, Սպիլենդզիս-Մադան, Հաղպատ, Որնակ, Սանահին բնակավայրերը: Նույն վոլոստում նշվում են Շնող, Դսեղ գյուղերը՝ որպես Արցախի Մելիք-Ջումշուդի սեփականություն և Օձունը (Ուզունլար)՝ որպես Մելիք-Ֆրեյդունի սեփականություն:

Այսպիսով, 1802 թ. դրությամբ Լոռու Շնող, Դսեղ, Օձուն, Հաղպատ, Սանահին, Ախթալա, Որնակ և այլ գյուղեր, նաև Մադանի պղնձահանքը ընդգրկված էին Շուլավերի վոլոստի մեջ:

Փամբակի վոլոստում էին Յաղուբլու, Ղարաքիլիսա, Ղշլաղ-Քենդի, Դարպաս, Հաջիղարա, Սողաթլու, Գոգարան, Թափանլու, Բեկանտ, Աղբուլաղ, Ղալթաղչի, Վանաձոր բնակավայրերը: Փամբակում փոքաթիվ թաթարաբնակ գյուղեր էին՝ Փոքր-Բդիբեկ, Կոչիկանտ, Նալբանդլու, Ալապուրտ, Սալմանի, Ղաչաղան, Օրբնով, Չոտուրի,

[93] АКАК, т. 1, Тифлис, 1866, док. 575, с. 461.

Կոչկարա, Սիբդագի, Ղուրսալ, Յամամլու, Սարալի, Փոքր-Աբդուլլաղի, Գուլուջի, Կիզիլ Օրան, Չիգդամալ, Արժիթ, Կարաքոյա, Միսկինլոր:

Փաստորեն, ցուցակի մեջ ամբողջ Լոռու ձորից ընդգրկված են յոթ գյուղ, ինչը որոշ ուսումնասիրողների հիմք է տվել ենթադրելու, որ ամբողջ Լոռու ձորում մարդաբնակ էին միայն այդ յոթ գյուղը[94]: Այն, որ ցուցակի մեջ ընդգրկված են եղել միայն նշված յոթ գյուղերը, բացատրում ենք այն փաստով, որ դրանք եղել են ամենակենսունակները: Ինչ վերաբերվում է մյուս գյուղերի՝ ցուցակի մեջ չընդգրկվելուն, ապա հայտնի է, որ Վրացական պետության կողմից Լոռու բնակավայրերի բնակչությունը երբևէ հիմնավոր հաշվառման չի ենթարկվել:

1802 թ. մայիսի 11-ին գեներել Կ. Կնորինգին ուղղված նամակում գեներալ Պ. Կովալենսկին, պատճառաբանելով Լոռու գավառի և նրա շրջակայքի սակավաբնակ լինելը, առաջարկում է՝ քանի որ Լոռու գավառը միացված է Թիֆլիսին, ապա Լոռիում նախատեսված Վրաստանի կառավարչական նստավայր-կենտրոնը հիմնել Թիֆլիսում[95]:

1804 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմում ռուսները ռազմական գործողություններում մի շարք հաջողությունների հասան: Գեներալ-մայոր Պ. Նեսվետաևը 1805 թ. մարտի 30-ին զորամիավորումներով Ղարաքիլիսայից մտնում է Շորագյալի արևելյան հատված և գրավում Արթիկը, ինչից հետո Վրաստանի կազմում ստեղծվում է Փամբակ-Շորագյալի ուղեմասն՝ արդեն Ռուսաստանին միացած Լոռու, Փամբակի և Շորագյալի միավորմամբ: Այն հյուսիսից սահմանակից էր Բորչալուի, հարավ-արևելքից՝ Ղազախի ուղեմասին, հարավից՝ Երևանի խանությանը, արևմուտքից՝ Կարսի և մասամբ՝ Ախալցխայի փաշայություններին: Փամբակ-Շորագյալի ուղեմասն ուներ 8440 քառ. վերստ տարածք, որից 5000 քառ. վերստը[96] կազմում էր Լոռու, 2150 քառ. վերստը՝ Փամբակի, իսկ 1290 քառ. վերստը՝

[94] Տես՝ Ավդալբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 16:
[95] АКАК, т. 1, док. 576, с. 474.
[96] 1 վերստը հավասար է 1,06 կմ-ի:



Շորագյալի տարածքները[97]: Փամբակը Լոռու հարավային սահմանն էր: Նորաստեղծ ուղեմասում պահպանվում էր վարչական նախկին համակարգը: Գավառի ներքին կյանքի տնօրինման հարցում մոուրավներին փոխարինում են պրիստավները, որոնք նշանակվում էին ռուս սպաներից: Նրանց պարտականությունը կառավարիչներին՝ խաներին ու սուլթաններին վերահսկելն էր: Գավառի պրիստավի նստավայրն էր Փամբակի Ղարաքիլիսա գյուղը:

1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Ռուսական կայսրությանը միացվեցին Դաղստանն ու Վրաստանը, Գանձակի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունները:

Պատերազմների ընթացքում և դրանցից հետո, ռուսական կառավարությունը Անդրկովկասի նվաճած ժողովուրդներին պարտադրելով իրեն ձեռնտու նոր վարչական, սոցիալ-տնտեսական պայմաններ՝ փորձում է վերահսկելի և հեշտ կառավարելի դարձնել տարածաշրջանը, ինչը հատկապես արտահայտվում էր վարչական բաժանումների ժամանակ, երբ ակնհայտորեն խախտվում էր էթնիկ սկզբունքը: Նույն իրավիճակին ականատես ենք լինում տեղերում, երբ տարբեր գյուղեր տեսնում ենք ընդգրկված տարբեր գավառների մեջ: Օրինակ՝ 1817 թ. հուլիսի 29-ի Ներսես արքեպիսկոպոսի շրջաբերականից տեղեկանում ենք, որ Ղալաջա, Կողբ, Դոստլու, Բրան, Կոթիգյուղ, Ղոչղոթան, Բաղանիս և Շնող գյուղերն ընդգրկված էին Ղազախի գավառի մեջ[98]:

1821 թ. հուլիսի 6-ին Շուլավերից և Վրաստանի գյուղերից հավաքած «պտղի» հարկի քանակի եկեղեցական գրություններում մեջ հանդիպում ենք նաև Մարց և Լորուտ գյուղերի անունները[99]: 1824 թ. Բաղանիս, Ղոշղոթան, Կոթիգյուղ, Դոսքլո, Ղալաչայ, Բարան, Կողբ, Ոսկեպար գյուղերը նշվում են Լոռու գավառում[100]:

1827 թ. ապրիլին ֆինանսների նախարար կոմս Կ. Կանկրինը

[97] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 63:
[98] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու ֆ., թղթ. 164ա, վավ. 354, թթ. 85-86:
[99] Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 39, վավ. 260:
[100] Նույն տեղում, թղթ. 50, վավ. 459, թ. 13:

նախարարների խորհրդին ներկայացրեց իր կողմից մշակված օրենքների նախագիծ, որով Անդրկովկասը պետք է բաժանվեր վարչատարածքային և տնտեսական համապատասխան գոտիների: Նախագիծն ընդգրկում էր Վրաստանը (Կախեթ, Քարթլի) և նրան հարակից Բորչալուի, Ղազախի, Շամշադինի, Փամբակ-Շորագյալի և Ելիզավետպոլի մարզի թաթարական ուղեմասերը[101]:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտից և Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը վավերացնելուց հետո, Նիկոլայ I-ը 1828 թ. մարտի 26-ին ստորագրեց մի հրամանագիր, ըստ որի կազմավորվեց Հայկական մարզը, որն իր մեջ ներառեց Երևանի (15 մահալ), Նախիջևանի (5 մահալ) գավառները և Օրդուբադի (15 մահալ) օկրուգը: Սակայն Ռուսաստանին ավելի վաղ միավորված Արևելյան Հայաստանի շրջանները՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Շիրակի և Զանգեզուրի մեծ մասը, Հայկական մարզի մաս չկազմեցին:

1829 թ. դրությամբ Անդրկովկասյան երկրամասը վարչականորեն բաժանված էր վեց միավորի. 1. Վրաստան՝ բաղկացած վեց գավառներից, 2. Բորչալուի, Ղազախի, Շամշադինի, Փամբակի, և Շորագյալի ուղեմասեր, 3. Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Ղուբայի, Ախալցխայի, Դերբենդի և Բաքվի պրովինցիաներ, 4. Իմերեթիայի, Մինգրելիայի, Գուրիայի և Հայկական մարզեր, 5. Թալիշի խանություն, 6. լեռնաբնակ տարբեր ժողովուրդների զբաղեցրած տարածքներ[102]: (Լոռին մտնում էր Փամբակի ուղեմասի մեջ): Սրանք իրարից տարբերվում էին իրենց վարչաձևով: Ամեն գավառ ուներ իր վարչությունը: Այս վարչաբաժանումը պահպանվեց մինչև 1840 թ.:

Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ի. Պասկևիչն առաջարկում էր փոխել Անդրկովկասի մինչ այդ գործող վարչատարածքային կառուցվածքը: 1830 թ. ապրիլին նրա ներկայացրած նախագիծը ենթադրում էր գրավված ողջ տարածքները բաժանել

101 Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, СПб., 1836, ч. 1, с. 36.
102 Эсадзе С., նշվ. աշխ., с. 65.



երեք վարչական միավորների, որոնցից մեկը հանդիսանալու էր Հայկական մարզը՝ չորս գավառներով՝ Փամբակ-Շորագյալի, Երևանի, Կողբի և Նախիջևանի[103]: Առաջարկը, սակայն, մերժվեց:

Անկայուն վարչական համակարգ է հաստատվում հատկապես տեղերում: 1834 թ. դեկտեմբերի 8-ից մինչև 1836 թ. սեպտեմբեր 20-ը ընկած ժամանակահատվածում Մատթեոս վարդապետի կողմից կազմած «Ժապավենեալ տոմար նուիրուական արդիւնքների կազմւած Գանձակի, Շամշադինի, Ղազախի, Բորչալուի, Լոռու, Ախալցխայի, Ախալքալաքի և Սոմխեթի և այլնի» հարկատվության ցուցակից տեղեկանում ենք, որ Կուրթան, Վարդաբլուր, Յոբարձի, Գյուլագարակ, Գյարգյառ (Կարկառ), Ջալալօղլի, Տորմակադուռ, Հայտարբեկ, Ագարակ գյուղերն ընդգրկված էին Լոռու գավառի մեջ, իսկ Ճոճկան, Աղջյորփի, Հաղպատ, Սանահին, Օձուն, Ամոջ, Արդվի, Իգահատ, Ծաքեր, Չորագյուղ, Մարց, Դսեղ, Շահալի գյուղերը՝ Բորչալուի գավառի մեջ:

Վարդաբլուր, Սարմուսաղլի, Ղարաքիլիսա, Դարբաս, Ղշլաղ, Հաջիղարա, Համամլու, Որդնավ, Ղաչաղան, Ղարալ, Թափանլու, Գյուլլիջա, Նալբանդ, Գեոռնոն (հավանաբար՝ Գյորան), Պարնի, Ավդիբեկ, Ղարաբոյա, Ղալթախչի, Աղբուլաղ գյուղերը մտնում էին Փամբակի գավառի մեջ[104]:

Պատկերն ավելի ամբողջական տալու նկատառումով ստորև բերում ենք նաև Ղազախի նահանգի մեջ ընդգրկված գյուղերի անվանումները. Քարվանսարա, Սևաքար, Թալա, Աշխի գյուղ, Մելիքգյուղ, Բաղանիս, Ղոշղոթան, Կոթիգյուղ, Աչաջուր, Դոստլու, Կողբ, Ղալաչայ, Կամուրջ, Շնող, Արճիս և այլն[105]:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի մի հատվածը կազմող Լոռին 1840 թ. մտավ նորաստեղծ Ալեքսանդրապոլի գավառի (Վրացաիմերեթական նահանգ) մեջ որպես վերջինիս Լոռու գավառակ և մնաց այդ կարգավիճակում մինչև 1862 թ.: 1849 թ. հունիսի 9-ի ցարական

103 Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 132:
104 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 78, վավ. 244, էջ 25-36:
105 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, էջ 16-24, 81-87:

կառավարության հրամանագրով Անդրկովկասում կազմավորվեց նոր՝ Երևանի նահանգ՝ Թիֆլիսի և Շամախու նահանգների տարածքներից. Թիֆլիսի նահանգի կազմից հանվեցին և Երևանի նահանգին միացվեցին Երևանի և Նախիջևանի գավառները, ինչպես նաև Ալեքսանդրապոլի գավառը՝ Լոռի-Փամբակով[106]:

1862 թ. Լոռին Ալեքսանդրապոլի գավառից հանվեց և միավորվեց Թիֆլիսի նահանգին, ապա՝ 1880 թ. մտավ Բորչալուի գավառի մեջ:

Ստորև ներկայցնում ենք գավառի այն բնակավայրերի ցանկը, որոնք ընդգրկված են եղել բուն Լոռու տարածքի մեջ՝ նեղ առումով (հիմնականում Դեբեդ գետի երկայնքով, Փամբակ և Ձորագետ գետերի շրջաններում տեղակայված), ինչպես նաև այն գյուղերը, որոնք այս կամ այն պատճառով դուրս են մնացել Լոռվա սահմաններից և ընդգրկվել են այլ վարչատարածքային միավորների մեջ: Որոշ գյուղերի տեղանքի նկարագրման ժամանակ առաջնորդվել ենք տարածաշրջանի խոշոր բնակավայրերի՝ Ալավերդու և Ղարաքիլիսայի նկատմամբ նրանց ունեցած հեռավորությամբ:

Գավառի հարավ-արևելյան մասում, Դեբեդ և Փամբակ գետերի միախառնման տեղից սկսած՝ Դեբեդ գետի վերին հոսանքի երկայնքով տեղակայված են.

Դսեղը, որն ընկած է Դեբեդի երկու մեծ ճյուղերի՝ Փամբակի և Ձորագետի միախառնման աջ կողմում: Այն Հայաստանի հնագույն գյուղերից է: Ըստ որոշ աղբյուրների հիմնվել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակաշրջանում: Դսեղը ընդգրկվել է Սանահինի վանքի հարկատուների ցուցակի մեջ: 1880 թ., երբ Լոռին որպես առանձին ոստիկանական շրջան մտնում է Բորչալուի գավառի մեջ, Դսեղը Լոռու 66 գյուղերի մեջ հիշատակվում է խոշորների շարքում[107] և ուներ 110 տուն՝ 991 բնակիչ, որոնցից 541-ը արական, 450-ը

[106] Օհանյան Ա., Վարչա-տերիտորիալ բաժանումները նախախորհրդային Հայաստանում, Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», h. 51, պր. 2, 1955, էջ 87, Սարգսյան Հ., Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850-1900), «ԲԵՀ», 1990, N 1, էջ 116:
[107] Քոչարյան Ս., նշվ. աշխ., էջ 49:



իգական սեռի ներկայացուցիչներ[108]: Դարավերջին գյուղն ուներ 1231 բնակիչ:

Ծաթերը փոքրիկ գյուղ է, Ալավերդուց 11 կմ հարավ, Քարինջը՝ 12 կմ հվ.-արևելք: Վերջինս անունը հավանաբար ստացել է իր շրջակայքում գտնված հսկայական քարաժայռերից և քարակույտերից, բլրակի վրա է, ունի մի քարաշեն եկեղեցի:

Արդվին գտնվում է Ալավերդուց 9 կմ հարավ-արևմուտք, Օձունից հարավ: Հնում կոչվել է Մելիքգյուղ: Ըստ ավանդության՝ երբեմնի քաղաք է եղել՝ 3 եկեղեցիներով, 6 գերեզմանատներով, 3 ծիթահանքերով, բազմաթիվ տների հետքերը հաստատում են ավանդությունը: Տեղացիների հիշողության մեջ պահպանվել է, որ գյուղն իր անունն ստացել է Արդվին քաղաքից, որտեղից XVIII դ. բնակիչներ են տեղափոխվել այստեղ, երբ գյուղն ավերվել էր լեզգիների կողմից[109]: Գյուղը բաժանվում էր 3 թաղի՝ Վիշապաձոր, Տայինանց թաղ և Քալանթարյան թաղ: Պատկանել է Լորիս-Մելիքյանների և Քալանթարյանների ազնվականական տներին: Գյուղի հարավային կողմում գտնվում է համանուն ավերակ գյուղատեղին:

Իգահատը (Այգեհատ) գտնվում է Օձունի հարթության հարավային մասում: Գյուղը կառավարվել է Շահվերդյան ազնվականական տոհմի կողմից[110]: Ըստ ավանդության, սրանց նախահայրը բնակվել է Բջնի գյուղում, ապա եկել Լոռի, վրաց Գեորգի թագավորից ստացել է ազնվականության կոչում և Իգահատ գյուղը:

Օձունը (Ուզունլար) գտնվում է Դեբեդի կիրճի ձախափնյա 1150 մ. բարձրության սարավանդում: Մոտավորապես V դ. գյուղի ներկայիս հարավ-արևելյան մասում գոյություն է ունեցել բնակատեղի[111]: Ենթադրվում է, որ վաղ շրջանում Օձունը եղել է Տաշիր գավառի կենտրոնը[112]: XIX դ. վերջերին Օձունն արդեն խոշոր գյուղ էր՝ «Փողոցներից մի քանիսը լայն և կանոնավոր, մյուսները՝ նեղ ու

[108] Լալաեան Ե., նշվ. աշխ., էջ 85:
[109] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., h. 2, էջ 74-75:
[110] «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 10-ը մարտի, N 9, էջ 2:
[111] Շախկյան Գ., Օձուն, Ե., 1983, էջ 9:
[112] Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 85:

ծուռումուռ»[113]: XIX դարից գյուղը հիշատակվում է Ուզունլար անունով[114]:

Ամոջը գտնվում է Օձուն գյուղի մոտ, Ալավերդուց 5 կմ հարավ-արևմուտք: XVIII դ. Օձունի վանքի սեփականությունն էր, XIX դ. պատկանել է Լոռու-Մելիքյանների տոհմին: Գյուղի հյուսիսային կողմում կա մի փոքրիկ ուխտատեղի՝ Սուրբ Հակոբ անունով:

Հագվին փոքրիկ գյուղ է, Ալավերդուց 5 կմ հր.-արևմուտք, Օձունից 5 կմ հս.-արևմուտք: XVIII դ. եղել է Օձունի վանքի սեփականությունը: XIX դ. պատկանում էր Լոռու-Մելիքյաններին:

Աքորին գտնվում է Լալվար լեռան հվ.-արևելյան ստորոտին, Ալավերդուց հվ.-արևմուտք: Գյուղը պատկանել է Լոռու-Մելիքյաններին:

Դեբեդի միջին հոսանքում՝ գետի ձախ ափին է գտնվում Ալավերդին: Բնակավայրն Ալավերդի է կոչվել XVII դարում, թուրքական բորչալու ցեղի ցեղապետ Ալլահվերդու անունով: Այստեղ հնագույն ժամանակներից կատարել են պղնձի հանույթ և մշակում, ինչը բավական աշխուժացավ XVIII դ. երկրորդ կեսերին, երբ Գյումուշխանեից այստեղ եկան հույն հանքագործներ: Նրանք բնակավայրն անվանեցին Մադան («Հանքավայր»): 1801 թ. հետո, երբ Ալավերդին Բորչալուի կազմում անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, տարածքը պայմանագրով տրվեց հույն կապալառուներին, ինչը նոր թափ հաղորդեց պղնձի հանույթի զարգացմանը:

Որնակը (Ակներ) Ալավերդուց 3-4 կմ հարավ-արևելք, Սանահին և Հաղպատ գյուղերի միջև է: Եղել է Սանահինի վանքի, որոշ ժամանակ նաև՝ Լոռու-Մելիքյանների և Արղությանների սեփականությունը[115]:

Սանահին գյուղի արևելյան կողմում ձգվում են Աստվածածնա, արևմուտքում՝ Սևորդյաց ձորերը: Գյուղի հողերի մի մասը XIX դ. վերջերին պատկանել է Արղության-Երկայնաբազուկների գերդաստանին, մի մասը՝ Սանահինի վանքին:

Հաղպատը հարավից եզերված է Սեղիկի և Շերեքի ձորերով, հյուսիսից՝ Խրամաձորով, գտնվում է Ալավերդուց 5 կմ հարավ-արևելք: Ուշ միջնադարում Վրաստանի, Իմերեթի, Աբխազիայի հայկական եկեղեցական թեմերը, Բորչալուի և Ղազախի թեմերը (բացառությամբ Սանահինի վիճակի) ենթարկվում էին Հաղպատի արքեպիսկոպոսությամբ Կրպոսին: XIX դ. սկզբին նրան էին պատկանում Շնող, Ճոճկան, Ախթալա, Որնակ և այլ գյուղեր, այգիներ, արոտավայրեր, Մադանի պղնձահանքը: Սակայն վանքի տնտեսությունը հետզհետե թուլանում է, ինչից օգտվելով, որոշ գյուղեր զավթում է տեղի կալվածատեր իշխան Բարաթովը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Հաղպատը Սոմխեթ կամ Բորչալու վիճակի և Ղազախի հոգևոր կենտրոնն էր:

1815 թ. դրությամբ գյուղն իր բնակիչներով պատկանել է կալվածատեր Պոպունաբեկովներին, գյուղն իրենց սեփականությունն են համարել նաև Բարաթյանները (Բարաթովներ) և Թիֆլիսի հայոց քեմը[116]: Հավանաբար, այս դրդապատճառներից ելնելով, Ներսես արքեպիսկոպոսը 1815 թ. գրություն է հղում կառավարչապետ Ա. Երմոլովին՝ Հաղպատ գյուղն իր բնակիչներով Հաղպատի վանքին պատկանելու մասին[117]:

1833 թ. ապրիլի 21-ին Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցին (1762-1849) Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ (1832 թվականից) Գ. Ռոզենին գանգատվում է վրաց իշխաններից, որոնք աստիճանաբար սեփականացնելով վանքի հողերը, տիրել են ամբողջ գյուղին՝ եկեղեցու սեփականությունը թողնելով միայն 188 օրավար վարելահող. այնուհետև իշխան Բարաթովը սկսել է նեղել Հաղպատում երկրագործությամբ զբաղվող հինգ վանքապատկան ճորտ ընտանիքների[118]:

Ախթալան կամ միջնադարյան Պղնձահանքը գտնվում է Լոռու

---

[113] Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, Թիֆլիս, ա. թ., էջ 345:

[114] Ոսկերչյան Հ., Ճշվ. աշխ., «Կռունկ հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, ապրիլ, Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ (1800-1820), հ. Ջ, Ե., 1934, էջ 399, 651, 738:

[115] «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1880, 13-ը սեպտեմբերի, N 70:

[116] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 79, թթ. 1-2, վավ. 106, թթ. 1-11:

[117] Նույն տեղում, թղթ. 27, վավ. 58, թթ. 1-5:

[118] Նույն տեղում, թղթ. 78, վավ. 41, թթ. 1-4:

հյուսիս-արևելյան մասում: Պատմական աղբյուրներում հայտնի է նաև Ագարակ անունով[119]:

Զաքարյան իշխանության անկումից հետո Լոռու պղնձահանքերը մնացին Վրաստանի կազմում, իսկ XVIII դ. II կեսին, երբ փոքրինչ աշխուժացավ երկրի տնտեսական կյանքը, Հերակլի II-ի պահանջով Թուրքիայից Վրաստան հրավիրվեցին հույն հանքափորներ[120]: Վրաց պալատական դիվանադպիր Օման Խերխերուլիձեն գրում է. «1772 թ. ...(Իրակլի թագավորը) շատ հետախուզություններ կատարեց և աշխատանք թափեց, որպեսզի իր երկրում գտնի ոսկու և արծաթի հանքեր, և գտավ այն Սոմխիթի երկրում՝ Ախտալայում, որ է հայրենական (ժառանգություն) Սոմխիթի մելիք իշխանների: Եվ բերել տվեց Հունաստանից հույների մի փոքրաթիվ խումբ, որոնք տեղյակ էին հանքային ոսկի և արծաթ հալելու գործին: Ապա սկսեցին հանքագործությունը, որից (Իրակլի թագավորը) շատ օգուտ ստացավ»[121]: Հույները 1755 թ. Տրապիզոնի նահանգի Գյումուշխանե գավառից եկան և հաստատվեցին Ախթալայում: Սրանց ունեցած հաջողությունների մասին լսելով, Անատոլիայից ևս հույն հանքագործներ եկան և հաստատվեցին Ալավերդում: 1801 թ. Վրաստանի՝ Ռուսաստանին միացումով, բոլոր հանքերն ու ձուլարաններն անցան Ռուսաստանի վերահսկողության տակ և սկսեց զարգանալ պղնձարդյունաբերությունը:

Շամլուղն առաջին անգամ հիշատակվում է XVIII դ. վերջերին: Գյուղի շրջակայքում պահպանվել են XVII-XVIII դարերի գյուղատեղիներ: Գյուղի մոտ, ձորի մեջ գտնվում է պղնձի հանքավայրը, որը շահագործվել է հնագույն ժամանակներից: Պղնձի հանույթն ու ձուլումը XVIII դ. հասնում էր մեծ չափերի:

Շնողը Գուգարաց լեռնաշղթայի արևելյան մասում է: Արևելքից սահմանակից է Արճիսի, հարավից՝ Թեղուտի, հարավ-արևմուտքից՝

[119] 1118 թ. վրաց թագավոր Դավիթ Շինարարը Լոռի քաղաքն ու Ագարակ-Պղնձահանք գյուղը միացրել էր Վրաստանին:

[120] Пиралов А., Краткий очерк кустарных промыслов Кавказа, С. Петербург, 1913, с. 83.

[121] Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., հ. Գ., էջ 177:



Ծաղկաշատի, Հաղպատի հողատարածություններին և անտառներին:

XVIII դ. վերջերին Հյուսիսային Հայաստանն ասպատակող լեզգիների արշավանքների պատճառով շնողցիներից շատերը հեռացան Դուքաջեպի սարերն ու ձորերը, հիմք դրեցին նոր գյուղակների՝ Նաձոր, Գիլիգեղ, Բովեր, Ղարաքոթուկ, Գուլաբի, Կարճախ: Մի որոշ ժամանակահատված, ինչպես տեսանք, Շնողը ենթարկվել է Ղազախի նահանգին: Արճիս գուղը գտնվում է Շնողից երկու կիլոմետր արևելք, Կոզման լեռան լանջին:

Ճոճկանը Վիրահայոց լեռների հյուսիս-արևելյան լանջերին է, Ալավերդուց 20-21 կմ հս.-արևելք: Գյուղը բազմիցս ավերվել է և նույն տեղում վերականգնվել: XIX դ. վերջերին որպես կալվածք պատկանել է գեներալ Լորիս-Մելիքյանին և իշխան Լևոն Մելիքովին:

Դեբեդ գետի աջակողմյան վտակ Մարց գետակի ձախ ափին են տեղակայված Մարց, Լորուտ, Շամուտ, աջ ափին՝ Աթան գյուղերը:

Մարցը գտնվում է մի բլրակի վրա, Ալավերդուց 16 կմ հր.-արևելք: Գյուղից հարավ-արևմուտքում բարձրանում է Սոթի լեռը, ուր կա մի ավերակ մատուռ: Հարավ-արևելյան կողմում ձգվում է Ճգնավորի Թալա բարձրավանդակը, ուր գտնվում է «Ճգնավորի խաչ» ուխտատեղին: Մարցի տարածքում են եղել Աղաքր դաշ, Ղզադաձոր, Արփա թալա գյուղատեղիները:

Լորուտը գտնվում է Ալավերդուց 20 կմ հվ-արևելք: Գյուղի մոտ կան միջնադարյան պատմա-ճարտարապետական հուշարձաններ՝ խաչքարեր, նաև՝ գյուղատեղի: Լորուտից արևելք է Շամուտը, որի շրջակայքում պահպանվել են XIII-XVIII դարերի գյուղատեղի և XIII դարի ամրոց: Աթան գյուղը հիմնադրվել է XIX դ. կեսերին՝ Հաղպատի վանքի կալվածքները լքած գյուղացիների կողմից: Տարբեր ժամանակներում այստեղ են հաստատվել բնակիչներ Հաղպատից, Սանահինից և Շիրակի գյուղերից:

Լոռու գավառի հյուսիսային կողմում, Ձորագետի վերին հոսանքում տեղակայված են Շահնազար և Շիշթափա գյուղերը:

Շահնազարն (Մեծավան) արևմուտքից շրջապատված է Ջավախքի լեռնալանջերով, իսկ հարավ-արևմտյան և հարավային լանջերով հոսում է Ձորագետի վտակ Տաշիրը: Գյուղի տեղում նախկինում

եղել է բնակատեղի, որը կոչվել է Խոշքիլիսա: Գյուղի հողատարածքները պատկանում էին Բորչալուի գավառի մեծահարուստ Մելիք-Շահնազարյանին: Նրա անունով էլ գյուղը կոչվեց Շահնազար:

Շիշքափան (Նորաշեն) ևս որպես բնակավայր հայտնի է հնագույն ժամանակներից, գյուղից 5 կմ. հարավ գտնվում է Ք. ա. VI-V դարերի թվագրվող ամրոց:

Ձորագետի միջին հոսանքում է գտնվում Ջալալօղլին (Ստեփանավան): Այն XIX դ. երկրորդ կեսին գյուղաքաղաքի կարգավիճակով մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ և ծառայում էր որպես ցարական չինովնիկների ամառանոց: Ջալալօղլու շրջանում մոտ 10 կմ շառավղով գտնվում են Հայդարբեկ, Ուռուտ, Լեջան, Լոռի բերդ (հնում՝ Միսխանա), Գյուլագարակ, Ջիգրաշեն, Վարդաբլուր, Յաղդան, Կողես, Մղարթ, Կուրթան գյուղերը:

Ուռուտը (հնում՝ Սողութլու, Սուգուտլու) գտնվում է Ջալալօղլիից 6 կմ հյուսիս, Լալվարի ստորոտին: Գյուղի շրջակայքում կան գյուղատեղիներ: Լեջանը Ձորագետի ձախ ափին է, Ջալալօղլուց 3 կմ արևելք, Լոռի բերդ՝ Ջալալօղլիից մոտ 5 կմ հարավ-արևելք. Ձորագետի ձախակողմյան վտակ Միսխանա ու Դեբեդ գետերը երկու խոր ձորակում միանալով՝ միմյանց, կազմում են մի ժայռոտ հարթություն, որի վրա գտնվում է նախկին բերդը: XII դ. սկսած բերդաքաղաքը ենթարկվում է մոնղոլական, թուրքական, ապա՝ պարսկական ասպատակությունների և ավերվում: XVIII դ. լքված ու ավերված էր, երբ այնտեղ բնակություն հաստատեցին տարբեր վայրերից եկած հայեր և հիմք դրեցին Լոռի բերդ գյուղին:

Լոռու բերդի մոտ գտնվում է Ամրակից անունով հին գյուղատեղին: Հավանաբար այս հին գյուղը Ամրակից է կոչվել Լոռու բերդին կից լինելու պատճառով[122]: Ավելի ուշ՝ 1840-ական թթ. այստեղ կառուցվում է ռուսաբնակ Նիկոլաևկա (Կիրով) գյուղը: Գյուղից 2 կմ հարավ գտնվում են Տորմակադուռ գյուղատեղին, Տորմակ եկեղեցու (VI դ.) ավերակները և հին գերեզմանատունը:

Յաղդան և Կողես գյուղերը գտնվում են Ձորագետի ձախ ափին՝

[122] Լալաեան Ե., նշվ. աշխ., էջ 71:



Ջալալօղլուց 8-12 կմ. հվ.-արևելք: Յաղդանի շրջակայքում կան հին գյուղատեղիներ, կամուրջ, XIII-XVII դարերի գերեզմանոց՝ խաչքարերով: Կողեսի շրջակայքում պահպանվել են X-XI դարերի կամուրջ, XI դարի եկեղեցի, խաչարձաններ: Գյուղից արևելք տեղակայված է Մղարթ գյուղը:

Գյուլաքարակն (Ագարակ) ընկած է այն ընդարձակ հովտի մեջ, ուր տեղակայված են նաև Վարդաբլուր, Յոքարձի և Գարգառ գյուղերը: Հարավային կողմում կա ավերակ գյուղատեղի: Ջիգրաշենը գտնվում է Վարդաբլուրից հս.-արևելք, XVIII դ. մտել է Օձունի վանքապատկան գյուղերի ցուցակի մեջ: Վարդաբլուրը տարածվում է Գարգառ գետի աջ ափին, Ջալալօղլուց 4 կմ հեռավորության վրա: Գյուղը ձևավորվել է դեռևս XVIII դ. կեսերին, Մուշից և Սասունից վերաբնակվածների շնորհիվ: Գյուղն իր անունն ստացել է շրջակայքում գտնվող Սուրբ Սարգիս և Սուրբ Գևորգ սարերի վրա աճող վարդերից: Գյուղի տարածքում են Կետևան գյուղատեղին, մատուռներ (XII դ.), ամրոց (X-XI դդ.), խաչքարեր (XI-XVII դդ.):

Կուրթանը գտնվում է մի լեզվաձև բարձրավանդակի վրա, Ձորագետի աջ կողմում, Ջալալօղլուց 15 կմ հր.-արևելք: Գյուղի արևմտյան կողմում՝ Գարգառ գետի աջ կողմում գտնվող երկու մատուռների մոտ, մի խաչքարի վրա, կա արձանագրություն. «Թուին ՇԼԵ (1086) ի թագաւորութեան Կիւրիկէի հարազատ Սարգսի Դաւթայ Գաւրիգիոյն նորոգեցաւ սուրբ գորգս բարեխաւս հոգւոց մերոց»[123]:

Յոքարձին ընկած է Ձորագետի աջ ափին, Ջալալօղլուց 10 կմ հր.-արևելք: Գարգառը գտնվում է Գարգառ գետի ափերի բլրապատ հարթավայրում, Ջալալօղլուց 8 կմ հեռավորության վրա:

Թվարկված գյուղերի մի մասը եղել են վանքապատկան՝ Օձունի, Սանահինի կամ Հաղպատի վանքերին պատկանող, կամ էլ կալվածատիրական՝ Լորիս-Մելիքյան, Քալանթարյան, Շահվերդյան, Արղության և այլ ազնվականական տոհմերի պատկանող: XVIII դ. սկզբին վրացական գույքային փաստաթղթերում բազմիցս հիշատակվում են Ջավարաշվիլի կամ Ջավրաշվիլի տոհմի անդամները՝ որպես

[123] Լալաեան Ե., նշվ. աշխ., էջ 73:

տեղի հողատերեր, դարավերջին նրանց մի ճյուղը հաստատվում է Օձուն, Այգեհատ (Իգահատ), Արդվի և Մղարթ գյուղերում[124]:

Ռուսաստանին անցնելու նախօրյակին Լոռիում կալվածքներ ունեին վրացի ազնվականներ Օրբելիանիները և Բագրատիոն Մուխրանսկին[125]: Վրաց Գեորգի XII թագավորի օրոք մոուրավների պաշտոն ունեցած իշխանների և ազնվականների ցուցակում Բորչալուում և Շնողում հիշատակվում է իշխան Դավիթ Աբաշիձեն[126]:

1820-ական թթ. Լոռու շրջանի շատ հողեր արդեն պետական էին, որոնց վրա ապրում էին Արևմտյան Հայաստանից ու այլ վայրերից եկած հայեր ու թուրքեր[127]:

Գյուղերը XIX դ. վերջին հիմնականում մտել են Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառի մեջ: Եղել են նաև գյուղատեղիներ, Խաչիդուռ, Թեղուտ, Իգատակ, Սարչապետ, Ամրակից, Տորմակադուռ, Տոտկաջուր և այլն, որոնց մի մասը հետագայում բնակելի են դարձել:

Այսպիսով, վրացական տիրապետությունը Լոռիում XIX դարից փոխարինվեց ռուսականով, ինչը, սակայն, չփոխեց տարածաշրջանի հայեցի պատկերը: Վրացական թագավորության վերացումից հետո Անդրկովկասում սկսվում են առաջին վարչա-տերիտորիալ բաժանումները, որոնք ներառում են նաև Լոռու գավառը:

## գ. Լոռու գավառի էթնիկ պատկերը (XVIII դ. վերջ - XIX դ. առաջին երեսնամյակ)

Լոռու գավառում հայկական տարրը վաղնջական ժամանակներից կազմել է բնակչության մեծամասնությունը: Վրաստանի տիրապետության ժամանակ ևս, XVIII դ. վերջերին, տարածաշրջանը հիմնականում հայաբնակ էր:

---

[124] Զավրիև Ս., Միրզոյան Ս., Զավարյան-Զավրիևների տոհմագրությունը, «Վեմ», հուլիս-սեպտեմբեր, թիվ 2, 2009, էջ 32, 42:
[125] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., նշվ. աշխ., հ. 1, էջ 140
[126] АКАК, т. 1, док. 157, с. 195.
[127] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., նշվ. աշխ., էջ 140



Թուրքերը գաղթել են այստեղ XVI դ. I կեսին, երբ պարսից շահ Թահմասպն (1524-1576) իր թիկունքն ամրապնդելու համար շիա դավանանքի թուրքական զուլքաթար ցեղախմբին պատկանող բորչալու, ղազախ, շամսադինլո, ղաջար ցեղերին բնակեցրեց Հյուսիսային Հայաստանի Լոռի, Փամբակ, Աղստև, Տավուշ և այլ վայրերում[128]: Լոռու հայ բնակչությանը տեղահան անելուց հետո (1605 թ.) Շահ-Աբբասի հրամանով այստեղ դարձյալ հաստատվել են թուրքեր և իրենց ցեղական Բորչալու անունը տվել այն հարթությանը, որտեղ բնակություն են հաստատել: Երևանի Ամիր-Գունա խանը, որին հանձնարարված էր կազմակերպել իր նահանգի բնակչության գաղթը, որքան էլ շահագրգռված չէր ամայացնելու այն երկիրը, որն իր իշխանության ներքո էր գտնվում, և որի, հատկապես հայ բնակչությունը, մեծ եկամուտներ էր բերում: Նա եռանդուն գործունեություն էր ծավալում Արարատյան երկրին սահմանակից քրդական աշիրաթապետերին հրապուրելու և նրանց Շահ-Աբբասի իշխանությանը ենթարկելու ուղղությամբ: Նա ապաստան տվեց և ժամանակավորապես Էջմիածնում բնակեցրեց թուրքերից պարտված ջալալիների վերջին զորախմբերին: Խանը մի քանի անգամ արշավանք կազմակերպեց Կարսի, Էրզրումի, Վանի և Մուշի շրջանները, այնտեղից մեծ թվով հայ բնակիչների իրենց ընտանիքներով քշեց-բերեց և բնակեցրեց Արարատյան դաշտի ավերակ գյուղերում:

XVIII դ. II կեսին Լոռու գավառի հյուսիսարևելյան մասում, ինչպես տեսանք, բնակություն հաստատեցին հույները, որոնք Թուրքիայից այստեղ գաղթեցին վրաց թագավոր Հերակլ II-ի հրամանով:

Հայ բնակչությունն այստեղ ավելի ստվարացավ Արցախի և Արևմտյան Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքներից հայերի վերաբնակեցման հետևանքով:

XVIII դ. վերջին Վրաստանում և նրան ենթակա հայկական տարածքներում բնակվող հայերի թվաքանակի մասին պաշտոնական վիճակագրություն գոյություն չունի: Միայն Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող ծխամատյաններն աղքատիկ տեղե-

---

[128] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., նշվ. աշխ., էջ 69:

կություններ են հաղորդում գյուղերի բնակչության վերաբերյալ:

Հայտնի է, որ Լոռու մի շարք վանքեր (Հաղպատ, Սանահին, Օձուն) խոշոր կալվածատերեր էին, ունեին բազմաթիվ գյուղեր, այգիներ, արտեր, ջրաղացներ և այլն, որոնցից տարեկան զգալի եկամուտներ էին ստանում: Վանքերի, հատկապես Հաղպատի վանքի ելքի ու մուտքի մատյանները բավականին նյութ են տալիս վանական տնտեսությունների վիճակի, հետևաբար նաև՝ բնակչության վերաբերյալ: Ամեն տարի վանքի ներկայացուցիչները մեկնում են գավառի տվյալ վանքապատկան գյուղերը՝ վանքի համար մթերք և այլն հավաքելու:

1781 թ. ապրիլին Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը թիֆլիսցի նորընծա Դավիթ վարդապետին «ժողովարար կարգեալ իւղի, և պանրի, և մսացուի, և երկաթայ, և փայտեայ գործեաց ի վերայ Ղազախու, Բամբկաձորու, Շուլաւէրու և Լոռու»[129]: Նույն թվականին Ղուկաս կաթողիկոսը նամակով Մարտիրոս վարդապետին լիազորում է դարձյալ Ղազախում, Փամբակաձորում, Լոռիում, Բոլնիսում և Շուլավերում բնակվող համայն «Շամշատինու» ժողովրդից հավաքելու հարկերը. «/Յ/ետ այսորիկ, ըստ նախնեաւանդ սովորութեան սրբոյ Աթոռոյս, առաքեաց սրբազան Վեհն զՄարտիրոս վարդապետն ի Ղազախ, ի Բամբկաձոր, ի Բոռչալու, և ի Լոռի, նաև՝ ի Բօլնիս և Շուլաւեր բնակեալ համայն Շամշատինու ժողովուրդսն,...ի ժողովել ի նոցունց զուտելիս և զայն հարկաւոր պիտոյս...»[130]: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ նշված գավառները պետք է որ ունենային բավականին թվով հայ բնակչություն, որն էլ հանդիսանում էր վանքերի պահպանման հիմնական աղբյուրը, թեև 1801 թ. դրությամբ Լոռիում, Փամբակում, Ղազախում և հայկական այլ տարածքներում առհասարակ բնակչության թիվը մեծ չէր: Լոռիում գրեթե անմարդաբնակ էին Աքորի, Ճոճկան, Մղարթ, Շահնազար, Ուռուտ, Քարինջ գյուղերը[131]:

[129] Դիվան Հայոց պատմության, աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, հ. Ա., Ե., 1984, էջ 232:
[130] Նույն տեղում, էջ 299:
[131] Ավդալբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 12:



Ազգաբնակչության թվի անընդհատ կրճատումն ու տնտեսության քայքայումը գավառում պայմանավորված էին մի շարք գործոններով: Վրաստանին ենթակա Լոռին և Փամբակը XIX դ. առաջին տարիներից սկսած մինչև 1828 թ. ռազմաբեմ էին հանդիսանում ռուս-պարսկական բախումների համար: Դարասկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների, դրանցից բխող ծանրագույն հետևանքների՝ ավերի, թալանի ու գերեվարումների պատճառով գավառում տեղի ունեցավ ազգաբնակչության տեղաշարժ, թվաքանակի կրճատում, տնտեսության քայքայում: Պատերազմների հետևանքով հայ բնակչության արտագաղթը և գերեվարությունները, ռուս զինվորական հրամանատարության կատարած վերաբնակեցումները մեծ ազդեցություն էին թողնում ազգաբնակչության թվի տատանումների վրա: Այդ ամենին գումարվում էին բարձր հարկերը, աղքատությունը, տարածքի աննպաստ բնակլիմայական պայմանները՝ երկարատև անձրևները, ցուրտը, կարկուտը, ինչը կարող էր փչացնել սպասված բերքը: Լոռու դաշտերում հացին խառնվում էր մի բուսատեսակ, որը վրացիները անվանում էին «գվարզելի», և առաջացնում էր գլխացավ, թուլություն, և որի աճը բնակիչները չէին կարողանում կանգնեցնել, այդ պատճառով Լոռու բնակչության մի մասը թողնում էր բնակավայրերը, իսկ մնացող մասն էլ պատրաստ էր առիթի դեպքում անցնել այլ վայրեր[132]: Հիմնականում անմարդաբնակ ու դատարկ էր դարձել Լոռու հյուսիսարևմտյան մասը (այժմյան Տաշիրի շրջանը)[133]:

XIX դ. սկզբներից սկսած կատարվեցին ժողովրդագրական կազմի ակնառու փոփոխություններ, բնակավայրերի նոր ցանցի ձևավորում: Արևելյան Հայաստանում բնակչության էթնիկ բնագավառում ստեղծվում էր նոր իրադրություն, քանի որ պատերազմներին հաջորդած գաղթերն արմատականորեն փոխում են հայերի ազգաբնակության կազմը: Եթե ժողովրդագրական փոփոխություններն Արևմտյան Հայաստանում կատարվում էին ի վնաս տեղի հայերի

[132] Обозрение российских владений за Кавказом..., с. 296-297.
[133] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., նշվ. աշխ., էջ 140:

(արտագաղթի հետևանքով հայերի թվաքանակը փոխվում էր հօգուտ այլազգիների), ապա Արևելյան Հայաստանում դա կատարվում էր հօգուտ հայկական տարրի ավելացման:

Արդեն XIX դ. սկզբից, երբ Արևելյան Հայաստանի գրեթե կեսը (Արևելյան Շիրակ, Լոռի, Փամբակ, Տավուշ, Զանգեզուր) մտել էին Ռուսաստանի կազմի մեջ, ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ բնակչության ընդհանուր հաշվառմանը, կամ, ինչպես ընդունված է ասել՝ կամերալ ցուցակագրությանը:

Վերը նշված 1802 թ. մայիսի 8-ին կազմված գյուղերի անվանական ցանկում յուրաքանչյուր գյուղի դիմաց նշված է, թե ինչ ազգագրական տարրերից էր բաղկացած բնակչությունը, առանց, սակայն, նրանց թվաքանակը պարզելու: Ըստ այդմ՝ Լոռու 27 բնակավայրերից 17-ը հայ և վրացի խառը ազգաբնակչությամբ էր, հինգը՝ հայ, չորսը՝ վրացի՝ և մեկը՝ օս քրիստոնյա: Շուլավերի վոլոստի մեջ ընդգրկված Հաղպատ, Որնակ, Սանահին, Շնող, Դսեղ, Օձուն գյուղերում նշված բնակիչները միայն հայեր էին, Ախթալ-Մադանում՝ վրացիներ և հայեր[134]:

1804 թ. կամերալ վիճակագրության համաձայն՝ Լոռու գավառում ապրում էր 780 ընտանիք կամ 3908 մարդ՝ գերազանցապես հայ ազգաբնակչությամբ, որոնցից 2252 արական և 1656՝ իգական սեռի ներկայացուցիչներ[135]:

1804-1805 թթ. Փամբակի գավառում ապրում էր 514 ընտանիք կամ 3886 մարդ, որոնցից՝ հայեր՝ 401 ընտանիք կամ 3297 մարդ[136]:

1804 թ. Բորչալուի ուղեմասում բնակվում էր 580 ընտանիք՝ (1746 ար., 1166 իգ., ընդամենը՝ 2912 մարդ), որոնցից՝ հայեր՝ 501՝ (1509 ար., 1008 իգ., ընդ.՝ 2517 մարդ), հույներ՝ 79 ընտանիք՝ (237 ար., 158 իգ., ընդ.՝ 395 մարդ)[137]:

Լոռու և Բորչալուի ուղեմասում միասին ստացվում է հետևյալ պատկերը. 1360 ընտանիք (3998 ար., 2822 իգ., ընդ.՝ 6820 բնակիչ), որոնցից՝ հայեր՝ 1281 ընտանիք (3761 ար., 2664 իգ., ընդ.՝ 6425 բնակիչ), հույներ՝ 79 ընտանիք՝ (237 ար., 158 իգ., ընդ.՝ 395 բնակիչ)[138].

Լոռու և Փամբակի գավառներում միասին ստացվում է հետևյալ պատկերը. 1294 ընտանիք, կամ 7794 մարդ՝ գերազանցապես հայ ազգաբնակչությամբ:

Ինչպես տեսնում ենք, Լոռու, Փամբակի և Բորչալուի գյուղերի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը:

1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրին հաջորդած առաջին տարիները, մի շարք ներքին ու արտաքին հանգամանքներով պայմանավորված, նշանավորվեցին գավառի բնակչության թվաքանակի կտրուկ անկումով:

Ռուսական բանակում ծառայող գերմանացի սպա Մորից ֆոն Կոցեբուն, որը մասնակցել էր գեներալ Ա. Երմոլովի՝ Պարսկաստան կատարած դեսպանությանը, 1817 թ. ապրիլի 21-ին, անցնելով Լոռիով, գրում է. «Լոռին (ի նկատի ունի Լոռի բերդը-Դ. Ա.) Փոքր Հայաստանի հին մայրաքաղաքն է, որ նախապես պարունակում էր վեց հազար տուն... այժմ մնում է միայն երեսուն տուն...»[139].

Դրությունը փոխվեց միայն XIX դ. 20-ական թթ. սկզբներից, երբ ավարտվեցին պատերազմները, հաստատվեց խաղաղություն և տարածաշրջանում կրկին գրանցվեց ազգաբնակչության թվաքանակի որոշ աճ, այնպես, որ արդեն 1824-1825 թթ. սկզբներին Փամբակի, Շորագյալի և Լոռու գավառներում բնակչության ընդհանուր թիվը, գերազանցելով 1804-1805 թթ. ցուցանիշը (2102 ընտանիք), հասավ 2150 ընտանիքի[140]:

1824 թ. Լոռու ծխամատյաններում նշված են նախկինում Ղազախի գավառի մեջ մտած մի շարք գյուղեր, որոնց դիմաց գրված են միայն հայկական ազգանուններ՝ Բաղանիսում՝ 4, Ոշղոթանում՝ 20,

---

[134] АКАК, т. 1, док. 575, с. 461.
[135] Кавказский календарь на 1851 год, Тифлис, отд. III, с. 82.
[136] Ավդալբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 17:
[137] Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XX в., Е., 2002, с. 90.

[138] Նույն տեղում, с. 91.
[139] Հակոբյան Թովմ., նշվ. աշխ., էջ 515:
[140] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 144:

Կոթիգյուղում՝ 40 (որոնցից մեկը՝ երևանցի), Դոսքլուում՝ 26, Ղալաչայում՝ 46, Բարանայում՝ 11, Կողբում՝ 21, Ոսկեպարում՝ 3[141]:

Թուրքմենչայի և Ադրիանապոլսի հաշտության պայմանագրերը լայն իրավունքներ ընձեռեցին քրիստոնյաներին արտագաղթել Պարսկաստանից և Օսմանյան Թուրքիայից: 1829-1830 թթ. Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան կատարված զանգվածային վերաբնակեցումները չփոխեցին Լոռու բնակչության ժողովրդագրական պատկերը, այլ որոշ չափով նպաստեցին բնակչության թվաքանակի աճին: Վերաբնակեցման հետևանքով եկած բնակչությունը հաստատվում էր ավերված և լքված գյուղերում՝ վերականգնելով դրանք կամ հիմնելով նորերը:

Ի տարբերություն Արևելյան Հայաստանի այլ տարածքների, Լոռու վերաբնակիչները գրեթե նոր գյուղեր չեն հիմնել. նրանք բնակություն են հաստատել տեղի բնակչության հետ՝ միևնույն գյուղերում, կամ էլ հին գյուղատեղիներում՝ Լոռի, Լեջան, Ուռուտ, Սարչապետ: Հայտնի է, որ դեռևս 1760-1770-ական թթ. Տավուշի շրջանի գյուղերից բնակիչներ են տեղափոխվել և հաստատվել Լեջանում[142]: 1782 թ. մայիսին Ղուկաս կաթողիկոսը Կարապետ վարդապետի խնդրանքով վրաց Գեորգի թագաժառանգին նամակ է հղում այն մասին, որ Լոռու բերդի բնակիչները պատկանում են էջմիածնի վիճակին, որովհետև նրանք ջավախքցի, բյուրականցի և ապարանցիներ են. «Կոնդակ ևս գրեաց սրբազան Վեհն առ Լոռու բերդի և իւր մերձակայից ժողովուրդսն, որք էին՝ ջաւախէթցիք, բիւրականցիք և ապարանցիք, որք աղերսանօք և բազմակնիք թղթով խնդրէին առնել զինքեանս տէրունի սրբոյ Աթոռոյ, զի չկամէին լինիլ թեմ Սանահնու (որոյ վիճակ էր Լոռի) և ոչ Հաղպատու, այլ սրբոյ Աթոռոյս կամէին լինիլ տէրունի վիճակ»[143]:

XIX դ. սկզբների վերաբնակեցումների հետևանքով համալրվում

[141] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 459:
[142] Տես՝ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմողներ՝ Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., հ. 2, Ե., 1988, էջ 574:
[143] Դիվան Հայոց պատմության, աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, հ. Ա., էջ 323-324:



է Շահնազար, Լեռնապատ գյուղերի հայ բնակիչների թիվը: Գուգարք գյուղը կրկին վերականգնում է իր հայկական էթնիկ նկարագիրը: Եկվորների մեջ գերակշռում էին Արցախի և Իջևանի գյուղերից եկվածները: Այդ ժամանակներից սկսած գյուղի բնակիչների թիվն սկսել է անշեղորեն աճել:

Ենթադրություններ կան, որ Գարգառը հիմնվել է դեռևս XVI դ. վերջերին՝ Մուշից և Ալաշկերտից վերաբնակվածների կողմից, սակայն բռնկված համաճարակի պատճառով անմարդաբնակ է դարձել: Այն նորից վերականգնվել է 1806-1810 թթ.՝ Արճեշի գավառից վերաբնակվածների կողմից[144]:

Ղամշկուտ գյուղի բնակիչները Շահալիից և Մարցից են տեղափոխվել:

Լոռու մի շարք գյուղերի բնակչությունն էլ, ինչպես կտեսնենք, համալրվեց Արցախից եկած հայերի հաշվին, որոնց մի մասը մնաց Օձուն, Դսեղ, Շնող[145], Մարց, Ճոճկան, Հաղպատ, Սանահին և այլ գյուղերում: Օձունում հաստատվեցին Գյուլիստանից՝ Մելիք-Ֆրեյդունի հետ եկածներ՝ 318 տուն (1686 արական, 1379 իգական, ընդ. 3065 հոգի)[146]: Շնողի արցախցիների մի մասը տեղափոխվում է հարևան հայաբնակ գյուղերը՝ իրենց համերկրացիների մոտ, որոնք ևս 1790-ական թթ. եկել էին Արցախից[147], մի փոքր մասն էլ մնում է տեղում:

Երբ Արևելյան Հայաստանն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ, լոռեցիներն աստիճանաբար վերադառնում են իրենց նախկին բնակավայրերը: Վերադարձողների մեջ զգալի թիվ են կազմել Արցախից եկած նախկին շնողցիները:

Պարսկաստանից (հատկապես Խոյից) ու Մուշից վերաբնակվածների հաշվին XIX դ. սկզբներին ավելացել է Փամբակի Համամլու

[144] Մանուկյան Մ., Գրիգորյան Ա., Եղյան, Գ., Լոռու մարզ, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը (այսուհետև՝ Լոռու մարզ...), Ե., 2003, էջ 140:
[145] Շախկյան Գ., Կայծոն-Շնող հայրենագիտարան, Ե., 1999, էջ 170-171, Ավետյան Վ., նշվ. աշխ., էջ 28, Բարխուդարյան Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 240:
[146] Լալաեան Ե., Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», VI տարի, VII և VIII գիրք, Թիֆլիս, 1901, էջ 345:
[147] Ավետյան Վ., նշվ. աշխ., էջ 39:

գյուղի բնակչության թիվը: 1807 թ. Համամլուում բնակություն է հաստատել 8 ընտանիք՝ 41 շունչ,՝ 22 տղամարդ, 19 կին, այդ թվում նաև՝ Ալիբեկից և Մակուից եկածներ[148]: Եվրոպացի ճանապարհորդ Ջեյմս Մորիերը դարասկզբի պատերազմներից հետո Համամլուի մասին խոսում է որպես «...մի գյուղ, որ տակավին մի քանի բնակիչներ ունի...»[149]:

Որոշ գյուղերում էլ վերաբնակեցումներ գրեթե չեն կատարվել:

Կարելի է նշել, որ Լոռին, առհասարակ, աչքի էր ընկնում իր միատարրությամբ և չնայած թուրք-պարսկական դաժան տիրապետությանն ու պատերազմներին, հայ տարրն, ի սկզբանե գերիշխող լինելով՝ պահպանեց իր թվական գերակշռությունը: Վերաբնակիչները միայն համալրեցին տարածաշրջանի հայ ազգաբնակչության թվաքանակը:

1829-1832 թթ. կամերալ ցուցակագրման հիման վրա կազմված պաշտոնական տվյալների համաձայն՝ Փամբակ-Շորագյալի ուղեմասի բնակիչները բաժանվում են հնաբնակների և նորաբնակների. վերջիններս ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 1829 թ. անցան ռուսական տիրապետության տակ: Ըստ այդմ՝ ուղեմասում հաշվվում էին տեղաբնակներ՝ 1536 ընտանիք (5425 մարդ) և վերաբնակիչներ՝ 3148 ընտանիք՝ (10575 մարդ), ընդամենը՝ 4684 ընտանիք (16 000 մարդ՝ ար. սեռի): Բացի այդ՝ 214 ընտանիք (620 մարդ) հոգևորականներ, 3 ընտանիք (20 մարդ) մելիքներ: Փաստորեն, վերաբնակեցումներից հետո ապրում էր 4901 ընտանիք կամ 16641 մարդ: Ընդհանուր թվով՝ ազգաբնակչությունը կազմում էին հայ առաքելականներ՝ 14963, հայ կաթոլիկներ՝ 963, մահմեդականներ՝ 546, հույներ՝ 169, շունչ[150]: Բորչալուի ուղեմասի 145 գյուղում հաշվվում էր 4092 ընտանիք (13762 մարդ), որոնցից հայ՝ 3634 հոգի[151]:

Վերը նշված Փամբակ-Շորագյալի ընտանիքների թիվը գրեթե

---

[148] Սուրադյան Հ., Կարսի նահանգի վարչատնտեսվրադագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 2006, էջ 113:
[149] Հակոբյան Թովմ., նշվ. աշխ., էջ 331:
[150] Обозрение российских владений за Кавказом..., с. 303-304.
[151] Նույն տեղում, с. 277.



համապատասխանում է Զ. Կորկոդյանի կազմած աղյուսակի տվյալներին[152]. ըստ այդմ՝

*աղյուսակ 1*

| Վարչ. միավորը | Գյուղերի թիվը | Տնտ. թիվը | ար. բնակչութ. | հայ | թաթար | վրացի | հույն | գերմանացի |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ղազախի դիստանցիա | 69 | 4960 | 17632 | 4796 | 12836 | -------- | -------- | -------- |
| Բորչալուի | 145 | 4092 | 13762 | 3634 | 8479 | 669 | 767 | 213 |
| Փամբակ-Շորագյալի | 105 | 4897 | 16628 | 15913 | 546 | ------- | 169 | -------- |

1832 թ. վերջերին և 1833 թ. սկզբներին Փամբակ-Շորագյալի ուղեմաս վերաբնակվեց Ծալկայի շրջանից՝ 182 ընտանիք (672 մարդ): Հետևաբար՝ ուղեմասի բնակչության թիվը մեծացավ՝ հասնելով 5083 ընտանիքի՝ 17313 մարդու[153]:

Հայահավաքման գործընթացը Լոռիում և Փամբակում շարունակվեց հաջորդ տարիների ընթացքում, երբ հարյուրավոր վերաբնակիչ ընտանիքներ, չհամակերպվելով իրենց նոր բնակավայրերում ստեղծված պայմաններին, նորից բռնեցին գաղթի ճամփան, որը Թրանցից շատերին (459 ընտանիք) բերեց Փամբակ-Շորագյալ[154]: Նրանք տեղավորվեցին Փամբակի 41 գյուղերում:

Հարկ է նշել, որ մինչև 1828-1829 թթ. այս իրադարձությունները նշված տարածքների ազգաբնակչության մեծամասնությունը կազմել են հայերը, թվաքանակով երկրորդ տեղում էին թուրքերը, երրորդում՝ վրացիները, վերջիններս ամբողջ բնակչության 10 տոկոսից պակաս

---

[152] Կորկոդյան Զ., նշվ. աշխ., էջ XXVII:
[153] Обозрение российских владений за Кавказом..., с. 304.
[154] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 148:

են եղել:

Ըստ «Լոռու մարզ»-ի, 1831 թ. Լոռու տարածքում կար 54 գյուղ՝ 2900 հայ բնակչությամբ[155], ինչը հավանական չենք համարում: կարծում ենք, ավելի հավանական են Խ. Ավդալբեկյանի ներկայացրած փաստերը, ըստ որոնց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց առաջ Լոռու գավառում հաշվվում էր 32 գյուղ՝ որոնցից հայեր՝ 670 ծուխ՝ 5127 շունչ, թաթարներ՝ 40 ծուխ՝ 246 շունչ[156]:

Առկա սկզբնաղբյուրները լիովին տեղեկություններ չեն տալիս Լոռիում հաստատված արևմտահայերի կոնկրետ թվաքանակի վերաբերյալ՝ ըստ գյուղերի տեղաբաշխման, ինչը վկայում է նրանց փոքրաթիվ լինելը: Ավելին, երբեմն դրաց հաղորդած տվյալները հակասական են և իրականությանը ոչ մոտ: Վերաբնակիչների թվաքանակի վերաբերյալ քիչ թե շատ տեղեկանում ենք եկեղեցական հարկացուցակներից, որոնցում յուրաքանչյուր ազգանվան դիմաց գրված է տրված հարկի չափը: Այդ դեպքում էլ բացակայում է գերդաստանի անդամների թիվը: Ընդ որում, եկվոր արցախցիները չեն ներառվել այդ ցուցակներում: Ենթադրում ենք, որ նրանք լինելով կալվածատիրական գյուղացիներ և գտնվելով իրենց մելիքի հպատակության ներքո, եկեղեցական հարկացուցակների մեջ չեն ընդգրկվել:

Դատելով յուրաքանչյուր գյուղից գանձվող եկեղեցական հարկաչափերի գումարից, ինչպես նաև ծնվածների, մկրտվածների, ամուսնացածների և վախճանվածների անվանացանկերից, ելևմտական մատյաններից, կարելի է եզրակացնել, որ 1820-ական թթ. առավել կենսունակ գյուղեր են եղել Մարցը, Հաղպատը, Սանահինը, Արճիսը և Շնողը[157]: Վերջինս, ըստ 1821 թ. դեկտեմբերի 31-ին եկեղեցական եկամուտների ցուցակի, ուներ 97 տուն բնակիչ[158]:

1839 թ. մարտի 22-ի Վրացաիմերեթյան թեմի Ղազախի նահանգի հայ բնակչության մարդահամարի տվյալներից իմանում ենք, որ Շնողի գերդաստանների թիվը հասնում էր 71-ի (553 հոգի), որոնցից 308-ը արական սեռի, 245-ը՝ իգական[159]: Տաս տարի անց՝ 1849 թ. բնակչությունը հասել է 662 շնչի, իսկ 1854 թ. գյուղն ունեցել է 629 բնակիչ, որոնցից 313-ը արական, 316-ը՝ իգական սեռի[160]:

Նույն մարդահամարի տվյալներով Արճիսի գերդաստանների թիվը հասնում էր 30-ի, որոնցից 101-ը արական սեռի, 72-ը՝ իգական[161]:

Եկվոր հայ բնակիչները հիմնականում եկել էին Արցախից, Ալաշկերտից, Կարինից, Կարսից, Փամբակից, Շամշադինից, Ղազախից: Արցախի վերաբնակիչները գլխավորապես տեղավորվել են Բոլնիս-Խաչենում, Դաղեթ-Խաչենում, մասամբ՝ Շնողում, Օձունում, Դսեղում, Շահալիում և այլուր: 1795 թ. Օձուն, Շնող, Շահալի և այլ գյուղերում մշտապես հաստատված արցախցիները ենթարկվել են բնիկների ազդեցությանը՝ կորցնելով սովորութային և բարբառային առանձնահատկությունները, որովհետև սակավաթիվ են եղել[162]: Այսօր էլ Արցախից եկած լոռեցիների հետնորդների հիշողության մեջ միայն աղոտ տեղեկություններ կան, որ իրենց նախնիները այնտեղից են վերաբնակվել:

Ալաշկերտցիները (հիմնականում կաթոլիկներ) 1818 թ. հաստատվել են Շիրակի Խլի-Ղարաքիլիսա, Թափադոլլակ, Քաֆթառլու, Հոռոմ և այլ գյուղերում, որտեղից 1822 թ. վերաբնակվել են Ղարաքիլիսայում, Շահնազար, Շիշքափա և Սարչապետ գյուղերում: Այս, ինչպես նաև հետագայում Լոռի եկած ալաշկերտցիներն ամբողջովին ենթարկվեցին լոռեցիների ազդեցությանը[163]:

XIX դ. առաջին երեսնամյակին այստեղ ավելացավ մահմեդականների թիվը, որոնք Լոռիում հաստատվեցին ռուսական ռազմական գործիչների նախաձեռնությամբ, բայց նրանց մեծ մասը հետագայում

---

155 Տես՝ Լոռու մարզ..., էջ 82:
156 Ավդալբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 17:
157 Տես՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ 33, վավ. 266, թղթ. 34, վավ. 351, 353, 354, թղթ. 40, վավ. 368, թղթ. 42, վավ. 207, թղթ. 43, վավ. 298, թղթ. 46, վավ. 257, թղթ 47, վավ. 295, թղթ. 50, վավ. 461:
158 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 39, վավ. 271:
159 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 49-50:
160 Նույն տեղում, գ. 2743, թ. 107-110:
161 Նույն տեղում, գ. 3800, թ. 49:
162 Լալաեան Ե., նշվ. աշխ., էջ 6:
163 Народы Кавказа, под. ред. Б. Гарданова, т. II, Москва, 1962, с. 441.

արտագաղթեց:

Բուն Լոռու տարածքում եղել են նաև եկվոր այլ էթնիկ բնակչությամբ գյուղեր:

1830-ական թվականներին ցարական Ռուսաստանն ծայրամասային գավառներում իր դիրքերն ամրապնդելու նպատակով գործի է դնում Հայաստանում ռուս զինվորականներ և կրոնական աղանդավորներ վերաբնակեցնելու ծրագիրը: Ցարական կառավարության նպատակն էր Երևանի և Թիֆլիսի նահանգներն իրար միացնող ուղեհանգույցներում ստեղծել ցարիզմի համար ուժեղ հենակետեր: Ռուսների բնակեցումը հիմնականում տեղի է ունենում ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակության բանուկ ճանապարհների երկայնքով: Լոռին կապող օղակ էր Հայաստանի մնացած գավառների ու Ռուսաստանի միջև, ուստի մեծ թվով ռուսներ բնակեցվեցին հենց Տաշիր-Լոռիում[164]: Հիմնվեցին ռուսաբնակ Նովոպոկրովկա (Ուրասար, 1830-ական թթ.), Պրիվոլնոյե (1840 թ), Վորոնցովկա (Տաշիր, 1844),[165] և այլ գյուղեր՝ Լոռու տարածքի ներկայիս հատկապես երեք տարածաշրջաններում՝ Տաշիրի, Գուգարքի և Ստեփանավանի: Ռուս ուղղափառները գլխավորապես Նիկողայոսյան գնդի պաշտոնաթող զինվորներն էին, թեև եղել են նաև գաղթականներ Ռուսաստանի զանազան նահանգներից:

Գերմանացիները եկել են 1818 թ.՝ Վյուրտեմբերգյան թագավորությունից, որոնց հրավիրել էր կառավարչապետ Ա. Երմոլովը: Սակայն սրանց ազդեցությունը շատ թույլ է եղել: Գերմանական գաղթավայրերից առաջինը՝ Եկատերինենֆելդը, հիմնվել է 1818 թ.՝ Թիֆլիսից 60 կմ հեռու՝ Բորչալուում[166], իսկ Ալեքսանդրսհիլֆը՝ 1857 թ.:

Հույների այն մասը, որը բնակվել է Ալավերդում և Ախթալայում,

[164] Հայթյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակիչները (1830-1920), 1989, էջ 34, Սարգսյան Հ., Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850-1900), «ԲԵՀ», 1990, N 1, էջ 115:

[165] Долженко И., Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении, Е., 1985, с. 34.

[166] Яскорский А., Яскорский Р., Штабы Причерноморя и Кавказа, Е., 2003, с. 117.



ինչպես տեսանք, եկել էր Գյումուշխանեից՝ դեռևս XVIII դ. II կեսերին, մի մասն էլ՝ XIX 30-ական թթ.՝ արևմտահայ գաղթականների հետ:

Հայ բոշաները եկել էին Էրզրումից և բնակություն հաստատել Տանձախարաբա ավերակ վայրում և կազմել մի փոքրիկ գյուղ: Քրդերը զանազան ժամանակներում զբաղվել են հովվությամբ և վերահաստատվել զանազան գյուղերում:

Շուրջ քառորդ դար տևած գաղթի շնորհիվ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանների, այդ թվում՝ Լոռու գավառի ազգաբնակչությունը զգալի համալրվեց: Նախորդ ռազմական իրադարձությունների հետևանքով բնակավայրերը լքած շատ լոռեցիներ վերադարձան իրենց հայրենի բնակավայրերը: Այս ամենի շնորհիվ 1831 թ. Լոռիում և Փամբակում կար 10636 բնակիչ, որոնցից 85,3 տոկոսը հայեր, 11,2-ը շիա թուրքեր (թաթարներ)՝ և 3,5 տոկոս-ը՝ հույներ[167]:

Լոռու գավառի բնակչության մեծամասնությունը տեղաբնակներ էին, մի մասը՝ եկվորներ: Մեծ մասը հայախոս էր, փոքր մասը՝ վրացախոս: Տեղաբնակներ էին օձնեցիք, հաղպատեցիք, սանահնեցիք, դսեղցիք, շնողցիք և այլք: Բնիկ ժողովուրդը բաժանվում էր երկու հիմնական դասակարգի. ազնվականներ և գյուղացիներ: Ազնվականներից Արղության իշխանական տոհմը բնակվում էր Սանահինում, մյուսները՝ Արդվի, Իգահատ, Անոջ և այլ գյուղերում: Նրանք իրենց բնակված գյուղերի և նրանց շրջակա հողերի սեփականատերերն էին: Արդվիում երկու ազնվականական տոհմ կար՝ 11 գերդաստանից բաղկացած. Լոռու-Մելիքյան և Քալանթարյան: Այս տոհմերը սերել են նույն գերդաստանից, որը երկար ժամանակ կառավարել է Լոռու բնակիչներին որպես մելիք:

Լոռու գավառի միատարրության և բնակչության տեղաբնիկության մասին է վկայում նաև գավառի բնակավայրերի բարբառների ներքին նմանությունը. Օրինակ՝ Օձուն, Մղարթ, Հագվի, Արդվի, Իգահատ, Անոջ և Հովհաննաձոր գյուղերի բարբառները նույնական են, քանի որ այս գյուղերից մի քանիսի բնակչությունը Օձունից էր տեղափոխվել, մյուսներն էլ՝ ինչպես Իգահատը, Արդվին և Անոջը, մոտ էին Օձունին: Շնողի և Հաղպատի բարբառները զգալիորեն նման են,

[167] Լոռու մարզ..., էջ 85:

Սանահինի և Որնակի բարբառները՝ նմանապես և այլն:

Վրացախոս բնիկ հայերը ապրել են Հյուսիսային Լոռիում՝ Բորչալուում, Բոլնիսի շրջանի գյուղերում:

Ինչպես տեսնում ենք, գավառի բնակչության թիվն ամբողջ XIX դ. ընթացքում խիստ տատանվում է, ինչը տարածաշրջանում առկա ռազմական իրադրության և վերաբնակեցումների հետևանք է: Ամփոփելով, անհրաժեշտ է նշել ևս մի կարևորն հանգամանք. Լոռու գյուղերը, մինչև վերաբնակեցումները, լինելով լիովին հայաբնակ, վերաբնակեցումների արդյունքում էլ համալրում ստանալով բացառապես հայկական բնակչություն, պահպանեցին իրենց թվական գերակշռությունը և էթնոժողովրդագրական պատկերը:

Ստորև ներկայացնում ենք Լոռու գավառի այն գյուղերը, որոնց 1831 թ. հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ կան տվյալներ.

*աղյուսակ 2*

| | գյուղը | ազգաբնակչության թիվը | | գյուղը | ազգաբնակչության թիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Օձուն | 691 | 11 | Ջալալօղլի | 148 |
| 2 | Շնող | 538 | 12 | Լեռնապատ | 143 |
| 3 | Դսեղ | 473 | 13 | Շահնազար | 123 |
| 4 | Մարց | 197 | 14 | Ծաթերը | 102 |
| 5 | Կուրթան | 187 | 15 | Գուլաքարակ | 90 |
| 6 | Լոռու բերդ | 20 | 16 | Իգահատ | 88 |
| 7 | Ջրաշեն | 185 | 17 | Վարդաբլուր | 75 |
| 8 | Արճիս | 178 | 18 | Հոբարձի | 31 |
| 9 | Շիրակամուտ | 161 | 29 | Ալավերդի | 24 |
| 10 | Չորագյուղ | 39 | 20 | Գարգառ | 158 |
| | Ընդամենը | | | | 3651 |



# ԳԼՈՒԽ Բ

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌՈՒՄ (XVIII Դ. ՎԵՐՋ - XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿ)

### ա. Արցախահայության վերաբնակեցումը (XVIII դ. վերջ)

1780-ական թթ. սկզբից հայ-վրաց-ռուսական հարաբերություններում նոր տեղաշարժեր եղան: Հայ-ռուսական հարաբերություններն Անդրկովկասում ձևավորվում էին Վրաստանի մասնակցությամբ, ուստի շրջանցել Վրաստանի դիրքորոշումն այդ հարցերում հնարավոր չէր: Հայ հասարակական-քաղաքական գործիչները Հայաստանի ազատագրական ծրագրերում էական տեղ էին հատկացնում Վրաստանի դիրքորոշմանը և փորձում օժանդակել նրա հզորացմանը:

Այդ ժամանակաշրջանը համընկավ Արցախի մելիքների և նրանց հպատակ բնակչության՝ իրենց երկրից հեռանալու հետ:

Մելիքություններն Արցախում ձևավորվել էին XVII-XVIII դարերում՝ նախկին նախարարական տների փոխարեն:

Մելիքներից Դիզակի Մելիք-Եգանյանների ծագումն առնչվում է Լոռու տարածքի հետ: Նրանք տեղափոխվել էին Արցախ Լոռի գավառի Արդվի գյուղից: Ըստ այլ տվյալների՝ նրանք բնիկ լոռեցի չէին, այլ գնացել էին Լոռի նույն Դիզակից[1]:

Արցախի մելիքները ձգտում էին թոթափել պարսիկ խաների լուծը և հիմնել անկախ հայկական իշխանություն: Այդ նպատակով նրանք XVIII դ. վերջերից սկսած՝ շարունակ օգնության խնդրանքներով դիմում էին ռուսական արքունիքին:

Ռուսական կառավարության քաղաքական շահերը պահանջում էին, որ պետության արևելյան սահմանները պարսիկների ու թուրքերի

[1] Մակար եպիսկոպոս Բարխուտարեան, Պատմութիւն Աղուանից, Վաղարշապատ, գիրք Բ, 1902, էջ 51, Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 234-239, Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 257, Սաղյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դարերում, էջ 199:

հարձակումներից զերծ պահելու համար ստեղծվեր հայ-վրացական միացյալ, ամուր պաշտպանական գոտի: XVIII դ. վերջին ռուսներն իրենց տիրապետությունը Վրաստանում հաստատելու նպատակով տեղեկություններ հավաքեցին նաև Արցախի մելիքների մասին: Վրացական արքունիքում Ռուսաստանի ներկայացուցիչ Պ. Կովալենսկին իր կառավարությանը գրում է. «Մելիքները հայոց թագավորության անկումից հետո հին ժամանակներից պահպանել են իրենց կալվածքների անկախությունը մինչև նորագույն ժամանակները»[2]: 1783 թ. ապրիլի 6-ին ռուս ռազմական և քաղաքական գործիչ, իշխան Գ. Պոտյոմկինը (1739-1791) հրամանագրեց կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար, հետագայում՝ Կովկասի գեներալ-նահանգապետ, գեներալ Պ. Պոտյոմկինին, որ նա օժանդակի հայ մելիքներին՝ Արցախում հաստատել հայկական անկախ իշխանություն: Մելիքները խոստանում էին արշավանքի դեպքում ռուսական զորքին մատակարարել պարեն և այլ պիտույքներ, ռազմական ուժերով միանալ նրանց: Փաստորեն, մելիքները մի կողմից քաղաքական բանակցություններ էին վարում ռուսական կառավարության հետ, մյուս կողմից՝ պայքար մղում արտաքին թշնամիների դեմ՝ ենթարկվելով Շուշիի Փանահ խանի և նրա որդի Իբրահիմի ճնշումներին, Աղա Մահմադ խանի հրոսակների ավարառություններին ու կողոպուտներին:

Ռուսաստանի խոստացած օգնությունը չհասավ: Ի վերջո, մելիքների մի մասն իրենց հպատակ ժողովրդի հետ գնաց մասամբ՝ Վրաստան, մասամբ՝ Գանձակ և Շիրվան[3]: Անհաջող ապստամբությունից հետո, ռուսական զորքի հետ Թիֆլիս եկան Խամսայի մելիքներից երկուսը՝ Գյուլիստանի Մելիք-Բեգլարյան Մելիք-Աբովը և Ջրաբերդի Մելիք-Իսրայելյան Մելիք-Մեջլումը: «Իսկ մեր ողորմելի մելիքն Մեջլում և Ապովն փախստական առ արքայն են»[4],- 1788 թ. հուլիսի 23-ին գրում է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը Շահամիր Շահամիր-

---

[2] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 14:

[3] Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 35.

[4] Մատենադարան, ձեռ. 2699, էջ 162ա:



յանին: Մյուս մելիքների հպատակները ևս ցրվեցին այդ տարածքներում, մի մասն էլ՝ մնաց Արցախում:

Մելիքներ Մեջլումն ու Աբովն իրենց հույսը չէին կտրում ռուսական *կառավարության օգնությունից՝ նամակներով նկարագրելով* իրենց ծանր վիճակը: Մելիքների հիմնական խնդրանքն էր օգնել իրենց՝ թոթափել Ղարաբաղի խաների լուծը, իսկ եթե պաշտպանություն ստանալ չեն կարող, ապա ընդառաջել իրենց՝ տեղափոխվել Վրաստանին ենթակա հայկական տարածքներ՝ Ղազախ, Լոռի, կամ էլ՝ Կասպից ծովի ափերը[5]: Այդ ընթացքում, Մելիք-Աբովի հպատակներից մոտ 500 և Մելիք-Մեջլումի հպատակներից մոտ 1000 ընտանիք, չկարողանալով տանել Իբրահիմ խանի բռնությունները, տեղափոխվում է Գանձակի գավառ: Մելիք-Աբովը 1790-ական թթ. սկզբներին Գանձակից գնում է Բոլնիս, ուր սկսում է իր շուրջը համախմբել ցրված բնակչությանը: Բայց այստեղ հակասություններ ունենալով վրաց իշխանների հետ՝ 1795 թ. վերադառնում է Արցախ՝ Գյուլիստան: Հետագայում նա ստիպված է լինում կրկին թողնել հայրենիքը:

Արցախի հայերի արտագաղթին մեծապես նպաստեց 1796-1797 թթ. սկսված սովն ու համաճարակը, որից փրկվելու նպատակով սկիզբ է առնում հայերի զանգվածային արտագաղթ դեպի Վրաստան, Ռուսաստան, Օսմանյան կայսրության տարածք ու Պարսկաստան: Իրենք՝ մելիքներն էին ժողովրդի մի մասին հանում երկրից և ռուսական կառավարության պաշտոնյաների ցուցումով իրենց հետ տանում Վրաստան, ուր նրանք բնակություն էին հաստատում Վրաստանում և Հյուսիսային Հայաստանում վաղուց տեղավորված իրենց հայրենակիցների մոտ: Մելիք-Ջումշուդը իր քրոջ որդու՝ Գյուլիստանի Մելիք-Ֆրեյդունի (Ֆրիդոն) հետ ևս գալիս է Վրաստան:

Պավել I-ի գահակալումից հետո ռուսական կառավարությունն առաջվա պես շարունակում էր Անդրկովկասի ժողովուրդներին խոստանալ իր հովանավորությունն ու օգնությունը: Այդ էր պատճառը, որ երբ Արցախի երկու իշխանները՝ Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը և Մելիք-Բեգլարյան Մելիք-Ֆրեյդունը ցանկություն հայտ-

---

[5] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 487-488:

նեցին իրենց հպատակներով հաստատվել Լոռիում և անբարյացակամ վերաբերմունքի արժանացան Հերակլ II-ի և նրա հաջորդ Գեորգիի XII-ի կողմից, վիրավորված վերջիններից, չկամեցան նրանց հետ այլևս բանակցություններ վարել: Տեսնելով, որ վրաց իշխանները իրենց վրա ուշադրություն չեն դարձնում, և անօթևան ժողովուրդը մատնվում է սովահարության, նրանք մտածում են օգնության խնդրանքով նորից դիմել Ռուսական կայսրությանը[6]:

1797 թ. մելիքները գնում են Աստրախան և այնտեղ սպասում հարմար պահի՝ ներկայանալու Պավել I կայսրին: 1798 թ. դեկտեմբերի 16-ին Վրաստանի դեսպան Գարսևան Ճավճավաձեն ռուսական արքունիք է ներկայացնում 11 կետից բաղկացած Գեորգի XII-ի առաջարկները: Ի թիվս այլ կետերի, առաջարկվում էր նաև թույլատրել Արցախի մելիքներին հպատակ ժողովրդով բնակվել վրացահպատակ հայկական տարածքներում:

Մելիք-Ջումշուդը Պավել կայսրին ներկայացված 1798 թ. դեկտեմբերի 23-ի խնդրագրում գրում էր. «Թողեալ զտունս, զգաւառս և զամենայն զհպատակս իմ, բռնադատեալ եղէ անտի որդով իմով Պողոսիւ և քեռորդւովն մէլիք Փիրիդոնիւ և իւզբաշի Պետրոս բէգիւն աստ ընդ իս եղելօվքն հանդերձ նմանապէս և կնաւս և այլօվք զավաքօքս գրեթէ մերկ փախչիլ առ յաղթազգեաց զօրքն ռուսաց, որ ի Վիրս,... համարձակիմ ամենահպատակաբար խնդրել, զի որպէս ես ըստ ջերմեռանդութիւն իմոյ առ կայսերութիւն ռուսաց արարի զերդումն զամէնեցուն և երդմամբ կապակցեալ եղէ ըստ կարողութեան իմոյ առնել ռուսաց զօրացն զօգնականութիւն...»[7]:

Մելիքներն ի վերջո 1799 թ. Աստրախանից գնացին Ս. Պետերբուրգ և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի միջնորդությամբ կայսերը աղերսագիր ներկայացրին, որում նկարագրելով հայերի վատթար դրությունը Ղարաբաղի խաների իշխանության ներքո, խնդրում են Արցախն ընդունել կայսերական հովանավորության և իշխանության տակ, զորք ուղարկել, որի օգնությամբ հնարավոր կլիներ Արցախից դուրս բերել մելիքների հպատակ հայերին: Խնդրագրի մեջ նաև նշվում էր. «...Շնորհ արեք հրամայելու վրաց թագավորին (Գեորգի XII-ին - Հ. Ա.), որ տա մեզ բնակութեան համար իր իշխանութեան տակ գտնվող հողը, որ հնում Գուգարք էր կոչվում, իսկ այժմ՝ Ղազախ և տարածվում է մինչև Լոռու գավառը. այս տեղերում առաջ էլ կային հայ գյուղեր, որոնք զանազան ժամանակ ավերվել են պարսիկների ձեռքով: Այս բանի համար մենք պարտավոր կլինենք ընդմիշտ ունենալ դեպի Թագավորը ոչ միայն հավատարմություն, այլ ամեն մի դեպքում պաշտպանել և օգնել նրան... Այս երկիրը թեև լեռնոտ է, բայց շատ բերրի է և հարուստ է զանազան հանքերով, ինչպես են՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, կապար և այլն, ունենալով դրա հետ և գործածութեան պիտանի շատ անտառներ, որոնցով կարելի է վերանորոգել քարուքանդ արված բերդերը և պաշտպանել Վրաց թագավորությունը...»: Ապա նշում են Լոռին Վրացական թագավորության իշխանության ներքո հայկական շրջան պահպանելու և զարգացնելու օգտակարությունը, որտեղ համախմբվելով, հայերը կարող են առևտրական կապեր հաստատել անգամ հեռավոր Հնդկաստանի հետ[8]: (Հարկ ենք համարում նշել, որ Արցախի հայերին այստեղ տեղափոխելու միջոցով Ղազախ-Լոռին վերաբնակեցնելու միտքը պատկանում էր արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանին):

Այդ ընթացքում շարունակվում էր Արցախի հայ բնակչության գաղթը դեպի վրացահպատակ հայկական տարածքներ. այդտեղ է գալիս հատկապես Գյուլիստան և Վարանդա գավառների բնակչությունը[9]: Նշենք, որ արցախցիների տեղափոխություն դեպի Լոռի տեղի էր ունեցել ավելի վաղ՝ Հերակլ II թագավորի օրոք: Այդ ժամանակ եկվորները բնակություն էին հաստատել հիմնականում Շնողում, Լոռի բերդում և այլուր:

[6] Մաղալեան Ա., Արցախի մելիքական տների տոհմածառերը, «Բազմավէպ», 2004, Վենետիկ, թիւ 1-4, էջ 99:
[7] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 494.

[8] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 163, թթ. 1-6:
[9] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 533:

1798 թ. տեղի ազգաբնակչության հետ միասին Լոռի է գալիս նաև Գանձասարի կաթողիկոս Սարգիս Հասան-Ջալալյանը[10], որին Իբրահիմ խանը հալածանքների էր ենթարկել և զրկել կաթողիկոսությունից: Գեորգին նրան է տալիս Հաղպատի վանքի միաբանության առաջնորդությունը: Քարթլիի և Կախեթի հայությունը կազմում է Հաղպատի թեմը[11]: Վրաստան էր տեղափոխվել նաև Դիզակի մելիքության վերջին ներկայացուցիչ Մելիք-Ղահրամանը, բայց հայտնի չէ, թե որտեղ էր բնակություն հաստատել[12]: Արցախի մելիքներից Մելիք-Միքել Գուրգենյանն իր գերդաստանով տեղափոխվում է Ղազախ, նրա ազգակիցների մի ճյուղը հաստատվում է Շամշուլդեում, ապա՝ տեղափոխվում Թիֆլիս և կոչվում Խանդամյան: Այս տոհմից Երվանդեսը (Վանես, Էվանես) իր խաչեղբայր իշխան Զաքարիա Արղությանցի հրավերով Թիֆլիսից տեղափոխվում է Մադան՝ նշանակվելով պղնձահանքերի աշխատանքների վերահսկիչ և որպես պարգև ստանում Սանահնածորում՝ այգի, Սանահին գյուղում՝ տնատեղ և կալվածք[13]:

Ջրաբերդի նշանավոր Մելիք-Մեջլումը շուտով մահանում է, և նրան ենթակա բնակչությունը նրա անչափահաս որդու հետ 1799 թ. բնակություն է հաստատում Գանձակում[14]:

1799 թ., երբ Արցախի Գյուլիստանի տիրակալ Մելիք-Աբովն իր ռուսական կողմնորոշման համար զրկվեց մելիքությունից և ենթարկվեց հալածանքների, նա իր հպատակ բնակչության հետ դարձյալ եկավ Բորչալու, որտեղ Գեորգի XII թագավորը Բորչալուի ուղեմասում նրան տիրակալության տվեց Աղքյորփի գյուղը. «Եւ մելիք Աբովն ևս քանի հարիւր տուն ժողովրդովք իւրովք չու արար ի տունն Վրաց և

---

[10] Սարգիս Հասան-Ջալալյանը 1794 թվականից Գանձասարի հայոց կաթողիկոսն էր: 1799 թ. Արցախի հայ մելիքների հետ գալիս է Լոռի և դառնում Հաղպատի արքեպիսկոպոս: 1806 թ. վերադառնում է Գանձասար, դարձյալ ստանձնում կաթողիկոսի պաշտոնը:
[11] Լեո, Սահմանավեճեր, էջ 51:
[12] Լեո, Հայոց պատմություն, հ. 4, Ե., 1984, էջ 31:
[13] Ռոստոմ-բէկ Երզնկեաց, Ազգաբանութիւն նախապատիւ տոհմին Երուանդեանց ի Սանահին, Թիֆլիս, 1896, էջ 9-10:
[14] АКАК, т. 1, док. 34, с. 123; Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 35.



կայ այժմ ի Պօլնիսու ձոր կոչեցեալ գաւառին»[15]:

1799 թ. փետրվարի 11-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիան պատասխան նոտա է հղում Ռուսաստանում Վրաստանի դեսպան Գարսևան Ճավճավաձեին՝ 1798 թ. դեկտեմբերի 16-ին նրա առաջադրած պահանջների քննարկման արդյունքների մասին: Գ. Ճավճավաձեին պատասխանում են, որ հայ մելիքներն իրենց հպատակ ժողովրդով կանցնեն Վրաստանի ենթակայության ներքո:

Մելիքները 1799 թ. մարտի 29-ին կրկին գրավոր դիմում են Պավել I-ին, հայտնում պարսից Ֆաթալի շահի սպառնալիքների, Արցախում և Վրաստանում տիրող ծանր կացության մասին և խնդրում արագացնել խոստացած ռազմական օգնության տրամադրումը[16]:

Դեռևս 1798 թ. դեկտեմբերի 21-ին Ս. Լաշկարյովի (ծագումով վրացի ռուսական պետական գործիչ, որը սերտ կապերի մեջ էր անդրկովկասյան գործիչների հետ)[17] և հայ մելիքների միջև կայացած զրույցի մասին հաշվետվության մեջ նշվում էր, որ այն հարցին, թե՝ «Ու՞ր կնախընտրեին տեղափոխվել. Վրաստա՞ն, թե՞ Ռուսաստան», մելիքները պատասխանեցին. «Իրենց համար միևնույն է՝ Ռուսաստանում ապրել, թե Վրաստանում, որովհետև այն նույնպես Ռուսաստանի ենթակայության ներքո է…»[18]:

Հայտնի է 1799 թ. գարնանը ռուսական արքունիք ներկայացված գրությունը՝ մելիքների խնդրագրին ընդառաջելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Այդ վավերագիրը կրում է "Замечания на прошения карабахских меликов Павлу I" («Նկատառումներ Ղարաբաղի մելիքների խնդրագրի մասին») վերնագիրը, պահպանվել է դրա՝ անստորագիր պատճենը: Ենթադրվում է, որ գրության հեղինակը նույն Ս. Լաշկարյովն է[19]: Գրության հեղինակը գտնում է, որ

---

[15] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմեդ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 97:
[16] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 501.
[17] Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրաց հարաբերությունների պատմությունից, «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Ե., 1996, էջ 175-176:
[18] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 489.
[19] Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրաց հարաբերությունների պատմությունից, էջ 175:

պետք է ընդառաջել հայ մելիքների խնդրանքին և նրանց բնակության վայր հատկացնել Վրացական թագավորության սահմաններում ընդգրկված և նոսր բնակչություն ունեցող հայկական Ղազախ գավառում, որը տարածվում էր մինչև Դիլիջանի շրջանը[20]: Նշելով հայկական այդ գավառի վերակենդանացման և աշխատասեր հայ բնակչությամբ վերաբնակեցվելու օգտակարությունը, որը հավասարապես ձեռնտու էր թե՛ հայերին, թե՛ Վրացական թագավորությանը, առաջարկվում է համոզել վրաց թագավորին՝ նշված տարածքը զիջել հայ մելիքներին[21]:

1799 թ. հունիսի 2-ին հրապարակվում է ռուսական կայսեր հրովարտակը, որով Արցախի մելիքներին թույլատրվում է հպատակ ժողովրդով բնակվել Վրացական թագավորության սահմաններում ներառված Ղազախի գավառում և պահպանել իրենց հպատակների նկատմամբ այն իրավունքները, որոնք նրանք ունեին Արցախում[22]: Հրովարտակում շեշտվում է նաև նրանց՝ ռուսական հպատակություն ընդունելու անհրաժեշտության մասին[23]: Պավել I-ը գրում է. «...Համաձայն ձեր խնդրանքի, ընդունելով ձեզ մեր բարձր հպատակության և հովանավորության մեջ, ամենաողորմածաբար բարեհաճեցինք թույլ տալ վերոհիշյալ թագավորին (Գեորգի XII-ին - Հ. Ա.), որ նա ձեզ տա բնակության համար, ձեր խնդրած Ղազախ երկիրը, եթե նա բնակեցված չէ, կամ մի ուրիշ երկիր ըստ ձեր ցանկության, և թողնել ձեր նախկին հայրենիքում ունեցած իշխանությունն ու արտոնությունները ձեր հպատակ հայերի վրա, նույնպես և այն հայերի վրա, որոնք Ղարաբաղից հոժարակամ կկամենան գաղթել ձեզ մոտ...»[24]: Այնուհետև նշվում էր, որ պետք է վերաբերվել մելիքներին ինչպես արժանավոր հյուրերի, բավարարել նրանց բոլոր կարիքները, տալ նրանց խնդրած հողերը, ազատություն, եկամուտի աղբյուրներ և այլն:

[20] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 9:
[21] Армяно-русские отношения в XVIII веке, с. 506.
[22] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 165, թթ. 1-2:
[23] Собрание актовь..., с. 32; АКАК, т. 1, док. 875, с. 636.
[24] Собрание актовь..., с. 199-200; Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 35.



Հրովարտակը գրվեց Վարանդայի իշխան Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի և Գյուլիստանի իշխան Մելիք-Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյանի անուններով:

Հիշյալ բարձրագույն հրովարտակի բովանդակությամբ կայսրը 1799 թ. հունիսի 3-ին հրովարտակ ուղղեց վրաց թագավոր Գեորգի XII-ին, որով հայտնում էր իր որոշման մասին՝ թույլատրել մելիքներին հպատակ ժողովրդի հետ վերաբնակվել Ղազախում[25]:

1800 թ. Հաղպատի վանքի արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյանն աղերսագիր է հղում Պ. Կովալենսկուն՝ խնդրելով Արցախից եկած հայ ընտանիքներին իրենց մելիքների հետ միասին մի վայրում տեղավորել. «...մէլիք Մէջլումն և մէլիք Ապօվն, փախուստ առել տիմեցին այս կողմունս, նմանապես և մեք զերծելեաք ի մահուանէ, ի փախուստ առել, քանի վարդապետօք և եղբայրներովս, եկինք, ի քաղաքս աս նորին... արքայական բարձրութեան Գիօրգի արքայիս վրաց ...ընկալաւ զմեզ սիրով և շնորհեաց մեզ զսուրբ վանքն Հաղբատ...»[26]:

Այդ ժամանակ Վրաստանում տիրում էր ներքին անկայուն իրավիճակ. շարունակվում էին կովկասյան լեռնականների հարձակումները, վրաց իշխանական տան անդամների երկպառակությունները: Գեորգիի եղբայրներից Ալեքսանդրը հակված էր դեպի պարսիկները և գործում էր հակառակ ռուսների և իր եղբոր: Ուստի Գեորգին նպատակահարմար համարեց հայ մելիքներին և նրանց հպատակներին բնակության վայր հատկացնել Վրացական թագավորությանը միացված Ղազախի գավառում, քանի որ մելիքները կարող էին իր դաշնակիցները լինել: Բացի այդ, նման խնդրանքը համապատասխանում էր Աղա Մահմադ խանի ավերիչ արշավանքների հետևանքով մասամբ մարդաթափ եղած Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի հետագա տնտեսական զարգացման շահերին:

Գեորգի XII-ը Մելիք-Ջումշուդին ուղղված 1800 թ. փետրվարի 29-ի հրամանագրում նշում է, որ կայսրն իրեն հանձնարարել է

[25] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 164ա, թթ. 1-2:
[26] Նույն տեղում, թղթ. 240, վավ. 41, թ. 1:

Արցախից եկած վերաբնակիչներին բնակության վայրեր հատկացնել Լոռիում և հարակից շրջաններում[27]: Նույն հրամանագրով Մելիք-Ջումշուդն իր պահանջած Ղազախի գավառի փոխարեն ստացավ Լոռու գավառը[28]: Հրովարտակում նշվում է, որ Լոռին տրվում է որպես հավերժական տիրույթ՝ իրեն պատկանող ամբողջ գյուղերով, բնակիչներով ու հողերով[29] և ներկա սահմաններով, այսինքն՝ Դեբեդ գետի կիրճից մինչև Օձուն գյուղը, Շնող և Դսեղ գյուղերը, Լոռի ամրոցն իր հարակից շրջաններով և Բորչալուի մի մասը[30]: Բայց որովհետև Լոռին արդեն ընծայվել էր Շահամիրյանին, ուստի Գեորգին պայման է դնում, որ այդ հողերը կմնան Մելիք-Ջումշուդի տիրապետության տակ, մինչև Շահամիրյանի կամ նրա ժառանգների գալը, ինչի դեպքում Լոռու փոխարեն մելիքին կշնորհվի մեկ այլ տարածք[31]: Իսկ եթե Շահամիրյանի ժառանգների կողմից հետագայում պահանջ չներկայացվի, այդ տարածքները մշտապես կմնան Մելիք-Ջումշուդի տիրապետության տակ[32]: Մելիքն իր նստավայր է ընտրում Դսեղ գյուղը, որն ապահով և հարմար աշխարհագրական դիրք ուներ: Այդ ժամանակ Դսեղում Արցախից վերաբնակվածներն այնքան շատ էին, որ վրաց թագավորը նրանց անվանում է «հասարակություն»[33]: Շնորհագրով վրաց թագավորը Մելիք-Ջումշուդին տալիս է մի շարք արտոնություններ՝ միաժամանակ նշելով. «...Այսուհետև տերը լինել Ղարաբաղի հասարակության, որն ապրում է Դսեղում»[34]:

Մելիք-Ջումշուդն իր հպատակներին բերելով Լոռի՝ բաշխում է

---

[27] Ավետյան Վ., նշվ. աշխ., էջ 34:
[28] Լեո, Հայոց պատմություն, հ. 4, էջ 30:
[29] АКАК, т. 2, Тифлис, 1868, док. 383, с. 205.
[30] Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 35-36; АКАК, т. 1, док. 877, с. 637, Армяно-русские отношения в XVIII веке, с. 527, Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, էջ 7:
[31] АКАК, т. 1, док. 877, с. 637, Չոքանյան Ա., Հայ-ռուս-վրաց հարաբերությունների պատմությունից, էջ 178-179, Кавказская старина, 1872, N 2, с. 36-37.
[32] Նույն տեղում, с. 35-36, Ավետյան Վ., նշվ. աշխ., էջ 35:
[33] Քոչարյան Ս., նշվ. աշխ., էջ 49:
[34] Кавказская старина, 1872, N 2, с. 36.



գավառի գյուղերում[35]: Այստեղ վերաբնակիչները ձեռնամուխ են լինում տնտեսական գործունեության ծավալմանը:

Մելիք-Բեգլարյան Մելիք-Ֆրեյդունին բաժին ընկավ Բորչալուի մնացած մասը, Օձունը, Ղազախը՝ Աղջա Կալա բերդով, Մելիք-Աբովը (Մելիք-Ֆրեյդունի հորեղբայրը) ստացավ Բոլնիսն ու Դաղեթը:

Ըստ աղբյուրների, Արցախի Խաչեն գավառի Սեյիդաշեն գյուղի բնակիչները գալով Բորչալու, տեղավորվում են Ղոզոլլու գյուղի մոտ գտնվող աղբյուրի մոտ, որը կոչվում է Տոնին աղբյուր, ապա՝ այստեղից տեղափոխվում Բոլնիս, իսկ մի մասը փոքր-ինչ ավելի ուշ գնում է Դաղեթի շրջան և բնակվում այնտեղ[36]: 1789 թվականը գրված է Դաղեթ-Խաչենի գերեզմանների պարսպի քարի վրա որպես արցախցիների այստեղ գալու թվական[37]:

1790-ական թթ. հետո էլ շարունակվել է արցախցիների հոսքը Լոռի: Նրանք հիմնականում բնակվել են այստեղ արդեն հաստատված մելիքների կառավարման ներքո գտնվող տարածքներում՝ հիմնականում Մելիք-Ջումշուդին պատկանող Շնող և Դսեղ գյուղերում և Մելիք-Ֆրեյդունին ենթակա Օձունում[38]:

Հետագայում մելիքները ձեռք բերեցին նոր հողեր՝ ըստ իրենց հպատակների թվաքանակի ավելացման, քանի որ Արցախի հայ բնակչության մի զգալի մասը, որ վերաբնակեցման ժամանակ գնացել էր Երևանի խանություն և բնակություն հաստատել այնտեղ, տեղափոխվում էր Հյուսիսային Հայաստան՝ մելիքների մոտ[39]: 1800 թ. օգոստոսի 12-ին Արցախից Երևանի խանությունում հաստատված վերաբնակիչները Գեորգի XII-ից և Պ. Կովալենսկուց Մելիք-Աբովի տիրույթներում վերաբնակվելու թույլտվություն են խնդրում[40]: Կովալենսկուն ուղղված Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի 1800 թ.

---

[35] Քոչարյան Ս., նշվ. աշխ., էջ 49:
[36] ՀՀ ՀԱԻ, ազգագրության բաժին, Մինասյան Դ., Վրաց. ՍՍՀ Բոլնիս-Խաչենի ազգագրական նյութեր, գործ 103, 1970, էջ 1-2, 4:
[37] Նույն տեղում, էջ 1, նաև՝ Մաղալյան Վ., Դաղեթ-Խաչեն, էջ 53:
[38] Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 36; Армяно-русские отношения..., т. IV, с. 527.
[39] Մաղալյան Վ., Դաղեթ-Խաչեն, Ե., 1999, էջ 69:
[40] Присоединение..., т. 1, док. 5, с. 37-38.

սեպտեմբերի 2-ի խնդրագրում նշվում է, որ Արցախից Փամբակ փախած ընտանիքների թիվը հասել է 300-400-ի: Մելիք-Աբովը նրանց իր հպատակության տակ առավ և մի փոքր մասին զիջեց Մելիք-Ջումշուդին, ինչի դեմ վերջինս բողոքում է և պահանջում իրեն վերադարձնել իր հպատակներին: Վերոհիշյալ խնդրագրի մեջ նա գրում է. «...Ձերով օգնականութեամբն կարողանայցէաք կերպիւ իմիք, զժողովուրդն մեր, որք են ի Ղարաբաղ հանել և բերել աստ: Իսկ այժմ… յերևան եղեալ մեր Ղարաբաղու ռայաթ, մինչև գրծ (300-400) տուն փախուստ առեալ ի պարսից, ինքնայօժար կամօք ի մերս անուն եկին ի Փամբակ…: …Այսմ միջոցի մէլիք Ապօվն և Սամն գնացեալ ի Փամբակ, յիշեալ ռայաթն քօչացնում են ամէնն իւրեանց կողմն քաշում տանում:... Յաղագս խնդրեմք հրամայես ամէն մելիք իւրեան ռայաթին և երկրացւոյն տիրեսցէ...»[41]:

Գեորգին հպատակներին վերադարձնելու փոխարեն, Բորչալուի Խան-արխ ջրանցքը ժամանակավորապես տվեց Մելիք-Ջումշուդին[42]: Բայց Գեորգիի մահից հետո արքայազն Դավիթը ջրանցքը խլեց Ջումշուդից:

Երևանի Մահմադ խանն ամեն կերպ խոչընդոտում էր արցախցի հայերի՝ Երևանից հեռանալուն: 1800 թ. Վրաստանի կառավարիչ Պ. Կովալենսկուն ուղղած իր նամակում նա պահանջում է վերադարձնել իր խանության սահմանները լքած մելիքներին[43]:

Փախստական ընտանիքներից բաժին էր պահանջում նաև Հաղպատում նստած Գանձասարի նախկին կաթողիկոսը՝ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը: Երբ 1801 թ. պարսից Ֆաթալի շահը հարձակվեց Երևանի վրա, քաղաքի շրջակայքում տեղավորված 330 հայ ընտանիքներ՝ Արցախի մելիքների հպատակներից, փախան Լոռի՝ մելիքների մոտ: Նրանց թվում կային նաև 80 կամ 90 ընտանիք խաչենցիներ, որոնք ժառանգաբար Հասան-Ջալալյանների հպատակներն էին եղել: Սարգիս արքեպիսկոպոսը 1801 թ. մայիսի 29-ին

[41] Նույն տեղում, док. 6, с. 39.
[42] Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 232:
[43] Присоединение..., т. 1, док. 11, с. 42-43.



Կնորինգին խնդրում է այդ ընտանիքները տալ իր եղբորորդի Աստվածատուրին[44]: Այս ձևով նա փորձում էր Լոռիում վերականգնել Խաչենի Հասան-Ջալալյանների մելիքությունը[45]: Մելիք-Աբովի 1802 թ. սեպտեմբերի 9-ի գրությունից տեղեկանում ենք, որ նա և Մելիք-Ջումշուդը Արցախից և Երևանից Հյուսիսային Հայաստան տեղափոխված և իրենց հպատակության տակ գտնվող խաչենցի ընտանիքներին հանձնում են Սարգիս վարդապետին, որի նախնիները ժառանգական իրավունք են ունեցել այդ ընտանիքների վրա[46]:

Լեոն գրում է. «Այսպիսով Սոմխեթը դառնում էր մի փոքրիկ Ղարաբաղ, մելիքական երկիր»[47], ի նկատի ունենալով, որ այստեղ էին հաստատվել Արցախի մելիքներն ու նրանց հպատակների մեծ մասը:

Արցախի հայերն ու նրանց առաջնորդած մելիքները Լոռում հայտնվեցին անբարենպաստ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում: Կոպտորեն խախտվում էին նրանց հողատիրական իրավունքները: Քանի որ Ռուսաստանն արդեն հաստատել էր իր տիրապետությունը Վրաստանում և ցանկանում էր գրավել ամբողջ Անդրկովկասը, մելիքները քանիցս խնդրանքներով դիմում են Անդրկովկասում ռուսական կառավարության ներկայացուցիչներին և ռազմական գործիչներին, նաև ռուսական արքունիքում հեղինակություն վայելող հայազգի քաղաքական գործիչների միջնորդությանը՝ իրենց իրավունքների պահպանման համար, բայց այդ փորձերն իզուր են անցնում: Մելիք-Ջումշուդը 1801 թ. մայիսի 10-ին Պետերբուրգ՝ աղա Մինաս Լազարյանին ուղղած իր խնդրագրում գրում է. « …վրաց արքայն Գէօրգին ամրոցն Լոռոյ իւրեան պարագայ գիւղօրէիւք և ժողովուրդովք շնորհեաց մեզ հաստատուն գրով…: Եւ մեք թէ ի վերայ ամրոցին Լոռոյ և թէ զժողովուրդսն Փամբակու անդ բերելոյ և ի տեղիս իւրեանց կացուցանելոյ յոլով ծախս արարաք: Եւ այսմ միջոցի զգալուստ զօրացն ղզլպաշից տարածեցաւ, որոյ պատճառաւ մեք այս

[44] АКАК, т. 1, док. 883, с. 638.
[45] Սաղալյան Ա., Վավերագրեր Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանի գործունեության մասին, «ԲՀԱ», 2008, N 2, էջ 4:
[46] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 42, թ. 1-2:
[47] Լեո, Հայոց պատմություն, հ. 4, էջ 30:

կողմն եկինք և ժողովուրդքն մեր գնացին ի Փամբակայ ձոր...: Ուստի խնդրեմ ի ձերոց գերազանցութենէ հրամայել զի ուր և ժողովուրդքն մեր են ի մէջ նոցայ մարդ կացուսցուք որպէս օրէնն է հպատակելոցն այնպէս ծառայեսցեն մեզ և թէ ողորմութեամբն աստուծոյ ի Լոռի ռուսաց զօրք բանակեսցին յայնժամ զժողովուրդսն անդ բերցուք և կացուսցուք իւրաքանչիւր տեղիս մէլիք Ջամշիդ մէլիք Շահնազարեան»[48]:

1801 թ. մայիսի 26-ին դարձյալ Լազարյանին ուղղված խնդրագրի մեջ Մելիք-Ջումշուդը խնդրում է վերականգնել իր իրավունքները Լոռի ամրոցի և նրան պատկանող բոլոր գյուղերի նկատմամբ[49]: 1803 թ. փետրվարի 27-ի խնդրագրում Մելիք-Ջումշուդը գլխավոր հրամանատար, գեներալ Պ. Ցիցիանովին խնդրում է վերադարձնել այն ընտանիքներին, որոնք մնացել էին Փամբակի աղալարների տիրապետության տակ[50]: Իսկ 1803 թ. մարտի խնդրագրում խնդրում է փոխհատուցել Լոռի ամրոցի համար կատարած իր ծախսերը, նշելով, որ ամրոցը Վրաստանի կառավարության 1801 թ. դեկտեմբերի 12-ի բարձրագույն հրամանագրով դասվել է գավառական քաղաքների շարքին, ինչի հետևանքով այն ամբողջովին ընկնում է պետական վերահսկողության տակ, իսկ հողերից ստացվող եկամուտներից և գյուղացիներից գանձվող հարկերից նա երկու տարի ոչինչ չի ստացել, այդ ամենը հավաքել են Փամբակի աղալարները: Մելիքը խնդրում է աղալարներից վերադարձնել այն ամենը, ինչ նրանք վերցրել են իրեն պատկանող գյուղացիներից: Մելիք-Ջումշուդը դժգոհում էր նաև, որ իր ստացած հողերն իրեն բավարար եկամուտ չեն տալիս[51]: Պ. Ցիցիանովն, ի պատասխան Մելիք-Ջումշուդի խնդրանքների, գրում է, որ Պավել I-ի կողմից տրված շնորհագրում նշված է միայն այն հողի մասին, որը մելիքը խնդրել էր, այսինքն՝ Ղազախի, այլ ոչ թե Լոռու, իսկ Բորչալուի ջրանցքը, որը կոչվում է

---

[48] Присоединение..., т. 1, док. 21, с. 51-52.

[49] Նույն տեղում, док. 23, с. 52.

[50] Նույն տեղում, док. 128, с. 161-162.

[51] Նույն տեղում, док. 135, с. 167.



խան-արխ, նրան տրված է ժամանակավոր և պայմանով, երբ խաղաղություն լինի, նրան կհատկացվի մեկ ուրիշը:

Մելիքները պարտավորվում էին գյուղացիական կարգախմբեր տրամադրել Ալավերդու և Ախթալայի պղնձահանքերի շահագործման օժանդակ աշխատանքների, ինչպես նաև՝ լծկաններ՝ ռուսական զորքին պարեն հասցնելու համար[52]: Աշխատանքների հաջող կազմակերպման նպատակով 1803 թ. փետրվարի 18-ին հետևեց գլխավոր հրամանատար Ցիցիանովի կարգադրությունը: Եթե մինչ այդ Հերակլ II-ի և Գեորգի XII-ի հրամանով գործարանային աշխատանքների համար ամեն ամիս ուղարկվում էր 100 մարդ Ղազախից, ինչպես նաև՝ 40 մարդ՝ Շուլավերից, 10-ը՝ Օձունից և Դսեղից, 10-ը՝ Շնողից, 2-ը՝ Հաղպատից և 20-ը՝ Մելիք-Աբովի հպատակներից, ապա այժմ, աշխատանքների ընդլայնման համար պահանջվում էր լրացուցիչ 100 մարդ, որոնցից 45-ը պարտավոր էին տալ Փամբակը և Լոռին, 12-ը՝ Պրոտոմբերգը, 8-ը՝ Շնողը, 6-ը՝ Օձունը և Դսեղը, 5-ը՝ Մարցը, 7-ը՝ Շամխորը, 5-ը՝ Երևանը[53]:

Տնտեսական աննպաստ պայմաններից բացի, մելիքներին սպառնում էր նաև արտաքսման վտանգը, եթե նրանք բավարար չափով հարկ չվճարեին պետությանը: 1805 թ. Ցիցիանովը մելիքներին գրում է. «...եթէ ձեր բերած գերդաստաններն այս իսկ աշնանը չվարեցին այնքան երկիր, որ հետևեալ տարին կարելի լինի առատութեամբ հաց ծախել, այն ժամանակ իմացէք, որ հետևեալ գարնան կը հալածեմ նոցա այս տեղից ոչ միայն դէպի Երևանը, այլև նոյն իսկ Պարսկաստան, որովհետև Վրաստանը պարտաւոր չէ ծրիակերներին սնուցանելու»[54]:

Բացի բազմաթիվ հարկերից ու տուրքերից, մելիքների ու նրանց հպատակների դրությունը վատթարանում էր ռազմական գործողությունների, պարսկական զորաբանակների հաճախակի կրկնվող արշավանքների ու ասպատակությունների պատճառով: Արցախցի

---

[52] Присоединение..., т. 1, док. 89, с. 122-123.

[53] Նույն տեղում, док. 125, с. 159.

[54] Երիցեան Ալ., Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետութիւնների մէջ, «Փորձ», Թիֆլիս, 1877-1878, N 2, էջ 392:

վերաբնակների համար պատուհաս էին դարձել Փամբակի մահմեդականները (թաթարները), որոնք դժգոհ լինելով ռուսական կառավարությունից, մեծ խմբերով փախչում էին Երևանի խանություն: Հեռանալով՝ թաթարներն իրենց հետ տանում էին այս տարածքների հայերից հափշտակած անասունները, գույքը:

Կյանքի ծանր պայմաններ ստեղծվեցին հատկապես Երևանի խանությունից Հյուսիսային Հայաստան՝ իրենց մելիքների մոտ տեղափոխված մեծաթիվ բնակչության համար[55]: Ցիցիանովը 1805 թ. օգոստոսի 28-ին պահանջում է Հովհաննես արքեպիսկոպոսից այդ հայերից մի քանի հարյուր տուն ուղարկել Ելիզավետպոլ[56]: Նրանք իրենց ապրուստը հոգում էին անտառանյութ արտահանելով հարևան Կարսի փաշայություն, որտեղից փոխարենը ներմուծում էին հաց: Տեղական իշխանությունների մեղքով այս վերաբնակիչներին հող չէր հատկացվել, իսկ երբ բռնկվեց 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը և կապերը Կարսի հետ ընդհատվեցին, նրանք, զրկվելով իրենց եկամուտի միակ աղբյուրից, հայտնվեցին տնտեսական ծանր դրության մեջ: Այդ պատճառով Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ի. Գուդովիչը ևս կարգադրեց Վրաստանի կառավարիչ Պ. Լիտվինովին Երևանի խանությունից այստեղ տեղափոխված արցախցիներին վերաբնակեցնել Ելիզավետպոլի գավառում[57]:

Այս տեղաշարժերն ավելի էին հյուծում ու քայքայում տարագիր ազգաբնակչությանը: Այդ ամենին գումարվում էր վրաց կալվածատերերի, գյուղական մելիքների և այլ պաշտոնատար անձանց չարաշահումները: «Վրաց իշխանները ստիպում էին նրանց, որ ճորտ գրվեն, որպեսզի փոխարենը կերակրեն նրանց»[58]:

Փաստորեն, մելիքները, իրենց ցանկության հակառակ, չկարողացան պահպանել նախկին ազատությունն ու իրավունքները, օրենքներն ու սովորույթները, ինչպես նշված էր Պավել I-ի կողմից վրաց թագավորին ուղղված հրովարտակում: Հրովարտակի պայմանները խախտվեցին. նախ Հերակլ, ապա՝ Գեորգի թագավորները սահմանափակվեցին լոկ որոշ կետերի իրագործմամբ[59], իսկ մելիքները, հաճախակի հակասություններ ունենալով վրաց իշխանների հետ, մտածում էին Արցախ վերադառնալու մասին:

1805 թ. օգոստոսին Մելիք–Ջումշուդը, Գեորգի XII-ի մահից հետո, հիասթափվելով տեղային անախորժ հանգամանքներից, որոշեց Լոռին վաճառել և վերադառնալ Արցախ՝ Վարանդա[60]: 1805 թ. օգոստոսի 22-ին Պ. Ցիցիանովը Քաղաքացիական էքսպեդիցիային ուղղված գրության մեջ նշում է, որ ըստ ֆինանսների նախարար Ա. Վասիլևի՝ իրեն ուղղված գրության՝ «...ոչ որդին, ոչ թոռը Շամիր աղայի, որոնց տրվել էր հիշյալ հողը՝ մինչև Մելիք-Ջումշուդին պատկանելը... մինչև այժմ չեն հայտնվել և հպատակության երդում չեն տվել, նույնիսկ հայտնի չէ, կենդանի են նրանք, թե ոչ, ինչի համար և իրենց իրավունքը՝ այդ հողը ստանալու, կորցրել են, և ոչ մի արգելք չկա այդ ամրոցը գնելու համար»[61]: Մելիք-Ջումշուդը դիմեց Ա. Մուսին-Պուշկինին, խնդրեց որպես փոխհատուցում Լոռու համար՝ Խան-արխ ջրանցքը: Մուսինը չհամաձայնվեց և շահավետ համարեց գնել Մելիք-Ջումշուդից Լոռին՝ գնահատելով այն 6000 ռուբլի[62]: Պ. Ցիցիանովը ձգտում էր զանազան պատճառաբանություններով ապացուցել, որ Լոռին Մելիք-Ջումշուդի սեփականությունը չէ, և ըստ այդմ՝ նա այն վաճառելու իրավունք չունի[63]: Նա իր զեկուցագրում՝ կայսրին գրում է.

[55] Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 44:
[56] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 16, վավ. 75, թթ. 1-2:
[57] Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 44:
[58] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 533:



[59] Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 34.
[60] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 550:
[61] Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 37; Присоединение..., т. 1, док. 254, с. 320-321.
[62] Кавказская старина, N 2, с. 36-37; АКАК, т. 2, док. 383, с. 205.
[63] Թեև փաստեր կան, որ Շահամիրյանի ժառանգները՝ Հովհաննեսը և Նազարը, 1806 թ. հունիսի 30-ին Մադրասից Վրաստանի կառավարչին ուղղված իրենց նամակում խնդրում են պարզել, որ Լոռին իրոք պատկանում է հանգուցյալ Շահամիրյանի ժառանգներին: Հայտնում են, որ այդ մասին ունեն համապատասխան վավերագրեր և խնդրում են պաշտպանել իրենց իրավունքները Լոռու նկատմամբ և հրամայել «այժմէն երթալ և հաստատել զաղխս մեր և զկարասիս (եթե տէր կամիցի) ի քաղաքին Լոռու ընտանեօք և որդովք մերովք, լինելով քաղաքն այն մասամբ իմիք մեր երկիր մայրենի յաշխարհին Հայաստանի, որ այժմ գտանի ընդ բարեխնամ կառավարութեան ձերումդ գերազանցութեան...»: 1820 թ.

«Այնքանով, որ այդ հողը Գեորգիից մելիք-Ջումշուդին չի տրվել մեկընդմիշտ, այլ մինչև Շահամիր-աղայի որդու կամ թոռան վերադարձը, որին այդ հողը տրվել է նույն թագավորից, և նրանք լինելով կենդանի, կարող են պահանջել իրենց տիրույթը, ապա Մելիք-Ջումշուդն իրավունք չունի նշված հողը վաճառել, քանզի Շամիր-աղայի հետնորդներն իրենց իրավունքները չեն զիջի»[64]: Ֆինանսների նախարար Ա. Վասիլևի 1805 թ. մայիսի 22-ի կարգադրությամբ իրավունք տրվեց Մելիք-Ջումշուդին վաճառել Լոռին, իսկ տեղական իշխանությանը հրամայվեց կալվածագիրը հաստատել[65]:

Մելիք-Ջումշուդի այդ քայլը հետևանք էր անմիջապես վրացական կառավարության և գործարանային գերատեսչությունների տնտեսական ճնշումների: Լոռին վաճառելուց հետո նույն 1805 թ. Մելիք-Ջումշուդը թողեց Վրաստանը և իր հպատակների հետ վերադարձավ Արցախ:

1805 թ., երբ ռուսները նվաճում են Ղարաբաղի ու Շաքիի խանությունները, Ղազախ և Լոռի վերաբնակված արցախցիների մեծ մասը վերադառնում է: Մելիք-Աբովը ևս խնդրում է, որ թույլատրվի իրենց վերադառնալ Արցախ[66]:

Հետագայում, Թիֆլիսից Լազարյանին հղած նամակներում Մելիք-Ջումշուդը բազմիցս նշում է մելիքների նկատմամբ վրացական կառավարության տնտեսական և քաղաքական ճնշումների, իրենց իրավունքների կրճատման, Ցիցիանովի անբարեհաճ վերաբերմունքի, ռուսական կառավարությանը մելիքների նվիրվածության, բայց ոչ

---

սեպտեմբերի 14-ին Հովհաննես և Նազար Շահամիրյանները նույն բովանդակությամբ գրություն են հղում էջմիածնի միաբան Թովմաս վարդապետին, իսկ 1825 թ. հունիսի 29-ի գրության մեջ խնդրում են Եփրեմ կաթողիկոսին, հետաքրքրվել Լոռին որպես հայրենական կալվածք Հերակլ արքայի կողմից իրենց տրվելու գործով, տես՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 17, վավ. 68, թղթ. 51, վավ. 41, թղթ. 156, վավ. 12:

64 Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 37.

65 АКАК, т. 2, док. 907, с. 214.

66 Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 38-39.



մեկին կայսերական պարգևների չարժանացնելու մասին[67]: Մելիք-Աբովը ևս 1807 թ. նոյեմբերի 23-ի՝ Լազարյանին հղած նամակում պատմում է Ռուսաստանին մատուցած իր ծառայությունների մասին, թե ինչպես ինքը Բոլնիսը մաքրեց թշնամիներից և թե ինչ աղքատ և թշվառ վիճակում են գտնվում իր հպատակները: Լազարյանի այն հարցին, թե ինչո՞ւ հայ իշխանները վրացի իշխանների նման պարգևված չեն ռուսական կառավարության կողմից, Մելիք-Ջումշուդը 1808 թ. դեկտեմբերի 2-ի նամակում պատասխանում է. «...մեք մելիքանքս Խամսայու առաւել քան զնոքա յատկացաք ի մէջ պատերազմի և առաւելագոյն պարգևաց և շնորհաց ևս էաք արժանի, սակայն արմատացեալ նախանձ, ի սիրտ հանգուցեալ կնեազ Ցիցիանովի առ ազգն հայոց ոչ թոյլատրեցին նմա բացայայտել առ ամենագթած կայսերն զյոգնաւէտ ծառայութիւնս և զջանս մեր, զորս ցուցաք որպէս ի ժամ առմանն Գանձակու, այնպէս և յուղևորակս Երևանու և Շիրուանու...»[68]:

Մելիք-Աբովի մահից հետո մելիքների դերն ու նշանակությունը Վրաստանում աստիճանաբար նվազեց: Մելիքների, ինչպես նաև նրանց ծառանգների իրավունքները սկսեցին սահմանափակվել, ապա աստիճանաբար վերացվել[69]: Այս ամենի պատճառը ռուս կառավարիչների և վրացի ազնվականների կամայականություններն էին, ինչի դեմ բողոքում էին մելիքները՝ շարունակ դիմելով ռուսական կառավարությանը: Այնինչ, աղբյուրներն ապացուցում են մելիքների՝ ռուսական կառավարության հանդեպ ունեցած նվիրվածության մասին[70]:

Արցախի հայերը Լոռիում երկար չմնացին (մոտավորապես՝ 12

---

67 Տես՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 98, վավ. 230ա, թ. 1-3, Ե. Երիցյանի Ֆ., թղթ. 154, վավ. 244, էջ 1-4, թղթ. 156, վավ. 337, էջ 1-4:

68 Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ե., Թիֆլիս, 1902, էջ 494:

69 АКАК, Тифлис, 1870, т. 4, док 53, с. 53; Кавказская старина, Тифлис,1872, N 2, с. 38-39.

70 Տես՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 18, վավ. 160, թթ. 1-8, թղթ. 98, վավ. 230ա, թ. 1-3, թղթ. 240, վավ. 168, թ. 1, վավ. 170, թ. 1, АКАК, т. 1, док. 47, с. 134; Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 36, 41-42.

տարի՝ 1797-1809 թթ.): Տեղափոխվելով Վրաստանին ենթակա հայկական տարածքներ, մասնավորապես՝ Լոռի, նրանք նպաստեցին տեղի տնտեսական կյանքի աշխուժացմանը, իրենց ռազմական ուժերով զորավիգ եղան Վրաստանի սահմանների անվտանգության ապահովմանը, բայց ըստ արժանվույն չգնահատվեցին ոչ վրաց ազնվականության, ոչ էլ ռուս աստիճանավորների կողմից: Հայտնի է Պ. Ցիցիանովի 1804 թ. հունվարի 20-ի զեկուցագիրն Ալեքսանդր I-ին, որում նշվում էր. «Որովհետև նորամբարձ հայազգի իշխանները և Ղարաբաղից դուրս եկող մելիքները իւրեանց հարստութեան պատճառով թագավորներից յարգվում էին, իսկ վրացի իշխանները յատկապէս առաջնակարգ լինելով երբէք ոչ հաւատարմութիւն և ոչ յարգանք ունէին դէպի դոցա, ուստի համարձակվում եմ հաստատապէս ամենախոնարհաբար ծանուցանել Ձ. Կ. Մեծութեան, որ մի այսպիսի հաւասարութիւն հայազգի և վրացի իշխանների մէջ վերջինների համար վիրաւորիչ կըլինի...»[71]:

Վրաց ազնվականությունը չէր կարող հաճությամբ վերաբերվել հայ նոր վասալներին, որոնք ճորտատիրական սկզբունքով չէին տիրում իրենց հպատակներին: Մելիքների հաջողությունները, նրանց նկատմամբ ռուս որոշ զինվորական հրամանատարների վստահությունը, պարգևատրումները բացասական տրամադրվածություններ էին առաջացնում վրաց բարձրաստիճան իշխանավորների ու ռազմական գործիչների մոտ:

Մելիքներն այստեղ չունեին կյանքի ու գույքի ապահովություն: Նրանք չկարողացան միանալ, հայությանը համախմբել իրենց նոր բնակավայրերում: Մելիքները վիճում էին հպատակների, հողերի համար, ինչը, բարեբախտաբար, զինված ընդհարումների չհանգեցրեց: Մելիք-Ջումշուդն ու Մելիք-Ֆրեյդունը սկզբում ունեին հազիվ հարյուրական հպատակ ընտանիք[72], նախկին հպատակներին ամբողջությամբ իրենց մոտ վերաբնակեցնել չհաջողվեց: Արցախից նոր հպատակներ դուրս բերել չկարողացան. դա կարելի էր անել զինված

[71] Երիցեան Ալ., նշվ. աշխ., «Փորձ», Թիֆլիս, 1877-1878, N 2, էջ 390:
[72] АКАК, т. 1, док. 34, с. 124.



ուժով: Շամախիի և Նուխիի խանություններում գոյացել էին Արցախից եկածներից խոշոր համայնքներ, բայց Ջումշուդն ու Ֆրեյդունը չկարողացան ընտանիքներ տեղափոխել Լոռի նույնիսկ այդ գաղութներից. նրանց մեծ մասը վերադարձավ Արցախ, մյուս մասը հեռացավ Շամշադին[73], ինչպես նաև այլ շրջաններ:

Այսպիսով, Արցախից եկած ժողովրդի մի փոքր մասը միայն մնաց Լոռիում, որն էլ 1812 թ. դարձյալ վերադարձավ Արցախ: Մելիք-Բեգլարյաններից ու նրանց հպատակներից էլ մնացին քչերը՝ հիմնականում Դաղեթ-Խաչեն ու Բոլնիս-Խաչեն գյուղերում[74]: Լոռու գյուղերում մնացած և հաստատված ոչ ստվար արցախցիները, ընկնելով կայուն ավանդույթներ ունեցող միջավայր, ենթարկվեցին բնիկների ազդեցությանը, կորցրին իրենց բարբառային և սովորութային առանձնահատկությունները:

## բ. Ժողովրդագրական գործընթացները Լոռու գավառում (XIX դ. առաջին երեսնամյակ)

Դարասկզբին Արևելյան Վրաստանում հաստատվելը ռուսական դիվանագիտությանը հնարավորություն տվեց նախապատրաստել իր սահմանների ընդլայնման ծրագիրը, որի իրականացման ճանապարհին ռազմական միջոցներին զուգընթաց կարևորվում էր ժողովրդագրական քաղաքականությունը: Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին մեծ ոգևորությամբ ընդունվեց հայության կողմից, ինչը և բխում էր ցարիզմի շահերից:

Անդրկովկասում իր դիրքերի ամրապնդման, ուժեղ սահմանային գոտու ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ Ռուսական կայսրությունը ձեռնամուխ եղավ նորանված տարածքների վերաբնակեցման

[73] Մաղալյան Վ., նշվ. աշխ., էջ 77:
[74] Մաղալյան Ա., Տոհմածառերի ուսումնասիրության նշանակությունը պատմական ժողովրդագրության բնագավառում, «Հայոց պատմության հարցեր», 2005, N 5, էջ 42:

գործին: Դրանք նախատեսվում էր վերաբնակեցնել առաջին հերթին Արևմտյան Հայաստանից, նաև` Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներից եկած վերաբնակիչներով:

Պավել I կայսրը 1800 թ. հունվարի 23-ին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Կ. Կնորինգին տրված հրահանգում պահանջում էր երկրամասին տիրելու գործում նախապատվությունը տալ կամավոր հպատակություն ընդունելու, այդ երկրամասի ժողովուրդներին դեպի Ռուսաստան կողմնորոշելու գործելակերպին[75]: Կ. Կնորինգին հանձնարարված քաղաքականությունը նպատակ էր հետապնդում` այդ տարածքներից բնակիչներ ներգրավել Վրաստանի սահմաններում, որը մասամբ մարդաթափ էր եղել կովկասյան լեռնաբնակների արշավանքների և Աղա Մահմադ խանի հարձակումների հետևանքով: Լոռին արևմտահայերի, Ջավախքի, Արցախի հայության հաշվին վերաբնակեցնելը ցարիզմի գաղութային քաղաքականության մասն էր կազմում, և այդ գործին անմիջական մասնակցություն են ունենում ռուսական բանակի ռազմական գործիչները (Պ. Ցիցիանով, Ա. Տորմասով, Ի. Գուդովիչ, Ա. Երմոլով, Ի. Պասկևիչ և այլք):

Դարասկզբի պատերազմներն ուղեկցվեցին հայ բնակչության տեղահանություններով ու բնակավայրերից կամավոր հեռանալով: 1801 թ. հետո հազարավոր հայեր բնակեցվեցին Վրաստանում, ինչպես նաև վրացահպատակ Լոռիում: Նրանք ռուսական հպատակություն ընդունեցին[76]: 1801 թ. հունիսին ստանալով միացման լուրը` սահմանակից թուրքահպատակ Ախալցխայի գավառի Ախալքալաքի սանջակից 17 ընտանիք (120 շունչ) ևս գաղթում է Վրաստան[77]: Ցարական արքունիքը խրախուսում էր քրիստոնյաների տեղափոխումը, արագացնում վերաբնակեցման գործընթացը` երբեմն հաշվի

[75] Տես` Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին (այսուհետև` Ժողովրդագրական տեղաշարժերը…), «Իրան- նամէ», 1998, N 1-2-3, էջ 12:

[76] Потто В., Кавказская война в отделных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 1-4, СПб., 1888, с. 721-722.

[77] Մելքոնյան Ա., Ջավախքը…, էջ 155:



չնստելով տեղական բնակչության շահերի հետ, քանի որ նվաճված տարածքները պաշտպանելու համար ռուսական արքունիքին հարկավոր էր հուսալի բնակչություն: Մյուս կողմից, չցանկանալով առաջացնել Օսմանյան կայսրության դժգոհությունը, արքունիքը պահանջում էր այդ ձեռնարկումները ներկայացնել իբրև Վրաստանից Թուրքիա փախած նախկին բնակիչների վերադարձ իրենց հայրենիք[78]:

1803 թ. ամռանը գլխավոր հրամանատար գեներալ Պ. Ցիցիանովը կարողացավ օգտվել Ախալցխայի փաշայությունում ստեղծված խառնաշփոթ իրավիճակից և քրիստոնյաների նոր ընտանիքներ վերաբնակեցնել Վրաստանում[79]:

1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում և հետո էթնիկ գործընթացների կարգավորման հարցն Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններում, մասնավորապես Լոռու գավառում, մնաց ցարիզմի ուշադրության կենտրոնում: Անդրկովկասի նվաճումն արագացնելու համար անհրաժեշտ էր ամրապնդել կայսրության նորահաստատ սահմանամերձ գոտին` Լոռի-Բորչալուն և Ծալկան[80]:

Լոռու վերաբնակեցման հարցը ռուսական կառավարության համար առաջնահերթ խնդիր է դառնում` կապված հանքերը բանվորական ուժով ապահովելու հետ: Քանի որ պղնձահանքերն ու դրանց շրջակա հողերը հիմնականում կալվածատիրական էին, իսկ դրանցում ապրող բանկչությունը` հարկատու իր կալվածատիրոջը (կամ վանքին` եթե վանքապատկան էր), հետևաբար ռուսական կառավարությունը սկսեց գնման միջոցով հողերը ձեռք բերել կալվածատերերից: Այդ քաղաքականության արդյունքում Լոռու հողերի մի մասն աստիճանաբար վերածվում էին պետականի: Ընդ որում, գնված հողերում առանց ռուսական պաշտոնյաների և գործարանային գերատեսչությունների թույլտվության, ոչ ոք իրավունք չուներ բնակվելու, անգամ օգտվելու բնական պայմաններից:

[78] Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը…, «Իրան- նամէ», N 1-2-3, էջ 12:

[79] Նույն տեղում:

[80] Մելքոնյան Ա., Ջավախքը…, էջ 156:

Ցավոք հայտնի չէ, թե ռուսական կողմն ինչ՞ պայմաններ էր առաջարկում հայ կալվածատերերին կամ գումարային ի՞նչ չափորոշիչներ: Կամ արդյո՞ք տարածքը որպես պետական հող տրամադրելը և կալվածատերերի ու նրանց հպատակների տեղափոխությունն այլ բնակավայրեր կամավոր բնույթ է կրել: Նման դեպքերը ռուս հրամանատարության կամ լեռնային վարչության զեկուցագրերում ու նամակներում, բնականաբար, չեն արձանագրվել: Հայտնի են մի քանի փաստեր. օրինակ՝ 1803 թ. Կովկասի լեռնային վարչության պետ կոմս Ա. Մուսին-Պուշկինը պայմանագիր է կնքում Լոռու կալվածատերեր Արղությանների և Մելիքովների հետ, որպեսզի նրանք հանքավայրերն ու շրջակա հողամասերը տրամադրեն պետությանը՝ հանքերը շահագործելու համար[81]:

Հաջորդ քայլը նախատեսում էր ձեռք բերված հողերը բնակեցնել պետական բնակչությամբ՝ հարկատու միայն պետությանը: Այդ բնակչությունն առաջին հերթին ծառայելու էր որպես բանվորական ուժ՝ Ալավերդու և Ախթալայի պղնձահանքերի շահագործման համար:

Առաջին դժվարությունը, որին տեղում հանդիպեց հանքային ղեկավարությունը, ինչպես նշվում է կոմս Մուսին-Պուշկինը դեռևս 1803 թ. մայիսի 9-ի զեկուցագրի մեջ, դա բանվորների ոչ բավարար քանակությունն էր, որի պատճառով նա կառավարությունից պահանջում էր ևս 100 մարդ: Բանն այն էր, որ պղնձի արտադրությունը գնալով ընդլայնվում էր, իսկ աշխատող ձեռքերի պահանջը՝ մեծանում, ուստի կոմս Մուսին-Պուշկինը կառավարության ուշադրությունը հրավիրում է այդ հարցի վրա. «Քանի որ գործարանների համար մարդկանց կարիքը գնալով մեծանում է, ...արդյո՞ք նպատակահարմար չի լինի թույլատրել, որ Լոռու տարածքը, որը որոշ չափով, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ գրեթե հազիվ բնակեցված է, ...նախատեսվի բնակեցվելու նոր եկածներով, ինչպես հույն, այնպես էլ հայ...: Այն պայմանները, ըստ որոնց նման բնակեցումը կարող է իրականացվել, կարող են ձեռք բերվել լեռնային վարչության և

[81] Բարխուդարյան Վ., Մելքոնյան Ա., Մաթևոսյան Ռ., Չոբանյան Պ., նշվ. աշխ., «Դեբեդ », 1999, 16-ը ապրիլի, N 6:



Վրաստանի գլխավոր կառավարչապետ գեներալ Ցիցիանովի փոխադարձ համաձայնությամբ»[82]: Բայց քանի որ Լոռու գավառը նվիրաբերվել էր Արցախի Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանին, ապա Մուսին-Պուշկինն առաջարկում է այդ հողի դիմաց վճարել նրա խնդրած 6000 ռուբլին, որից հետո ավելի հեշտ կլիներ լուծել տարածքի վերաբնակեցման հարցը[83]:

1803 թ. հուլիսի 14-ին Ցիցիանովը Կարսի փաշայից պահանջում է իր տիրույթներում գտնվող Մելիք-Ջումշուդի հպատակներին թույլ տալ վերադառնալ Լոռի[84]: .

1804 թ. փետրվարի 1-ի՝ Մուսին-Պուշկինին և փետրվարի 24-ի՝ կայսր Ալեքսանդր I-ին ուղղված՝ «Լոռիում լեռնային գործի իրագործման մասին» զեկուցագրի մեջ Պ. Ցիցիանովն, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է նաև այն հարցին, թե՝ ի՞նչ հիմունքներով կարելի է այստեղ նոր և վաղուց բնակվողներին լծել գործարանային աշխատանքների՝ տեղական հանգամանքներին և լեռնարդյունաբերության կանոններին, պետությանը տրվելիք հարկերին համապատասխան: Բացի այդ, նշվում էր, որ այն հողերը, որոնք պատկանում են գործարաններին և ձեռք են բերվել կալվածատերերից գնման միջոցով, իրավունք ունեն սահմանազատվել մյուս հողատարածություններից, և ոչ ոք առանց վրացական լեռնային վարչության թույլտվության իրավունք չունի բնակվել այդտեղ, օգտվել ինչպես այդ հողերից, այնպես էլ անտառներից ու ջրերից: Նշվում է նաև, որ Լոռի քաղաքը հարկավոր է հանել 1801 թ. դեկտեմբերի 12-ի բարձրագույն հրամանագրով սահմանված Վրաստանի գավառային քաղաքների անունների շարքից և դնել անմիջապես լեռնային վարչության տրամադրության տակ՝ «Լեռնային փոքրիկ քաղաք Լոռի» անունով, իսկ Լոռու գավառը վերանվանել Թիֆլիսի[85]: Լոռու գավառի մի շարք

[82] АКАК, т. 2, док. 383, с. 204.

[83] Նույն տեղում, док. 383, с. 205.

[84] Присоединение..., т. 1, док. 155, с. 184.

[85] Արդյունաբերական վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում (1803-1820), փաստաթղթերի ժողովածու, խմբագրությամբ՝ Հարությունյան Ա., Գրիգորյանց Ա., «ԲՅԱ», N 1, 1984, էջ 27:

գյուղեր ամրացվում են Ալավերդու գործարանին՝ բանվորական ուժ և փոխադրամիջոցներ հատկացնելու համար[86]:

Ցիցիանովը 1804 թ. փետրվարին խորհուրդ է տալիս Ա. Մուսին-Պուշկինին Լոռու շրջանը բնակեցնել Երևանից եկած հայերով[87]: Վերջինս 1804 թ. հունիսի 9-ին գրում է, որ Լոռու բնակեցման նպատակով Վրաստանի սահմաններին հարակից տարածքների բնակիչներին տեղափոխման կոչ է արել, որին արձագանքելով, շատ հայեր ցանկություն են հայտնել տարբեր վայրերից գալ և բնակվել Լոռիում: Այժմ նրանք գտնվում են Փամբակի շրջանում: Մուսին-Պուշկինն իր էքսպեդիցիայի թարգման, կապիտան Գ. Կաչկաչևին ուղարկում է Փամբակ՝ մայոր Մոնտրեզորի և տեղի պրիստավ Ա. Սեմյոնովի մոտ, որին վերջիններս թույլատրում են այդ մարդկանցից 1500 տուն տեղափոխել և բնակեցնել գործարաններին պատկանող հողերի վրա: Սակայն վերաբնակվողներից շատերն իրավիճակի բարելավման դեպքում, նպատակ ունեին վերադառնալ բնակության նախկին վայրերը. միայն մոտ 200 տուն նախկին լոռեցիներ ցանկություն են հայտնում ընդմիշտ մնալ Լոռիում[88]:

Արարատյան դաշտի հայ ազգաբնակչությունը համարվում էր ռուսների կողմնակից, ուստի Երևանի Մամադ խանը նպատակ ուներ տեղահանել ժողովրդին: Երևան քաղաքի և Արարատյան դաշտի հայերից շատերը ստիպված թողնում են բնակավայրերը և անցնում Լոռի ու Փամբակ: Երևանյան արշավանքից առաջ Պ. Ցիցիանովը Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննես Գեղարդակրին ուղարկում է Փամբակ՝ համոզելու, որ Երևանի Մամադ խանի ճնշումների հետևանքով այդ կողմերից փախած հայ ժողովուրդը բնակություն հաստատի Վրաստանում[89]:

Շուտով, 1804 թ. ապրիլի 17-ին, Մամադ խանը հրամայում է 4000 տուն հայերի Երևանի և Էջմիածնի շրջակայքից տեղահանել և քշել-տանել Կարս: Ապարան հասած փախստականները վճռում են

[86] Կոզմոյան Կ., Ալավերդի, Ե., 1966, էջ 17:
[87] «ԲՀԱ», նշվ. տեղում, N 1, 1984, էջ 27:
[88] АКАК, т. 2, док. 392, с. 211.
[89] АКАК, т. 2, док. 512, с. 615.



Կարս տեղափոխվելու փոխարեն անցնել Փամբակ, որը գտնվում էր ռուսական տիրապետության տակ և ավելի ապահով վայր էր: Դեպքերի ականատես Հովհան քահանա Ոսկերչյանը գրում է. «..որք խառն ընդ միմեանս ճանապարհորդեալք հասին մինչև ցԱպարան, որ սահմանն է Շիրակայ և Փամպակու նահանգացն: Աստէն խորհեցան բազումք ի ժողովրդենէն էջմիածնի, որք արբեալք էին զմրուր դառնութեանն Դաւթայ անցանել ի Փամպակ և ոչ գնալ ի Կարս, նմանապէս և ժողովուրդք նահանգին Դրխպուլաղու, որք տաղտկացեալք էին ի Պարսից նեղութենէն, կամէին անցանել ընդ մեզ ի Փամպակ յերկիր մեծի կայսեր»[90]: Իմանալով այդ մասին՝ Երևանի խանը զորաջոկատ է ուղարկում՝ փախստականներին Կարս հասցնելու, որը հարձակվում է ժողովրդի վրա: «Բայց մեք,- գրում է Հ. Ոսկերչյանը,-չիմանալով զորոգայթս իշխանացն մերոց յԱպարանու ելեալ միամտութեամբ չուէաք ի ճանապարհացն Փամբակու ի յԱլաղայեալ աւերակ ինչ գեօղի հայոց յաւուր շաբաթու ի Մայիսի 28, ...վասն որոյ յաւուրն երկու շաբթի չուեալ անտի կամէաք անցանել ի հողն Փամպակու, և դեռ չէաք գնացեալ մղոն մի՝ ահա հասին զկնի մեր զօրն առաքեալ ի խանէն յերևանու և անկեալ ի վերայ բանակին մերոյ հարեալ վիրաւորէին և իբրև զապստամբեալս զմեզ կողոպտէին, և բռնի վարեալ դարձուցանէին զմեզ դէպ ի Կարս. ...ժամս 5 ոչ դադարէին ի կռփելոյ և ի կողոպտելոյ զմեծ բանակն հայոց, մինչև դարձուցին և հասուցին առ ափն Արփոյ գետոյն Կարուց»[91]: Հինգ ժամ տևած կոտորածից հետո փախստականներին հասցնում են Մարմաշեն: Այստեղ էլ լուր է գալիս, որ պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի զորքերից մի գունդ գալիս է դեպի փախստականները:

Փախստականները, տեղի տալով Փամբակի, Ղազախի և Բորչալուի ապստամբ թուրքերի ճնշումներին, ապաստանեցին նախ Օձուն գյուղում, ապա իջան Դեբեդի ձորը, բայց այդտեղ ևս տեղանքը հարմարավետ չհամարելով, բարձրացան Հաղպատ գյուղը: Սակայն,

[90] Ոսկերչյան Հ., նշվ. աշխ., «Կռունկ հայոց աշխարհին», 1862, ապրիլ, էջ 291:
[91] Ոսկերչյան Հ., նշվ. աշխ., «Կռունկ հայոց աշխարհին», 1862, ապրիլ, էջ 291-292:

հազիվ թե ամբողջ Լոռիում գտնվեր մի հայկական գյուղ, որն ի վիճակի լիներ բավարարել բազմահազար անտուն մարդկանց կարիքները: Այդ ժամանակ Դոնմազ անունով մեկը Հաղպատ բերեց Ալեքսանդր արքայազնի թուղթը՝ հետևյալ բովանդակությամբ. «Երդնում ի կենդանի գերեզման հօր իմոյ Հերակլայ, ի յաղթող թագաւորութիւն շահին, զի բնաւ ոչ լինի ձեզ վնաս, եթե գան իշխանք և քեթխուդայք ձեր ընծայիւք ի տեսութիւն ընդ մեզ եղեալ խանիս»[92]: Այս առաջարկությունը հիշեցրեց նրանց, որ պարսիկները մոտ են և ստիպեց թողնել Հաղպատը: «Տեսեալ մեր թէ՝ ոչ ուստեքէ եղև օգնութիւն մեզ, զի հատան ճանապարհք Երևանու և Թիֆլիզու և ոչ ոք է որ հոգայ ըզփրկութենէ մերմէ, իջաք ի Հաղբատու՝ ընդ ձորն ի վեր գնացաք մինչև ի գեօղն Շնող՝ զի թերևս ի գիշերագնաց փախստեամբ կարասցուք անկանիլ ի Թիֆլիզ: Իբրև գիտացին երկրական պարսիկքն թէ իջաք ի Հաղպատու և կամիմք գնալ ի Թիֆլիզ, եկին և կալան զճանապարհս ձորոյն, և ի բազում յաւուրս սպասէին մեզ իբրև զորսկանս զի թերևս կարիցեն արկանել զմեզ ի ցանցս իւրեանց:...յանկարծակի աղաղակեաց զէտն մեր թէ՝ փախերուք, զի ահա եկն Աղեքսանդրն ընդ ձորովս»[93]:

Այդ ընթացքում, հունիսի 4-ին, ռուսական բանակի առաջավոր մասը գեներալ Պ. Տուչկովի հրամանատարությամբ հասել էր Փամբակի Ղարաքիլիսա գյուղը: Այդ զորաբաժնի հետ էին Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրը և Ներսես Աշտարակեցին: Վաղարշապատի շրջակայքից դուրս եկած փախստականները, լսելով Հովհաննես Գեղարդակրի Ղարաքիլիսա ժամանման մասին, նրանից օգնություն խնդրեցին:

1804 թ. հունիսին Ախուրյանի ափին, Փոքր Ղարաքիլիսայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորքերի հաղթանակի շնորհիվ Երևանի խանի կողմից Կարսի փաշայություն արտաքսվող հայ ընտանիքների մի մասի համար ճանապարհ բացվեց՝ անցնելու Լոռի-Փամբակ, ապաստան գտնելու ռուսական հպատակության տակ:

---

[92] Նույն տեղում, էջ 301:

[93] Նույն տեղում, էջ 302-304:



Երևանյան անհաջող արշավանքից հետո ևս Երևանի խանությունից Փամբակի կիրճ էին տեղափոխվել բազմաթիվ ընտանիքներ[94]: Ցիցիանովը շտապեց օգտվել այդ հանգամանքից՝ վրացահպատակ հայկական տարածքների բնակեցման համար[95]: Նա հանձնարարեց Հովհաննես արքեպիսկոպոսին, որ Երևանի խանությունից դուրս եկած հայ բնակիչներին բնակեցնի Վրաստանի սահմաններում, ուր անբնակ վայրեր շատ կան: 1804 թ. հունիսի 13-ին Ցիցիանովը կոմս Մուսին-Պուշկինին գրում է. «Այս բանը իմանալով, Թիֆլիսից Փամբակ ուղարկեցի հայազգի արքեպիսկոպոս Յովհաննէսին (Հովհաննես Գեղարդակրին-Հ. Ա.), որպէսզի նա յորդորէր նոցա մեր կողմն անցկենալու թէպէտ այն պայմանով, որ նոքա ազատ լինին՝ Երևանը ձեռք բերելուց յետ՝ իւրեանց հայրենիքը վերադառնալու, որ և յաջողութեամբ կատարուել է»[96]: Այնուհետև նշում է, որ վերոհիշյալ ընտանիքներից մոտ 2000 տուն ժամանակավորապես բնակեցրել է Լոռի ամրոցի մոտ: Նրանցից 1000 ընտանիքը ցանկություն ունի ընդմիշտ մնալ այդտեղ[97]:

Արքեպիսկոպոսը, կատարելով հանձնարարությունը, փախստականների մի մասին՝ 2000 ընտանիք, ուղարկեց Թիֆլիս[98]: Մյուս մասի (մոտ 2000 ընտանիք) առաջնորդներ մելիք Սահակին և Հովհաննես հարյուրապետին խորհուրդ տվեց մնալ Լոռիում, որպեսզի, երբ ռուսները վերցնեն Երևանը, նրանք հնարավորություն ունենան վերադառնալ բնակության նախկին վայրերը. «և յուսադրեալ նորա զնոսա ասէ մնացէք ի յերկրիս Փամպակու, որ մօտ յԵրևանու է՝ զի յորժամ տիրեսցէ աշխարհին ձերոյ կայսրն մեծ յայնժամ փութով դարձջիք ի բնակութիւնս ձեր...»[99]: Նպատակն այն էր, որ նրանք ընդմիշտ մնան ռուսական հպատակության տակ: Այդպես էլ

---

[94] Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981, էջ 202:

[95] Утверждение русскаго владычества на Кавказе, Тифлис, т. 1, 1901, с. 136.

[96] Երիցեան Ալ., Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետութիւնների մէջ, «Փորձ», Թիֆլիս, 1877-1878, N 2, էջ 390:

[97] АКАК, т. 2, док. 1228, с. 614.

[98] Утверждение русскаго владычества на Кавказе, с. 136.

[99] Ոսկերչյան Հ., նշվ. աշխ., «Կռունկ հայոց աշխարհին», 1862, ապրիլ, էջ 295:

վարվեցին փախստականները: Այստեղ նրանք դարձյալ ենթարկվեցին Ղազախի և Բորչալուի ապստամբած թուրքերի կողոպուտներին: Փաստորեն, այդքան սպասված ռուսական տիրապետության տակ էլ նրանք չունեցան անձի և գույքի ապահովություն:

Կոմս Մուսին-Պուշկինը գրում է. «...[հայերին] առժամանակ Լոռույ ամրոցում բնակելու տեղ տուի և նոքա արդէն այնտեղ են գտնվում իւզբաշու մօտ, բայց որովհետև ես լսում եմ, որ մոտ 1000 տուն հակված են մշտապէս մնալու Վրաստանում, (Լոռիում -Հ. Ա.) ուստի աւելորդ չէր լինի եթէ Ձ. Պ. հաճէր հրամայել ծածկաբար մարդ ուղարկել՝ նոցա առ այն միտել տալու, որովհետև իմ տուած խօսքի հաւատարմութիւնը արգելում է ստիպման մինչև անգամ ամենափոքր արտայայտումն...»[100]:

Միևնույն ժամանակ ռուսների առաջխաղացումը նպաստում է Փամբակի, Շորագյալի ու Բորչալուի սահմեդական բնակչության փախուստին դեպի Կարսի ու Երևանի խանության տարածքներ[101], ինչը մեծ չափով անհանգստացնում էր ռուսական հրամանատարությանը: Նման տեղաշարժեր գրանցվում են հատկապես Փամբակի գավառից: 1804 թ. հուլիսի 13-ի Վրացական բարձրագույն Կառավարության կատարողական էքսպեդիցիային ուղղված Շորագյալի մոուրավ մայոր Դ. Քանանովի զեկուցագրում նշվում է, որ Փամբակի Ավդիբեկ (13 ընտ., 20 ար., 23 իգ.) և Ղալթախչի (43 ընտ., 115 ար., 96 իգ.) գյուղերի բնակիչները փախել են Կարսի փաշայություն: Այնուհետև Քանանովը տեղեկացնում է, որ թշնամու զորքերի՝ Երևանի նահանգի շրջակայք շարժվելու հետևանքով այդ նահանգի մեծաքանակ հայ բնակիչներ ընտանիքներով անցնում են Փամբակ՝ պաշտպանություն գտնելու հույսով, իսկ այնտեղից՝ տարբեր վայրեր, այդ թվում՝ Լոռի, ուր հասել էր արդեն 200 ընտանիք, որոնց մի մասը ցանկություն ուներ ընդմիշտ մնալ այդտեղ: Քանանովը հարցնում է, արդյո՞ք նպատակահարմար է այդ վայրերը տրամադրել նրանց՝

---

[100] Երիցեան Ալ., նշվ. աշխ., «Փորձ», Թիֆլիս, 1877-1878, N 2, էջ 390-391:

[101] АКАК, т. 1, док. 801, с. 599, док. 802, с. 599, док. 803, с. 599, док. 805, с. 601, т. 2, док. 230, с. 580-581, док. 237, с. 581, док. 682, с. 886, док. 1124, с. 571, док. 1154, с. 581; Бутков П., նշվ. աշխ., с. 340, 477.



բնակվելու: Բացի այդ, անհրաժեշտ է ճշգրտել նրանց թվաքանակը[102]:

1803-1805 թթ. ընթացքում ռուսները բանակցություններ են վարում թուրքական տարածքներ անցած Փամբակի աղալարների և նրանց հպատակ թաթարների հետ, փորձելով համոզել նրանց՝ վերադառնալ բնակության նախկին տարածք և ընդունել ռուսական հպատակություն[103]: Հավաստիացնում էին, որ կներվեն նրանց արարքները և բնակվելու համար կհատկացվեն անհրաժեշտ վայրեր: Նախատեսվում էր կարափափախներին[104] և թաթարների մի մասին բնակեցնել Լոռիում: Բորչալուի Իսմայիլ աղային պետք է ուղեկցեին Լոռի՝ որտեղ ինքն էր ցանկացել վերաբնակվել, ապահովելով նրա անվտանգությունը: Սակայն այդ ջանքերը հիմնականում ապարդյուն անցան, քանի որ թաթարների վերադարձին արգելում էին Կարսի նահանգի սահմեդական իշխանությունները: Այնուամենայնիվ, վերադարձ, թեև փոքր չափերով, եղել է: Փաստորեն, ռուսական զինվորական հրամանատարությունը մի կողմից ստիպված էր վերաբնակեցնել Հյուսիսային Հայաստանը և Ռուսաստանին անցած մյուս տարածքները, մյուս կողմից՝ վերահսկել և թույլ չտալ արտագաղթը նույն տարածքներից:

Երբ Ցիցիանովը 1804 թ. ստիպված վերացրեց Երևանի պաշարումը և սեպտեմբերի 15-ին հասավ Ղարաքիլիսա, կանգ առավ Փամբակի՝ իբրև սահմանագլխի գավառի գործերը կարգավորելու համար: Նա մտադրվում է Լոռի և Փամբակ եկած բնակիչներին տեղափոխել Թիֆլիսի մերձակայք, իսկ 1805 թ. օգոստոսի 13-ին Հովհաննես արքեպիսկոպոսից պահանջում է Երևանից եկած հայերից մի քանի 100 տուն ուղարկել Ելիզավետպոլ[105]: Սակայն Փամբակի իշխան Գեորգի Օրբելիանին Ցիցիանովին հղված զեկուցագրում խորհուրդ չի տալիս, որի պատճառաբանություններից մեկն այն էր, որ

---

[102] АКАК, т. 2, док. 230, с. 581.

[103] Присоединение..., т. 1, док. 155, с. 184-185, док. 258, с. 323-324.

[104] Կարափափախները թուրքական ցեղեր էին, որոնք Ախալցխայի փաշայությունում հայտնվել էին XVIII դ. վերջերին՝ Բորչալուի և Շամշադինի շրջաններից:

[105] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 16, վավ. 75, թթ. 1-2:

Փամբակը նոսր էր բնակեցված[106]:

1805 թ. Երևանի խանությունից Փամբակում ապաստան գտան ևս 200 հայ և 400 մահմեդական ընտանիք[107]: Ցիցիանովը 1805 թ. հոկտեմբերի 15-ի նամակում Ջաֆար Կուլի խանին գրում է, որ եթե նրանք ունեն մոտ 500 հողագործ հայ կամ թաթար ընտանիք, այդ դեպքում կտա իր համաձայնությունը՝ վերաբնակեցման վերաբերյալ, միայն ոչ թե Թալինում և Շորագյալում, ինչպես նրանք էին ցանկանում, այլ՝ Լոռիում: Ապա խոստանում է, որ համաձայնվելու դեպքում Լոռի ամրոցին կից նրանց կտրվի բնակության հարմար վայր՝ տներ կառուցելու, հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար[108]: 1805 թ. հոկտեմբերի 17-ին գեներալ Պ. Նեսվետաևը Պ. Ցիցիանովին զեկուցում է, որ կասկածում է, թե Ջաֆար Կուլի խանն իր հպատակներով կբնակվի Լոռիում. նրանք նախընտրում են գնալ Թալին:

1805 թ. գեներալ Նեսվետաևը գրավեց Արթիկը, ապա շարժվեց Էջմիածին, և Արարատյան դաշտով վերադարձավ Շիրակ, այնուհետև՝ Փամբակ: Դեպի Թիֆլիս ճանապարհին նա իր հետ տարավ Արարատյան դաշտից իրենց խնդրանքով իրեն միացած 12 գյուղերի հայ ազգաբնակչությանը (մոտ 600 տուն), «...որոց զոմանս թողեալ են ի Շիրակաւանն, զոմանս ի Բամբակաձոր ե զոմանս բերին ի քաղաքս (Թիֆլիս-Հ. Ա.)»[109]: Մայիսի 12-ին Նեսվետաևը Ցիցիանովին զեկուցում էր, թե ընդհանուր առմամբ Երևանի գյուղերից ռուսական տարածքներ է վերաբնակեցրել 357 ընտանիք, որից 200 ընտանիք տեղավորել է Փամբակում և Շորագյալում[110]:

1805 թ. ամռանը Երևանից տեղափոխվել ցանկացան նաև տեղում մնացած մյուս հայերը: Ցիցիանովը հանձնարարեց Հովհաննես եպիսկոպոսին, նրանց համոզելու, որ շտապեն: Նա եպիսկոպոսին

---

[106] Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 109:
[107] Աղայան Ծ., Ռուսաստանի դերը..., էջ 206:
[108] АКАК, т. 2, док. 752, с. 867.
[109] Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ե., Թիֆլիս, 1902, էջ 443:
[110] Присоединение..., т. 1, док. 234, с. 307.



գրում է. «...Խոնարհաբար խնդրում եմ շտապել այստեղ ուղարկելու Երևանի հայերին, որոնց իւրաքանչիւր գերդաստանին կը հրամայեմ տալ պատրաստի տուն, այգի և արտ, որ կարծեմ նոցա համար խիստ շահաւետ պէտք է լինի միայն թէ նոքա չլինին ոչ վանքերին, ոչ մելիքներին, ոչ իւզբաշիներին պատկանեալներից, այլ ազատ գիւղացիներ... Իսկ այստեղ մնալու են նոքա համաձայն առաջուայ կարգադրութեան, այսինքն հարկերը երեք տարի շնորհուած կը լինին և ոչինչ ծառայութիւններ չի պահանջվում նոցանից, բայց այնուհետև նոքա կը պարտաւորին վճարելու նշանակեալ հարկ»[111]: Հրապուրվելով այս խոստումներով, հայերը խմբերով Երևանի շրջակայքից փախչում էին Փամբակ: Երևանում մնացած բնակիչների խնդրանքների թարգմանն էր Փամբակ փախած Գաբրիել հարյուրապետը: 1805 թ. օգոստոսի 15-ին նա Ղարաքիլիսայից Ցիցիանովին գրած նամակում նշում էր, որ իր ժողովրդով, ավելի քան 200 ընտանիք, անցել է Ղարաքիլիսա, և Մելիք Աբրահամն էլ մտադիր է իր ժողովրդով փախչել այստեղ, քանի որ Մեհտի-Կուլի խանը մտադիր էր բոլոր հայերին փոխադրել Թեհրան, դրա համար խնդրում է օգնել Երևանում մնացած հայերին, իսկ իրենց թույլատրել՝ բնակվել Փամբակում[112]:

Կյանքի ծանր պայմանները հարկադրում էին հայերին շարունակ հայցել ռուսների աջակցությունը, որպեսզի կարողանան դուրս գալ իրենց բնակության վայրերից և գնալ ապահով այլ վայրեր կամ Վրաստան, մի բան, որ միշտ խրախուսել էր Ցիցիանովը: Ցիցիանովի այդ քայլը նպատակ ուներ արագացնելու Երևանը գրավելու իր անհաջող փորձը: Մյուս կողմից նա քաջ գիտակցում էր, որ այդ հայերը չէին կարող վերստին վերադառնալ Երևան: Բայց նրա հիմնական նպատակը այդ աշխատասեր ժողովրդին Վրաստանի սակավաբնակ տարածքներում կամ Լոռիում բնակեցնելն էր: Այդ է վկայում նաև Ցիցիանովի 1806 թ. հունվարի 10-ի պատասխան նամակը գեներալ Պ. Նեսվետաևին, երբ վերջինս Ղարաքիլիսայից հաղորդում է, որ

---

[111] Երիցեան Ալ., նշվ. աշխ., «Փորձ», Թիֆլիս, 1877-1878, N 2, էջ 391:
[112] Նույն տեղում, էջ 392:

Բայազետից թվով 10000 հայ ընտանիք պատրաստ են անցնել Երևան, հենց որ այն պատկանի ռուսներին: Ցիցիանովը գրում է. «Եթե նույնիսկ Երևանը մեր ձեռքում գտնվեր, ես նրանց այնտեղ գաղթեցնելու կարիք չէի ունենա, ինձ հարկավոր է բնակեցնել Վրաստանը, ուստի, եթե նրանք չեն կամենա բնակվել Վրաստանի խորքերում, ուրեմն նրանք գրեթե հարկավոր չեն ինձ...»[113]: Այստեղ բացահայտ է Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականության գաղութային էությունը:

1804-1805 թթ. ընթացքում Լոռիում հաստատվում են նաև պարսկահայեր: Հետապնդվելով պարսիկներից, նրանք հարյուրներով փախչում էին Պարսկական խանության սահմաններից, բնակություն հաստատում ռուսահպատակ տարածքներում[114]:

Այսպիսով, 1804 թ. սկսած, հատկապես երևանյան արշավանքից հետո մասամբ լուծվեց Լոռու, Բորչալուի և Փամբակի վերաբնակեցման հարցը, թեև Լոռի եկած շուրջ երկու հազար հայ ընտանիքների մի մասը հետագայում ցարական վարչության որոշմամբ տեղափոխվեց Ելիզավետպոլի նահանգ[115]:

1806 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը սկիզբ է դնում արևմտահայերի նոր վերաբնակեցմանը Արևելյան Հայաստանում: Պատերազմի ընթացքում արևմտահայերից շատերը սպասում էին հարմար առիթի՝ կյանքի և գույքի ապահովություն խոստացող ռուսահպատակ տարածքներ վերաբնակվելու համար: Ցիցիանովը խրախուսում էր օսմանյան նահանգներից քրիստոնյա հայերի ու վրացիների ներգաղթը: Նա շարունակում էր թուրքահպատակ քրիստոնյա, հիմնականում հայ բնակչությանը բերել բնակչությունից նոսրացած Վրաստան ու Լոռի: Հայ բնակչությունը նախընտրում էր տեղափոխվել ռուսական տիրապետության տակ անցած տարածքներ, անգամ եթե Ռուսաստանին անցած տարածքները շարունակում էին վտանգավոր մնալ թուրքերի, պարսիկների ու լեզգիների հարձա-

[113] Присоединение..., т. 1, док. 286, с. 343.
[114] Потто В., Кавказская война..., т. 3, выпуск 1-4, СПб., с. 722.
[115] Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 38-39:



կումների տեսանկյունից:

1807 թ. գարնանը, ռուսների կողմից Ախալքալաքի բերդի գրոհի օրերին, Բորչալուի և Ղազախի թաթարներն սկսեցին կողոպտել Երևանի կողմերից եկած փախստականներին, որոնք կանգ էին առել Փամբակում և Լոռիում:

Երբ 1807 թ. մարտի սկզբներին ռուսական զորքերը մտան Կարսի նահանգ, թուրքերի հետ ընդհարում տեղի ունեցավ, որից հետո ռուսները Բաշ-Շորագյալի մոտ գերեցին շրջակայքի 500 բնակիչների, ամենայն հավանականությամբ՝ հայերի, և Գուդովիչի հրամանով բնակեցրին Ախուրյանի ձախ ափին և Փամբակում[116]: Ընդհանուր առմամբ, 1804-1807 թթ. Կարսի փաշայությունից մեծ քանակությամբ հայեր տեղափոխվեցին և ռուսական բանակի գեներալներ Նեսվետաևի և Գուդովիչի աջակցությամբ բնակություն հաստատեցին Փամբակի ու Շորագյալի գավառներում: Ռուսական հրամանատարությունը փորձում էր վերաբնակիչներին ապահովել հողերով: Հայերի արտագաղթի դեպքերն ավելի հաճախակի դարձան 1809 թ. և 1810 թ. գարնանը[117]:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս պատերազմի ընթացքում, ռուսները առաջնորդվելով հպատակներ ձեռք բերելու անհրաժեշտությամբ, խրախուսում են ոչ միայն քրիստոնյաների ներգաղթը Արևելյան Հայաստան, այլև ձգտում են ամեն կերպ վերադարձնել այն մահմեդական ընտանիքներին, որոնք Լոռու, Փամբակի և Բորչալուի տարածքներից փախել էին թուրքական տիրապետության տակ գտնվող վայրեր: 1808-1809 թթ. ընթացքում նրանք մեծ աշխատանքներ են տանում այդ ուղղությամբ՝ փորձելով Փամբակ վերադարձնել Սեիդ և Ռահիմ բեկերին՝ իրենց հպատակ ընտանիքներով, իսկ կարափափախներին և Բորչալուի Իզմաիլ աղային իր հպատակներով՝ Լոռի, որտեղ նրանք բնակվելու ցանկություն էին հայտնել[118]: Սակայն դա չի հաջողվում. միայն 8 ընտանիք է անցնում սահմանն ու

[116] Մելքոնյան Ա., Ջավախքը..., էջ 119:
[117] Մելքոնյան Ա., Ջավախքը..., էջ 159:
[118] АКАК, т. 3, док. 417, с. 230, т. 4, док. 1433, с. 932.

բնակվում Փամբակում: Իրականում կարափափախներն ու քրդերը խուսափում էին ռուսական հպատակություն ընդունելուց: Սակայն ռուսական իշխանությունները համառորեն շարունակում էին վերաբնակեցնելու փորձերը՝ դիմելով բոլոր հնարավոր միջոցներին, ինչը պայմանավորված էր դեռևս անբնակ մնացած նվաճված տարածքների վերաբնակեցումն ավարտին հասցնելու անհրաժեշտությամբ: Գեներալ Ա. Տորմասովը Վրաստանի կառավարիչ գեներալ Ֆ. Ախվերդովին հանձնարարում է վերաբնակեցնելու համար ձեռք առնել հնարավոր բոլոր միջոցները, նշելով, որ իր կարծիքով նրանց բոլոր պահանջներին կարելի է համաձայնվել[119]: Ռուսները թաթարներին նորից հավաստիացնում են հինգ տարվա հարկային արտոնություններ տալու, Լոռիում սեփականության իրավունքով հողեր հատկացնելու, նույն աղալարների ղեկավարությամբ մնալու իրենց խոստումը: Սակայն այս անգամ էլ ռուսների ջանքերը մեծ արդյունք չեն տալիս:

1809 թ. մայիսին ռուսները փորձում են Կարսի, Բայազետի ու Ախալցխայի գավառներից բնակչության նոր խմբեր տեղափոխել Լոռի: Վերաբնակիչների մեջ գերակշռում էին հայերը: 1810 թ. օգոստոսի 19-ին գրած իր հրահանգում Ռուսաստանի ներքին գործերի նախարարը Ա. Տորմասովից պահանջում էր հետևել վերաբնակեցման ընթացքին և օժանդակել նրանց:

1810 թ. սեպտեմբերի 23-ին Ա. Տորմասովն իր գրության մեջ նույնիսկ առաջարկում է գեներալ Ախվերդովին Լոռիում բնակեցնել «խռովարար» օսերին, որոնք որպես պատիժ տեղահանվելու էին և ժամանակավորապես բնակեցվելու Վրաստանում[120]:

Փամբակը շարունակում էր մնալ ռուս հրամանատարության ուշադրության կենտրոնում, քանի որ այն հարևան էր Ախալքալաքի մարզին, իսկ վերջինս և Ախալցխան նվաճելու միտքը հանգիստ չէր տալիս ռուսներին: Այդ տարածքների նվաճումը կարևորում էր դեռևս Ցիցիանովը: Բայց Ի. Գուդովիչին փոխարինած գեներալ Ա. Տորմասովի ախալցխյան արշավանքը ևս ձախողվեց: Վերջինս իր

119 Նույն տեղում, т. 4, док. 1188, с. 780.
120 АКАК, т. 3, док. 644, с. 465.



անհաջողությունը քողարկելու նպատակով որոշեց Լոռի և Թիֆլիսի շրջակայք գաղթեցնել գավառի բնակչության մի ստվար զանգված՝ 1500 ընտանիք, 5000 գլուխ անասունով: Գաղթը կատարվեց ձմռան սառնամանիքի պայմաններում, բայց բոլորին Վրաստան ու Լոռի հասցնելու ծրագիրը չիրագործվեց[121]: Եկած ընտանիքներն էլ չապահովվեցին կյանքի համար անհրաժեշտ պայմաններով, ինչի պատճառով նրանց մի մասը զոհվեց ցրտից ու համաճարակներից, մի մասն էլ՝ վերադարձավ նախկին բնակավայրերը կամ հեռացավ այլ վայրեր[122]:

Ախալցխայի փաշայությունից՝ Կոթելիա գյուղից Վրաստան գաղթեցված և Թիֆլիսի շրջակայքում հաստատված 57 ընտանիքների Ա. Տորմասովը հորդորում էր տեղափոխվել Լոռի[123]: Սակայն 1810 թ. վերջերին սկսված ցրտերի, հավանաբար, նաև անհրաժեշտ պետական միջոցների պակասի պատճառով հարցի լուծումը հետաձգվեց: Նպատակ ունենալով նրանց Լոռի տեղափոխել գարնանը, Տորմասովը 1811 թ. մարտի 6-ի գրությամբ մի շարք հանձնարականներ է տալիս մայոր Մաչաբելովին, այդ թվում՝ ներգաղթողներին տալ հարկային արտոնություններ, հինգ տարով ազատել հակերից, տրամադրել ցանքսի միջոցներ, աշխատել, ինչքան հնարավոր է նրանք շատ զբաղվեն տնտեսությամբ և հողագործությամբ, քանի որ դա կարող է նրանց դարձնել ունևոր և ապահով բնակիչներ, ինչպես նաև «թույլատրել Լոռիում բնակվել բոլորին, ովքեր ձեր ջանքերով կգան սահմանի (թուրքական-Դ. Ա.) այն կողմից»[124]:

1811 թ. օգոստոսի 31-ին Տորմասովը գաղտնի խորհրդական Օ. Կոզոդավլևին տեղեկացնում է, որ նախատեսում է Լոռիում բնակեցնել

121 Մելքոնյան Ա., Ջավախքը…, էջ 161:
122 Мелконян А., Армения в контексте внешней политики России в первой трети XIX в., "Вестник Российско-Армянского университета", 2003, N 1, с. 16.
123 Մելքոնյան Ա., Ջավախքը…, էջ 162, նույնի՝ Ժողովրդագրական տեղաշարժերը…, «Իրան-նամէ», 1998, N 1-2-3, էջ 14:
124 АКАК, т. 4, док. 50, с. 52.

կոթելիացիներից 500 հոգի: Նույն գրության մեջ նշում է, որ նախկին վանքապատկան գյուղացիներին, որոնք վրացական այսպես կոչված նոր հոգևորականության կազմավորմամբ, կդառնան պետական, անհրաժեշտ է վերաբնակեցնել մեկ այլ, նոսր բնակեցված տարածք, քանի որ տեղին չէր լինի, եթե պետական գյուղացիները բնակվեն վանքապատկան հողերում: Նախատեսվում է նրանց 500 կոթելիացիների հետ միասին բնակեցնել Լոռիում, որպես բարեբեր հող[125]: Ի վերջո, որոշվեց մինչև սեպտեմբեր Կոթելիայի ընտանիքներին թողնել նախկին դրության մեջ Լիլոյում՝ քանի որ հնարավոր չէր հասցնել նրանց համար հողեր հերկել: Նախատեսվում էր, որ սեպտեմբեր ամսին նրանք պետք է վերաբնակվեին Լոռի ամրոցի և Օձուն գյուղի միջև, ուր եղել է Բալախչայ գյուղը, որը նրանք պետք է վերականգնեին[126]:

1811 թ. դեկտեմբերին գնդապետ Պ. Կոտլյարևսկու կողմից գրավվեց Ախալքալաքի գավառը: Այժմ Ռուսաստանի ռազմական իշխանությունները հարց էին դնում՝ վերականգնել այդ տարածքը և հարակից գավառներից բնակչություն տեղափոխել այստեղ: 1810 թ. նոյեմբերին, երբ ռուսական զորքը հեռացել էր Ախալցխայի փաշայությունից, իր հետ բռնագաղթեցրել էր բնակչությանը՝ ամայի թողնելով տասնյակ բնակավայրեր: 1811 թ. վերջերին և 1812 թ. սկզբին ախալքալաքցիների նոր խմբեր հեռացան դեպի Վրաստան ու Բորչալուի գավառ[127]: Ռուսական զինվորական հրամանատարությունը շարունակում էր իր հսկողության տակ պահել տեղափոխվողների շարժման ուղղությունները ու նոր բնակավայրերի ընտրությունը: Ըստ նախատեսված ծրագրի, ախալքալաքցի ընտանիքները պետք է սեպտեմբերին բնակվեին նույն Բալախչայ գյուղում, ուր և Կոթելիայի բնակիչները: Գաղթականները ցանկություն չունեին տեղափոխվելու սահմանամերձ ավերված գոտի, որովհետև Ախալքալաքի սանջակից Լոռուն սպառնացող վտանգը չէր վերացել: Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի հետ Ռուսաստանի մղած միաժամանակյա

125 Նույն տեղում, док. 122, с. 171.
126 Присоединение..., т. 1, док. 481, с. 602.
127 Մելքոնյան Ա., Ջավախքը..., էջ 165:



պատերազմների պայմաններում Լոռին շարունակում էր մնալ անապահով և սակավաբնակ շրջան: Ալ. Երիցյանի պատկերավոր արտահայտությամբ «Փամբակի և Շորագեալի ծաղկած գիւղերը հիմայ անմարդաբնակ աւերակներ էին, լիքը կոտորվածների դիակներով»[128]: 1811 թ. նոյեմբերի կեսերին ռուսներից վրեժխնդիր լինելու նպատակով Ախալքալաքի գավառից լեզգիներն ու թուրքերը ներխուժեցին Բորչալուի սահմանները: Նորից տուժեց Լոռիում վերաբնակված հայ բնակչությունը: Ահա ինչու արևելահայ և արևմտահայ վերաբնակիչները որոշ ժամանակ անց թողնում էին այդ տարածքը և անցնում Վրաստանի խորքերը, որտեղ նրանց չէին սպառնում ավազակային հարձակումները[129]: Ուստի Բորչալուի մոուրավին և կառավարիչներին հատուկ հանձնարարություն էր տրվում՝ նրանց համար ստեղծել կյանքի անհրաժեշտ պայմաններ, ինչպես նաև վերահսկել, որ տեղի բնակիչները օգնեն վերաբնակիչներին՝ հողը հերկելու, ապահովեն նրանց սերմացուով, հացով և այլն:

Հայերի վերաբնակեցումը Կարսի և Ախալցխայի փաշայություններից Լոռի շարունակվեց նաև հաջորդ տարիներին: Ելնելով ռուսական պետության շահերից, Գեներալ Տորմասովի հաջորդները ևս չհրաժարվեցին քրիստոնյա վերաբնակիչներին հենց Լոռիում տեղավորելու քայլերից: Թուրքիայի սահմանային շրջանները մարդաթափելու նպատակով ցարական կառավարությունը շարունակում էր նոր արտոնություններ խոստանալ վերաբնակվողներին: Նրանք հինգ տարով ազատվելու էին հարկերից, ստանալու էին Ռուսաստանի պետական գյուղացիներին հավասար իրավունքներ, պետական միջոցներով նրանց համար հացահատիկ էր գնվելու և այլն: Ինչպես տեսնում ենք, Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատարները ջանք չէին խնայում՝ վերաբնակեցնելու Բորչալուի, Լոռու տարածքները, տնտեսապես զարգացնելու, ինչը միանգամայն բխում էր Ռուսական կայսրության շահերից:

128 Երիցյան Ալ., նշվ. աշխ., էջ 234:
129 Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը..., «Իրան-նամէ», 1998, N 1-2-3, էջ 14:

1811 թ. աշնանը գեներալ Ֆ. Պաուլուչչիի գաղտնի հրամանով Ախալցխայի ու Կարսի սահմանների ռուսական զորքերի հրամանատար գնդապետ Դ. Լիսանևիչը եռանդուն գործունեություն ծավալեց նոր ներգաղթ խրախուսելու և հարևան երկրների հպատակներին Լոռիում վերաբնակեցնելու ուղղությամբ: Փամբակից ու Շորագյալից փախած թաթարներին վերադարձնելու համար առաջարկվում էր տեղերում իջեցնել հարկերը, երեք տարով ազատել հարկային պարտավորություններից[130]: 1812 թ. հունվարի 17-ին Ֆ. Պաուլուչչին առաջարկում է մինչև գարուն իրագործել Լոռու բնակեցման հարցը՝ 57 ջավախքցի ընտանիքների, Փամբակում գտնվող 100 ընտանիք Կարսի թաթարների և Փամբակում ու Շորագյալում հաստատված 38 ընտանիք հայ կաթոլիկների հաշվին[131]: Նա Աղա Մահմադ խանի արշավանքներից ամայացած Լոռին վերաբնակեցնելը շահավետ էր համարում մի քանի տեսանկյունից. առաջին՝ բնակիչները հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու դեպքում մեծ շահույթ կբերեն պետությանը, երկրորդ՝ այդ ամայի տարածքը, որը Փամբակը բաժանում է Վրաստանից, բնակեցնելու խնդրում մնալով առանց կառավարության հոգատարության և սահմանակից լինելով Ախալցխային ու Կարսին, ծառայում էր որպես ավազակների ապաստարան: Թաքնվելով այստեղ, հրոսակախմբերը ավազակային հարձակումներ էին գործում Բորչալուի տարածք, իսկ այդ հողերում վերաբնակիչներ բնակեցնելով՝ Փամբակի հետ հաղորդակցությունը կդառնար անվտանգ և վերջ կդրվեր ավազակների ներթափանցելուն Վրաստան: Վերջապես, ցարական գանձարանը կունենար շոշափելի օգուտներ, քանի որ մի քանի տարի անց վերաբնակիչներից պետք է գանձվեին Վրաստանի բնակիչներին հավասար հարկեր: Բացի այդ, Լոռու տարածքում կային պղնձահանքեր, որոնց շահագործմամբ խիստ շահագրգռված էր ցարական կառավարությունը: Այս ծրագիրն իրականացնելու համար գործի են դրվում բոլոր հնարավոր

---

[130] АКАК, т. 6, Тифлис, 1874, ч. 1, док. 23, с. 21, т. 7, Тифлис, 1876, док. 831, с. 847.

[131] АКАК, т. 5, Тифлис, 1873, док. 28, с. 18.



միջոցները:

1812 թ. մարտի 27-ին Ֆ. Պաուլուչչին խնդրագիր է հղում Վրաստանի քաղաքացիական նահանգապետին՝ Կարսի փաշայությունից եկած բնակիչներին բնակեցնել Լոռիում: Այդ ջանքերի արդյունքում 100 ընտանիք մահմեդականներ (որոնցից՝ 15 ընտանիք հայեր), իրենց համայնքի առաջնորդ Աբդուլլա աղայի գլխավորությամբ անցան ռուս-թուրքական սահմանը՝ բնակություն հաստատելու նախօրոք որոշված վայրում՝ Լոռիում: Այդ առիթով Պաուլուչչին նահանգապետին գրում է. «Կարսից Աբդուլլա աղայի հետ դուրս եկած 100 ընտանիքները, իմ ցուցումով, պետք է բնակվեն հին Լոռի քաղաքի ամրությունների մերձակայքում»[132]: Պաուլուչչին գնդապետ Լիսանևիչին հրամայում է նորաբնակներին վերցնել իր անձնական վերահսկողության տակ, միաժամանակ խնդրում է հավաստիացնել Աբդուլլա աղային, որ նրանք կունենան Ղազախի և Բորչալուի աղալարներին հավասար իրավունքներ, և նրանց հետ եկած բոլոր ընտանիքները կթողնվեն նրանց ենթակայության տակ[133]: Աբդուլլա աղային Լոռիում վերաբնակեցնելը Պաուլուչչին հետաձգում է առաջիկա ցրտերի պատճառով և ձմեռն անցկացնելու համար նրանք մնում են Փամբակում, բայց առաջին իսկ հնարավորության դեպքում պետք է տեղափոխվեին Լոռի:

Գեներալ Պաուլուչչին ձեռք է առնում շտապողական քայլեր՝ վերաբնակիչների համար Փամբակի բնակիչների օգնությամբ Լոռիում տներ կառուցելու, պետական գանձարանի միջոցով նրանց անհրաժեշտ սննդով ապահովելու համար: Նա խնդրում է ներքին գործերի նախարարին՝ դիմել կայսրին նորաբնակներին շնորհելու յոթ տարվա հարկային և այլ արտոնություններ: Կարսեցի վերաբնակիչների համար նախատեսվում էին անհրաժեշտ քանակությամբ գութաններ, որոնք պետք է տրամադրեին մոտակա գյուղերի գյուղացիները՝ առանց փոխհատուցման[134]: Մինչև 1812 թ. գարուն վերա-

---

[132] Присоединение..., т. 1, док. 481, с. 601.

[133] АКАК, т. 5, док. 145, с. 111.

[134] Присоединение..., т. 1, док. 481, с. 601.

բնակիչները պետք է ապահովվեին ցանքսի միջոցներով, ժանտախտից տուժած գյուղերը երեք տարով ազատվելու էին հարկերի վճարումից[135]: Գաղթողները գտնվելու էին պետական հատուկ հոգածության ներքո:

Այս քաղաքականության նպատակն էր՝ շահագրգռել հարևան տարածքների բնակիչներին՝ հատկապես քրիստոնյաներին, տեղափոխվելու: Որոշվեց ստեղծել գաղթականության ընդունման և տեղավորման հանձնաժողով, որը պետք է մինչև 1812 թ. գարունը զբաղվեր Վրաստանում և Փամբակում հաստատված ջավախքցի, ախալցխացի, կարսեցի հայերին, հույներին ու մահմեդականներին Բորչալուի գավառում տեղավորելու, նրանց համար բնակարաններ կառուցելու, հացահատիկով ապահովելու խնդիրներով: Վերաբնակիչների բնակատեղիների ընտրության գործը դրվում էր հանձնաժողովի վրա, հրահանգվում է եկվորներին բնակեցնել պետական հողերում:

1810 թ. վերջերին և 1811 թ. ընթացքում սահմանն անցած կարսեցիներն ու արևմտահայ մյուս վերաբնակիչները տեղավորվեցին ինչպես Բորչալուում, այնպես էլ Ռուսաստանին անցած հարևան մյուս գավառներում՝ Փամբակում և Շիրակում[136]: Ռուսական իշխանություններն այս անգամ որոշել էին նրանց բնակեցնել միայն անբնակ վայրերում: Այդ որոշումը վերաբերվում էր թե՛ նոր վերաբնակներին, և թե՛ տարիներ առաջ տարբեր առիթներով Բորչալուի գավառից հեռացածներին: Սակայն այդ քայլերը մեծ արդյունք չտվեցին՝ չնայած կառավարությունը դարձյալ միջոցներ ձեռնարկեց փախստականների ծանր վիճակը թեթևացնելու համար:

1812 թ. մայիսի 16-ին կնքված Բուխարեստի հաշտության պայմանագրով Ախալքալաքի բերդն ու գավառն Օսմանյան կայսրությանը վերադարձնելուց հետո թուրքական իշխանությունները սաստկացրին ռուսներին օժանդակած արևմտահայության հալածանքները: Նրանց վիճակի վատթարացումն ստիպում էր շատերին իրենց փրկությունը

[135] АКАК, т. 5, док. 145, с. 111.
[136] Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 118:



փնտրել ռուսական տիրապետության տակ անցնելու մեջ: 1814 թ. Փամբակում ռուսական զինվորական մարմիններն արևմտահայերից ստանում էին բազմաթիվ խնդրագրեր՝ Անդրկովկասի ռուսահպատակ մարզեր տեղափոխվելու թույլտվություն ստանալու համար[137]:

1814 թ. Կարսի Մահմեդ փաշան և Կարա բեկը, անհանգստացած իրենց նահանգից դեպի ռուսական տիրույթներ արտագաղթից, գեներալ Ն. Ռտիշչևին խնդրում են Փամբակում և Շորագյալում բնակվող իրենց փաշայության բնակիչներին ուղարկել նախկին բնակության վայրերը, փորձելով այդ պահանջը հիմնավորել Բուխարեստի պայմանագրի այն դրույթով, որն արգելում էր հպատակների ազատ երթևեկության իրավունքը[138]: Սակայն ռուսական զինվորական իշխանություններն իրականում խոչընդոտում էին բնակչության վերադարձին: Գեներալ Ֆ. Սիմոնովիչը 1815 թ. մարտի 20-ին գեներալ Ռտիշչևին ներկայացրած զեկուցագրում հայտնում է, որ այդ բնակիչներից Ղարաքիլիսայում բնակվում է 110 ընտանիք, Գյումրիում՝ 20, Բեկանտում՝ 50, Համամլուում՝ 10, Փոքր Ղարաքիլիսայում՝ 20, Լոռիում՝ 60, Օձունում՝ 6, Ճոճկանում՝ 14, Թիֆլիսում՝ 30, Ղազախի և Շամշադինի ուղեմասում՝ 150, Կախեթում և Քարթլիում՝ 133, ընդամենը՝ 603 ընտանիք[139]: Սիմոնովիչը հայտնում է, թե ընդհանուր առմամբ վերադառնալու ցանկություն ունեն 37 ընտանիք[140]: Լոռիից վերադառնալ ցանկանում էին 25 ընտանիք: Իսկ մնալու ցանկություն է հայտնել՝ Ղարաքիլիսայում՝ 22, Լոռիում՝ 22, Համամլուում՝ 5, Բեկանտում՝ 18, Գյումրիում՝ 13, Փոքր Ղարաքիլիսայում՝75, ընդամենը՝ 155 ընտանիք[141]:

Գեներալ Ռտիշչևն առաջարկում է խոչընդոտել Լոռիում հաստատված 25 ընտանիքների վերադարձը, «քանի որ նրանց բնակեց-

[137] Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (այսուհետև՝ Էրզրում), էջ 122, նույնի՝ Ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգի Բայազետ, Դիադին և Ալաշկերտ գավառներում 19-րդ դարի առաջին երեսնամյակին, «ԼՀԳ», 1988, N 5, էջ 16:
[138] Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 141:
[139] АКАК, т. 5, док. 952, с. 816.
[140] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 59:
[141] АКАК, т. 5, док. 952, с. 816.

ման համար պետական միջոցներից տրամադրվել է 1908 ռ. 75 կ. հաց գնելու նպատակով, բացի այդ պետության նպատակն է Լոռու վերաբնակեցումը, որն իր դիրքով հողագործության տեսանկյունից Փամբակի ուղեմասի լավագույն տեղանքներից է, այդ պատճառով ես ենթադրում եմ նրանց թողնել այստեղ, թույլ չտալ երբևէ վերադառնալ»[142]:

Սակայն բնակչության տեղաշարժերը շարունակվեցին կարգավորվել տարերայնորեն, իսկ Հյուսիսային Հայաստանը մնաց ամայի ու նոսր բնակեցված տարածք: 1817-1818 թթ. իր զեկուցագրերում գեներալ Ա. Երմոլովը կառավարության ուշադրությունը հրավիրում է Փամբակ-Շորագյալի հատվածի, Սոմխեթի և Ծալկայի գավառների ամայության և դրանցից բխող բացասական հետևանքների վրա[143]:

1810-1816 թթ. ընթացքում Անդրկովկասում եղած անգլիացի ճանապարհորդ Ջեյմս Մորիերը, Երևանից Ղարաքիլիսա ճանապարհորդության ընթացքում լինելով Փամբակում, գրում է. «Մինչև Ղարաքիլիսե... որ սահմանի վրա ռուսների զինվորական գլխավոր կայանն է, մենք բնակության հետքերը միայն տեսանք, ամեն ինչ կատարյալ ամայության մեջ էր, շնորհիվ վերջին տասնհինգ տարվա երկու ազգերի մեջ մղվող քայքայիչ պատերազմի: Նույնիսկ բուսականությունը հաստատում էր այս, որովհետև այստեղ սփռված էին մարդու և ձիու ոսկորներ...»[144]:

Այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանի գյուղերից և քաղաքներից արտագաղթ տեղի էր ունենում, թեև ռուսական իշխանությունները բացահայտորեն չէին խրախուսում այն:

Այսպիսով, մինչև 1820-ական թթ., վերաբնակեցումների շնորհիվ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանների, մանավանդ Լոռու գավառի ազգաբնակչությունը զգալի համալրվեց: Դա մեծ մասամբ պայմանավորված էր ռուս հրամանատարության՝ Լոռին բնակեցնելու

---

[142] Նույն տեղում, c. 817.

[143] Մանուկյան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թթ. վերջերին և 30-ական թթ. սկզբներին, Ե., 2005, էջ 49:

[144] Հակոբյան Հովհ., նշվ. աշխ., էջ 331:



շահագրգռվածությամբ: Ռուս հրամանատարների զեկուցագրում շեշտվում է Բորչալուի և Լոռու ամայի լինելու մասին[145]: Բայց դրան պետք է մոտենալ վերապահումով, ի նկատի ունենալով, որ տեղի կալվածատիրական կամ վանքապատկան բնակչությունը ռուսների կողմից չի հաշվառվել որպես պետական բնակչություն: Ռուսները փորձում էին կալվածատիրական հողերը ձեռք բերել գնման միջոցով, որից հետո դրանք բնակեցնել ըստ իրենց հայեցողության: Դեռևս 1804 թ. փետրվարին 24-ին Ցիցիանովը Մուսին-Պուշկինին գրում է, որ Լոռու Սողոմոն Արղության-Երկայնաբազուկ իշխանը որպես փոխհատուցում խնդրում է տրամադրել այլ հող, ուր նա կբնակվի իր գյուղացիներով[146]:

Ընդ որում գնված հողերում, տվյալ պահին Լոռիում, առանց ռուսական պաշտոնյաների և գործարանային գերատեսչությունների թույլտվության, ոչ ոք իրավունք չուներ բնակվելու, անգամ օգտվելու բնական պայմաններից: Ինչ վերաբերվում է Լոռիում հաստատվելու ազնվականների ցանկությանը, ապա այդ դեպքում կառավարությունը պետք է վերանայեր յուրաքանչյուր ազնվականի իրավունքները, և ովքեր ունենային վրացական թագավորներից ազնվականության հաստատագիր, նրանք հավասար կհամարվեին տեղացի ազնվականներին[147]: (Ռուսաստանի տիրապետության հաստատմամբ աստիճանաբար ակնհայտ է դառնում հայ ազնվականների կողմից իրենց ազգանունների վերջնամասը «ով» կամ «իև» բառակապակցություններով փոխարինելու միտումներ):

1821-1822 թթ. թուրք-պարսկական պատերազմը նպաստեց Արևմտյան Հայաստանից նոր ներգաղթի: Ռուս հրամանատարությունը շարունակում էր վերահսկել այդ գործընթացները: Այս պահից սկսած ավելի ակնառու են դառնում վերաբնակիչներին նախատեսված վայրերում տեղավորելու միտումները: 1821 թ. հուլիսի 29-ի համար 62 փաստաթղթից տեղեկնում ենք, որ գնդապետ Լ. Սևարսամիձեին

---

[145] АКАК, т. 1, док. 576, с. 474, т. 2, док. 383, с. 204, док. 384, с. 205, док. 385, с. 206, док. 132, с. 208-209, т. 4, док. 122, с. 171, док. 1434, с. 932.

[146] АКАК, т. 2, док. 187, с. 210.

[147] Նույն տեղում, т. 4, док. 252, с. 172.

հանձնարարված է վերաբնակեցնել Լոռու տափաստանը՝ Փամբակի և Շորագյալի բնակիչներով, Թուրքիայից ու Պարսկաստանից եկածներով[148]:

1821 թ. ապրիլին Վրացական կառավարության Լեռնային էքսպեդիցիան ներկայացնում է Ալավերդու պղնձաձուլական գործարանի հանքարդյունաբերողների և հանքափորների խնդրանքը, որ նրանք բավարար քանակությամբ հող չունեն՝ հողագործությամբ զբաղվելու համար, քանզի միայն հանքային աշխատանքներով չեն կարողանում բավարարել իրենց ընտանիքների պահանջմունքները: Խնդրում են դրա համար տրամադրել Լոռու գավառում դեռևս Մուսին-Պուշկինի կողմից որպես պետական գնված ամայի գյուղերը՝ այդ թվում՝ Կողես և Յաղդան՝ 329 մարդու բնակվելու համար: Սևարսամիձեն դիմումին պատասխանում է, որ գյուղերը նոսր են բնակեցված, և 329 հոգու բնակվելու համար պայմաններ կստեղծվեն[149]:

1822 թ., երբ պարսկական 12 հազարանոց բանակը պաշարում է Կարսը, Կարսի փաշայությունից դեպի Փամբակ հայերի տեղաշարժը նոր թափ է ստանում: Ռուսական տարածքներ են անցնում նաև բազմաթիվ էրզրումցիներ ու բայազետցիներ: 1822 թ. Շիրակի դաշտ եկածների թիվը մեծ չափերի է հասնում, ուստի նրանց տեղավորելու համար ռուսական զինվորական մարմինները գաղթականների ընդունման հատուկ հանձնաժողով են ստեղծում: Վերոհիշյալ արևմտահայերից հանձնաժողովը 500 ընտանիք բնակեցրեց Գյումրիում, մեկ այլ խումբ էլ՝ Լոռիում: Վերջին խումբը բաղկացած էր ալաշկերտցիներից, որոնք 13 տարի Լոռիում ապրելուց հետո տեղափոխվեցին Աշոցքի Ղազանչի գյուղը[150]:

Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին ձգտում էր ամեն գնով թեթևացնել վերաբնակիչների վիճակը, նա «...գրաֆ Պասկևիչի հետ մտավ Հայաստան ու հայոց մեծ մասը՝ քարոզելով, հորդորելով, ռսի ձեռի տակը բերեց: Քանի-քանի քաղաքներ, գեղեր

[148] Присоединение..., т. 2, Е., 1978, док. 62, с. 87.
[149] Նույն տեղում, с. 87-88.
[150] Մելքոնյան Ա., էրզրում, էջ 127, նաև՝ ժողովրդագրական տեղաշարժերը..., «Իրան-Նամէ», 1998, N 1-2-3, էջ 15:



դատարկվեցան ղզլբաշի ու օսմանցվի երկրումը ու քանիսն էր Հայաստան, Վրաստան նրանցով լցվել...»[151]: Աշտարակեցին գրություններով խրախուսում է Կարսից Լոռի ապաստանած հայերին, հորդորում՝ հետևել նոր երկրի պետական օրենքներին[152]: 1826 թ. նա հատուկ գրությամբ դիմում է Լոռու բնակչությանը՝ խնդրելով աջակցել պարսիկների դեմ պատերազմող ռուսական զորքին:

1820-ական թթ. վերջերի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանի գավառներից տեղի է ունենում բնակիչների նոր ներհոսք: Արևմտահայ վերաբնակիչների մի մասը դարձյալ հաստատվում է Լոռիում[153]:

1826-1828 թթ.՝ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, ըստ Խ. Աբովյանի տեղեկությունների, Ղարաքիլիսայում ապրել է 500-600 մարդ՝ մեծամասամբ հայեր[154]: Դրանց մի մասը եկել էր Երևանից ու Արարատյան դաշտավայրից, մի մասն էլ՝ ռուս զինվորականներ ու պաշտոնյաներ էին, քանի որ Ղարաքիլիսան այդ ժամանակ ռուսական զորքերի ռազմական կայան էր:

1828-1829 թթ. ընթացքում Պարսկաստանից վերաբնակված մոտ 8-8,5 հազար ընտանիքների (45-50 հազար մարդ) տեղաբաշխման թվական տվյալները վերաբերվում են հիմնականում Հայկական մարզում վերաբնակվածներին՝ մոտ 6946 ընտանիք (35560 մարդ): Մնացած մոտ հազար մարդը բնակվեց Ղարաբաղի խանության, Զանգեզուրի, Շիրակի, Լոռի-Փամբակի տարածքներում:

1828 թ. փետրվարի 14-ին պարսկահայերի արտագաղթն իրականացնող գնդապետ Լազարյանը գեներալ Ի. Պասկևիչին (1827-1831 թթ. Վրաստանի կառավարչապետ) նամակով հաղորդում է, որ հայերը, թողնելով իրենց ողջ գույքը, պատրաստ են արտագաղթել Ռուսաստանին անցած տարածքներ[155]:

[151] Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, Ե., հ. 8, 1958, էջ 158:
[152] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու ֆ., թղթ. 165, վավ. 682, թղթ. 166ա, վավ. 78:
[153] Մելքոնյան Ա., էրզրում, էջ 127:
[154] Աբովյան Խ., նշվ. աշխ., էջ 57-58:
[155] АКАК, т. 7, док. 553, с. 595.

1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի կնքումից հետո, երբ ռուսների կողմից գրավված Արևմտյան Հայաստանի գավառները վերադարձվում են Օսմանյան կայսրությանը, ծանր կացություն է ստեղծվում հայերի համար: Ամբողջ պատերազմի ընթացքում արևմտահայությունը ջերմ աջակցություն էր ցույց տվել ռուսական զորքին՝ մեծապես նպաստելով նրա հաղթանակին: Շատ արևմտահայեր, խուսափելով թուրքական կառավարության հաշվեհարդարից, գերադասում էին թողնել հայրենի հողերը և անցնել ռուսական տարածքներ:

Ցարական կառավարությունը ցանկանում էր գրավված տարածքները բնակեցնել հուսալի տարրով: Այդպիսին լինելու էին ռուս վերաբնակիչները ի դեմս կոզակների, սակայն նման վերաբնակեցումը կապված էր մեծ դժվարությունների հետ, ուստի Պասկևիչն առաջարկում էր ամայի մնացած տարածքները վերաբնակեցնել արևմտահայերով: 1829 թ. հունվարի 5-ին կայսրին գրած իր նամակում նա առաջարկում է. Ախալցխայի փաշայությունից գաղթեցնել նրան սահմանակից Քարթլի, Թրիալեթ և Սոմխեթ, Կարսի փաշայությունից՝ Փամբակի և Շորագյալի ուղեմասեր ու Հայկական մարզի վերին մասեր՝ Ախուրյանից մինչև Թալին և վերջապես Բայազետի փաշայությունից՝ Հայկական մարզի այն մասը, որը գտնվում է Արաքսի ձախ ափին: Կարճ ժամանակ անց կայսրը հավանություն է տալիս Պասկևիչի առաջարկությանը[156]:

1829 թ. հոկտեմբերի 10-ին Նիկոլայ I-ին հղած զեկուցագրում Պասկևիչը թույլտվություն է խնդրում շուրջ 10 հազար արևմտահայ ընտանիքների, որոնց վտանգ էր սպառնում, բնակեցնել Վրաստանում և Հայկական մարզում[157]: Հայերի մի մասը համաձայն էր վերաբնակվել անգամ առանց կառավարությունից որևէ օգնություն հայցելու: Ադրիանապոլսի պայմանագրի կնքումից հետո, բայազետցիների մի մեծ զանգված ռուս-թուրքական սահմանն անցնելուց հետո

---

[156] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 77:

[157] Դարբինյան Մ., Էջեր Ախալցխայի և Ախալքալաքի հայերի 1829-1830 թթ. գաղթի պատմությունից, «ԲԵՀ», 1973, N 2, էջ 213:



Հայկական մարզում հաստատվելու փոխարեն նախընտրում է տեղավորվել Փամբակի և Շորագյալի գավառներում[158]:

Իհարկե, այս վերաբնակեցումները ձեռնտու էին և ռուսական կառավարությանը, և կովկասյան զինվորական հրամանատարությանը, որը, ցանկանալով ստվարացնել ռուսական կայսրությանն անցած տարածքների հայ աշխատավոր բնակչության թիվը, դեռևս 1828 թ. վերջերից հանձնարարություն ուներ՝ նախապատրաստել թուրքահպատակ քրիստոնյաների տեղաշարժը: Ի վերջո, Նիկոլայ I-ը, ելնելով Ռուսաստանի քաղաքական շահերից, հայերին թույլատրում է վերաբնակվել նորանված տարածքներում, դեռ ավելին, պետական մեծ կարևորություն ունեցող այդ գործը հաջողությամբ գլուխ բերելու համար վերաբնակիչների համար հատկացվում է 90 հազար ոսկի[159]: Խ. Աբովյանը գրում է. «Բարեխնամ կառավարությունը տեսնելով, որ աշխարքն էսպես ոտի տակ ընկավ, հրամայեց, որ Փամբակ, Շորագյալ քոչին, գան Լոռի, որ իրանց պրծացնեն»[160]: Չսպասելով գարնան բացվելուն, հայերի մի մասը, 1829 թ. հոկտեմբերին Արևմտյան Հայաստանի մի շարք տարածքներից՝ հիմնականում չորս փաշայություններից՝ Էրզրումից, Կարսից, Արդահանից, Բայազետից մոտ 12300 ընտանիք կամ 74000 մարդ անցան ռուսահպատակ տարածքներ, այդ թվում՝ Լոռի-Փամբակ[161]:

Առաջինը տեղափոխվեցին կարսեցիները, ապա՝ բայազետցիները, վերջում՝ էրզրումցիները: Կարսեցիների առաջնորդն էր Ստեփան եպիսկոպոս Խաժակյանը, էրզրումցիներինը՝ Էրզրումի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին, բայազետցիներինը՝ Մկրտիչ Արծրունին:

1829 թ. դեկտեմբերի 3-ին Ի. Պասկևիչը Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Զավիլեյսկուն տեղեկացնում է, որ գեներալ-լեյտենանտ Ն. Պանկրատևը Կարսի փաշայությունից 95

---

[158] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 100:

[159] Լեո, Սահմանավեճեր, էջ 114:

[160] Աբովյան Խ., նշվ. աշխ., էջ 160:

[161] Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 144:

ընտանիքների անցագրեր է տվել Լոռիում բնակվելու համար[162]: 1830 թ. հունվարի 22-ին ռազմական նախարար, ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ Ա. Չերնիշևին ներկայացրած զեկուցագրում Պասկևիչը գրում է. «Կարսից և նրա շրջակայքից շուրջ 2500 ընտանիք արդեն իմ կարգադրությամբ բնակվում են Ալագյազին մոտ դատարկ գյուղերում, Փամբակի դիստանցիայում, այնքանով, որ այդտեղի կլիման նման է իրենց հայրենիքին»[163]: Կարսեցիները, Պասկևիչի կողմից դեռևս 1829 թ. հունվարի 5-ին կայսրին ներկայացված նախագծի հիման վրա, պետք է տեղավորվեին Փամբակ-Շորագյալի ուղեմասում, Հայկական մարզում և Թալինի մահալում[164]: Պասկևիչը գտնում էր, որ պետք էր հոգալ վերաբնակիչների կարիքները, հակառակ դեպքում իզուր կանցնեին մինչև այժմ նրանց համար կատարած ծախսերը: Գաղթականների վիճակի բարելավելավումը կնպաստեր նրանց մշտական և կայուն հաստատվելուն նոր բնակավայրերում, կմեծացներ Ռուսական կայսրության ազդեցությունը նրանց վրա և hանձինս նրանց կայսրությունը մոտ ապագայում կունենար հուսալի և հարկատու հպատակներ:

1830 թ. գարնանը, մարտի 15-ին սկսվում է արևմտահայերի զանգվածային գաղթը, որը տևում է մինչև հունիսի 5-ը[165]: Ռուսները ճանապարհին ուղեկցում էին նրանց, որպեսզի պահպանեն հարձակումներից: Կարսի նշանավոր մարդկանցից Հակոբ Տիգրանյանի գլխավորությամբ մի քանի տուն հայեր մտադրվում են հուլիսին գնալ Փամբակ՝ Ղարաքիլիսայում վերաբնակվելու նպատակով[166]: Կարս քաղաքի ավելի քան 600 տուն բնակիչներ բաժանվում են երեք մասի, որոնցից մի խմբին. «...զի մղտեսի Ակօ անուանեալքն, երկու

162 Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 79:

163 Документы и материалы по истории армянского народа, Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870) (այսուհետև՝ Документы и материалы), составители Н. Тавакалян, Э. Костандян, В. Газарян, Г. Аракелян, С. Мирзоян, Е., 1993, с. 45.

164 Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 77, Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 165-181:

165 Документы и материалы..., с. 45.

166 Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 168:



եղբօրորդիք մաքսապետք Կարսայ եւ յոյժ ընչեղք յիւրեանս արկին զմասն մի տանել բնակեցուցանել ի Ղարաքիլիսէ աւան Փամբակու...»[167],-գրում է Էրզրումի և շրջակա բնակավայրերի հայ կաթոլիկների գաղթը ղեկավարող Եփրեմ Սեթը: Ի վերջո, կարսեցիների մեծ մասը՝ ըստ պաշտոնական փաստաթղթերի՝ ավելի քան 2264 ընտանիք, հաստատվեցին Փամբակ-Շորագյալում[168]: Մի մասի խնդրանքի համաձայն՝ բնակության վայրեր հատկացվեցին Լոռու գավառում[169]:

Ընդհանուր առմամբ, մինչև 1829-1830 թթ. հունվարը մոտ 12300 ընտանիք արևմտահայեր կամ 74 հազ. մարդ անցան ռուս-թուրքական սահմանը և տեղավորվեցին Փամբակի, Շորագյալի, Ախալցխայի գավառների գյուղերում[170]:

Էրզրումցիների առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին դիմում է ռուսական հրամանատարությանը՝ ընդառաջել, «որպէսզի ժողովուրդը գաղթէ ռուսաց կայսերութեան սահմանները. նոյնպիսի խնդիր տուին նաև կաթոլիկ հայերը իրանց վարդապետի ձեռքով»[171]:

1829 թ. վերջին Էրզրումի նահանգից 59 ընտանիք հայ կաթոլիկներ գեներալ Ն. Պանկրատևի ցուցումով տեղափոխվեցին Փամբակի գավառ[172], որտեղից շատերը խնդրում էին իրենց բնակության վայր տրամադրել եթե հնարավոր է՝ Ախալցխայում և դրա շրջակայքում: Գաղթականների մի խումբը բարեհաջող անցնում է ռուսական սահմաններ: Գյուտ քահանա Աղանյանցը գրում է. «Եւ շատ

167 Կարապետյան Մ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830 թթ. գաղթի մասին, «ՊԲՀ», 1997, N 2, էջ 292:

168 Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 84:

169 Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829-1830 թթ. գաղթը Հայկական Մարզ և հարակից շրջաններ, «ՊԲՀ», 1974, N 2, էջ 94, նաև՝ Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., «ԲՀԱ», 1977, N 3, с. 8-9, Դավթյան Ա., Ջավախք, Ե., 1994, էջ 34-35:

170 Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 144:

171 Գիւտ քահանա Աղանեանց, Կարնոյ գաղթը (1829-1830), Թիֆլիզ, 1891, էջ 5:

172 Дарбинян М., Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., «ԲՀԱ», 1977, N 3, с. 8-9, Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 139:

յաջող եղաւ առաջին անգամ գաղթող յիսունաչափ տների կարաւանի բաղդը, որովհետև ճանապարհին նոցա պատահեց սպարապետը, որ Թիֆլիզ էր վերադառնում, և մի գունդ զօրք դրեց նոցա հետ պահպանութեան համար, որ մինչ Ղարս հասցնեն: Կաթոլիկները Ղարսից Լոռի անցան Շահնազար, Մօլլասուլէյման, Ղարաքիլիսէ և Սարչապետ գիւղերը ձմեռն այնտեղ իրանց կրօնակիցների հետ անցկացնելու, իսկ հայերին ախորժելի թուեցաւ Ղարս մնալ, մինչև տեսնեն թէ վերջը ինչ է լինելու»[173]: Բայց քանի որ նախատեսված էր հուլիսի 5-ին Կարսը հանձնել թուրքերին, ռուսական հրամանատարությունը այստեղ իջևանած էրզրումցի բնակիչների մյուս խմբին տեղափոխում է Ախուրյանի ձախ ափը, մինչև որ փոխադրամիջոցներ կհայթայթվեն: Մոտ 1800 էրզրումցի ընտանիք Ախուրյանի ափին երկու ամիս մնացին՝ սայլեր չլինելու պատճառով: Օգոստոսի 2-ին այստեղ եկավ տեղափոխվող ժողովրդի նոր վերակացու մայոր Անոսովը, որին հանձնարարված էր հոգ տանել օսմանյան սահմաններից եկածների մասին, մինչև հասնեն նախատեսված վայրերը: «Նա պատվիրեց ժողովրդին, որ ազատ կերպով ամեն մեկն իրեն համար տեղ ընտրե ռուսաց իշխանության մեջ: երկու հարյուր տան չափ գրվեցան Փամբակ գնալու, որոնք քիչ-քիչ, ոմանք սայլերով ոմանք՝ եզներով ու գրաստներով հասան իրանց տեղերը, և ոմանք զետեղուեցան մօտակայ գիւղերը, որ այնտեղ ձմեռը հանգստանան, մինչև քաղաքը կշինուէր. իսկ գարնանը պէտք է ժողովուէին քաղաքում մշտական բնակութիւն հաստատելու համար»[174]:

Էրզրումից եկած բնակչության մեջ տարաձայնություն ծագեց տեղի ընտրության շուրջ. Էրզրումից նոր եկած բնակչությունը որպես բնակավայր ընտրեց Ախալցխան, իսկ նրանցից առաջ եկածները դեռ Լոռիում էին և պնդում էին, որ այստեղ հիմնեն իրենց բնակավայրերը: Երկար նամակագրություններից հետո երկու կողմերն էլ սկսեցին զննել տարբեր վայրեր՝ Լոռին, Շորագյալը, Փամբակը, ի վերջո

---

[173] Գիւտ քահանա Աղանեանց, Կարնոյ գաղթը, «Արձագանք», Թիֆլիս, 1891, 26-ը մայիսի, N 11, էջ 166:
[174] Նույն տեղում, 1891, 2-ը հունիսի, N 12, էջ 184:



ընտրեցին Փամբակի Ղարաքիլիսան՝ ղարաքիլիսցիների հետ այնտեղ բնակվելու համար: Գնալով Թիֆլիս՝ էրզրումցի կաթոլիկների անունից նրանք խնդրանք ներկայացրին կառավարությանը՝ Ղարաքիլիսայում վերաբնակվելու թույլտվություն ստանալու: Նրանց պատասխան տրվեց, որ Էրզրումցիների համար որպես բնակավայր նախատեսվել է Ախալցխան, իսկ իրենք, եթե կամենում են՝ կարող են մնալ Փամբակում: 200 ընտանիք տեղավորվեց Մեծ Ղարաքիլիսա գյուղում[175]: Հայ կաթոլիկներ տեղավորվեցին նաև Լոռու գյուղերում[176]:

Էրզրումի փաշայությունից եկած մյուս հայ, ինչպես նաև հույն ընտանիքները տեղափոխվում են Լոռու և Ծալկայի շրջանի 14 հայկական գյուղեր[177]:

Էրզրումից և շրջակա գավառներից եկածների թիվը, Վրաստանի զինվորական նահանգապետ Ստրեկալովի՝ Պասկևիչին ներկայացրած զեկուցագրի համաձայն, կազմում էր 7298 ընտանիք կամ 41000 մարդ, որոնցից 1050 ընտանիք բնակություն էր հաստատել Բորչալուում և Ծալկայում, 1248 ընտանիք էլ՝ Փամբակ-Շորագյալի ուղեմասում. այստեղ տեղավորվեց նաև 59 ընտանիք կամ 331 մարդ հայ կաթոլիկ[178]:

Արևելյան Հայաստանի սահմաններում եկողներին դիմավորում և նրանց տեղավորման հարցով զբաղվում էին այդ նպատակով նշանակված սպաները: Օրինակ՝ Փամբակի և Շորագյալի ուղեմասում վերաբնակիչների գլխավոր վերակացուն էր մայոր Անոսովը, իսկ Բորչալուի ուղեմասում՝ կապիտան Ն. Կամենսկին, որոնք տեղեկություններ էին հաղորդում եկած և տեղավորված ընտանիքների մասին[179]: Վերաբնակիչներին տեղավորելու հարցում ռուսական իշխանությունները խստորեն հետևում էին նախօրոք նշված վայրերում բնակեցնելու խնդրին. տարբեր գավառներից եկողների

---

[175] Գիւտ քահանա Աղանեանց, Կարնոյ գաղթը, էջ 28:
[176] Պողոսյան Ա., Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Ե., 1974, էջ 114:
[177] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 829:
[178] Дарбинян М., Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., «ԲՀԱ», 1977, N 3, с. 20-21.
[179] Մանուկյան Ե., նշվ. աշխ., էջ 144-145:

համար նախատեսվում է բնակության կոնկրետ շրջան: Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Զավիլեյսկին 1830 թ. մայիսի 27-ին Ի. Պասկևիչին գրած զեկուցագրում նշում է. «Գլխավոր բնակեցման վայրերը նախատեսված են. Էրզրումից եկածները՝ մի փոքր մասը Վրաստանում՝ Փամբակի և Շորագյալի դիստանցիաներում, իսկ մեծ մասը՝ Ախալցխայում և նրա շրջակայքում: Կարսից եկածները՝ Փամբակի և Շորագյալի դիստանցիաներում: Բացի դրանից, Գյումուշխանեից եկած հույն ընտանիքները բնակեցվել են Վրաստանում՝ Բորչալուի դիստանցիայում, Ծալկայի և Մանգլիսի միջև»[180]: Նրանց մի մասը հաստատվում է Ղարաքիլիսայում. «Որովհետև Գիմիշխանցի եօթանասուն տուն յոյներ Պասկևիչի արշաւանքների ժամանակ եկան անցան Վրաստան,-գրում է Գիւտ քահանա Աղանեանցը- ընտրեցին Փամբակի Ղարաքիլիսէ աւանը՝ կարսեցիների հետ այնտեղ բնակուելու...»[181]:

Իհարկե, տեղի ընտրության հարցում առաջնային էին ռուսական իշխանությունների շահերը, որոնք ցանկանում էին գրավված հողերը բնակեցնել առաջին հերթին քրիստոնյա հայերով: Կարսեցիների մի մասին Փամբակի ուղեմասում բնակեցնելը Ի. Պասկևիչը բացատրում է տեղի և վերաբնակիչների հայրենիքի կլիմայական պայմանների նմանությամբ[182]: Էրզրումից և նրա կենտրոնական գավառներից եկածների որոշ մասը ևս մնաց Լոռիում[183]:

1830 թ. արևմտահայերի զանգվածային տեղափոխությունից հետո Փամբակում հաստատվեցին նաև բայազետցիներ և ալաշկերտցիներ: Ալաշկերտցիների մի մասը բնակություն հաստատեց Լոռու հյուսիսում (հիմնականում ներկայիս Տաշիրի տարածաշրջանում)[184]:

Այսպիսով, վերաբնակեցումն ունեցավ թե՛ դրական, թե՛ բացասական հետևանքներ. այն հազարավոր ընտանիքներ փրկեց ոչնչացման վտանգից: Մյուս կողմից վերաբնակեցումների հետևանքով հիմնովին փոխվեց Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի որոշ գավառների բնակչության թվական կազմը:

[180] Դարբինյան Մ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1977, N 3, էջ 8-10:
[181] Գիւտ քահանա Աղանեանց, Կարնոյ գաղթը, էջ 10-12:
[182] Մելքոնյան Ա., Ջավախքը..., էջ 185:
[183] Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 139:
[184] Народы Кавказа, с. 441.



Դեռևս 1829 թ. հունվարին Պասկևիչը կարծում էր, թե Արևմտյան Հայաստանից վերաբնակվելու են 8000 ընտանիքից ոչ ավելի և Գաղթականական կոմիտեին կարգադրում է պետական ամայի հողատարածություններից բնակության վայրեր ընտրել միայն այդքան ընտանիքի համար: Այդ պատճառով Փամբակի և Շորագյալի գավառները տրամադրվեցին միայն կարսեցիների վերաբնակեցման համար: Դրությունը բարդացավ 1830 թ. ապրիլի վերջերից, երբ Կարսի և Բայազետի փաշայություններից վերաբնակվել էին ավելի քան 4880 ընտանիք, իսկ 7000-ից ավելի ընտանիք պատրաստվում էին գալ Էրզրումի փաշայությունից: Այդ ժամանակ կոմիտեն որոշեց Էրզրումցի վերաբնակիչների մի փոքր մասին տեղավորել Փամբակ-Շորագյալի ուղեմասում՝ կարսեցիների հետ համատեղ[185]:

Լոռու գավառում ըստ բնակավայրերի տեղաբաշխված վերաբնակիչների թվի պարզաբանումը դժվարություններ է հարուցում՝ կապված առկա գրականության և պատմական աղբյուրների սակավ կամ թերի լինելու հետ: Այդ ամենին գումարվում են նաև պետական պաշտոնյաների թույլ տված բացթողումները, հատկապես երբ խոսքը վերաբերում է Արևմտյան Հայաստանից եկածների՝ Լոռու կոնկրետ բնակավայրերում տեղաբաշխմանն ու նրանց թվաքանակի տվյալներին: Խնդիրը բարդանում է նաև այն հանգամանքով, որ հիմնականում սահմանազատում չի դրվել Լոռու, Փամբակի և Բորչալուի միջև:

Այսպիսով, Անդրկովկասի աստիճանական նվաճման գործընթացով պայմանավորված, ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ ստվար զանգվածներ՝ անձի ու գույքի ապահովություն ձեռք բերելու ակնկալությամբ, ցանկություն հայտնեցին ինքնակամ տեղափոխվել ռուսական հպատակություն ընդունած տարածքներ, այդ թվում՝ Լոռի: Չնայած, այստեղ գալով, արևմտահայերը զերծ չմնացին սոցիալական և ազգային ճնշումներից: 1830 թ. դեկտեմբերի 12-ին Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Զավիլեյսկին Թիֆլիսի հայոց

[185] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 110:

Յովհաննէս եպիսկոպոսին գրում է Լոռու ղոնլուջեցի 40 ընտանիքի մասին, որոնք նեղվում էին թուրք Բայթալ Օղլուց. «Ըստ թղթոյ Սրբազնութեան Ձերոյ..., յորում եդեալ էր խնդրագիր երկուց քահանայից և միոյ էրէցփոխանի վէքիլաց 40 տանց հայոց բնակելոց ի գաւառին Լոռւոյ ի գիւղն Ղօնլուջայ որք բողոքեն զթուրք Բայթալ Օղլւոյն վասն մուծանելոյ նորա զանասունս իւր յեկեղեցին, և վասն ծակելոյ զքարինս որմոց նորա, ես հրամայեցի Բամբակու գլխաւոր վերակացուին հոգ տանիլ առ ժամայն, որպէս ի թուրք Բայթալ Օղլին չունիցի զյարաբերութիւն ինչ ի գեղջն յիշեալ և վասն գնացից նորա և նեղելոյ զքրիստոնեայս առնել քննութիւն և զբանն առաքել ի Դատարան վասն դատելոց զյանցաւորն ըստ օրինաց»[186]:

Մյուս կողմից, հայ վերաբնակիչներն ազատվում էին ֆիզիկական ոչնչացման և ծուլման վտանգից, ձեռք բերում անձի ու գույքի համեմատական ապահովություն:

Ռուսական զինվորական իշխանությունները շարունակում էին հնարավորինս նպաստել վերաբնակեցմանը՝ հաճախ հաշվի չնստելով քրիստոնյա բնակչության կամքի հետ: Իհարկե, այդ ջանքերը միշտ չէ, որ հաջողությամբ էին պսակվում: Լինելով սահմանամերձ տարածք, Լոռին այնքան էլ ապահով վայր չէր նորաբնակների համար, ուստի նրանց մի մասը հետագայում ձգտում էր հեռանալ այլ վայրեր: Վերաբնակիչների մեծ մասն էլ, հաղթահարելով բազում դժվարություններ, մնում էր նոր վայրերում:

Պետք է նշել, որ եթե դարասկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ընթաքում ցարական կառավարությունը մեծ ջանքեր էր գործադրում՝ շահագրգռելու տարբեր վայրերի հայերին՝ տեղափոխվել Արևելյան Հայաստանի նոսր բնակեցված տարածքներ, ապա երեսնամյակի վերջին պատերազմներից հետո, հատկապես արևմտահայերի տեղափոխումը հիմնականում կամավոր բնույթ է կրում:

Հայտնի է, որ հաստատվելով նոր տարածքներում, ցարական Ռուսաստանն իր կարգերն էր հաստատում ու վարչատարածքային

[186] Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 763:



բաժանումներն էր կատարում այստեղ՝ անտեսելով ազգային սկզբունքները: Ակնհայտ է, որ ռուսական կառավարությունն իր ծրագրերն իրականացնելու համար հենվում էր առաջին հերթին հայկական տարրի վրա, ինչը վրաց պատմաբանների ու մամուլի կողմից մեկնաբանվում է որպես փոխհամագործակցություն ռուսական կայսրության և հայ ազգային-ազատագրական գործիչների միջև, իբրև թե վերջիններս առաջնորդվում էին որոշակի ծրագրերով՝ «մեկ ամբողջական տարածք ստեղծելու նպատակով գաղթավայրեր ընտրել ցրված հայերի համար»[187]: Մինչդեռ հայ հասարակական-քաղաքական գործիչները հասկանում էին, որ Անդրկովկասում հայ ժողովրդի ազատագրման հարցի լուծումը շաղկապված էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության հետ՝ պայմանավորված առաջին հերթին Ռուսաստանի հեռամետ նպատակների իրականացմամբ:

Ռազմաքաղաքական իրավիճակի պայմաններից թելադրված՝ Լոռիում տեղի ունեցան էթնիկ տեղաշարժեր՝ հայերի տեղափոխություններ, թաթարների գաղթեր, բնակավայրերի ամայացում: Ըստ այդմ կարելի է Լոռու էթնիկ գործընթացներում մատնանշել մի քանի ուղղություն.

1. Տեղաշարժեր, որոնք տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի տարածքներից դեպի Լոռի և հակառակը (թաթարների գաղթ դեպի թուրքական սահմաններ),
2. Երկրորդ խմբի տեղաշարժերը վերաբերվում են Արևելյան Հայաստանի տարբեր վայրերից դեպի Լոռի տեղի ունեցած տեղափոխություններին,
3. Երրորդ ուղղությունը՝ Լոռու սահմանների շրջանակներում ընթացած տեղաշարժերն էին (բնակիչների տեղափոխություններ Լոռու մի տարածքից մյուսը):

Այս տեղաշարժերի հետևանքով տեղի ունեցավ Լոռու գյուղերի բնակչության որոշ աճ՝ հայ բնակչության թվի համալրում:

XIX դ. առաջին երեսնամյակի ընթացքում, ռուս-պարսկական և

[187] Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1999), նյութերի ժողովածու, թարգմ.՝ Հ. Բայրամյանի, Ե., 2001, էջ 56:

ռուս-թուրքական պատերազմների հետևանքով, Արևմտյան Հայաստանից Լոռի եկած վերաբնակիչները հաստատվեցին, Շահալիում (հատկապես Կարսից[188]), Ուռուտում[189], Շահնազարում, (Մուշի և Ալաշկերտի գավառներից)[190], Լեջանում (Կարսից), Համամլուում (Մուշից, Ալաշկերտից)[191], Սարչապետում (Էրզրումի և Ալաշկերտի շրջանների գյուղերից): Ղարաքիլիսայում հաստատվեցին Կարսից, Արդահանից, Էրզրումից, Բայազետից վերաբնակիչներ:

Արևելյան Հայաստանի զանազան շրջաններից բնակիչներ են տեղափոխվել և հաստատվել Լեջանում (Տավուշի շրջանի գյուղերից), Աթանում, Կուրթանում (Շիրակի գավառից), Արդվիում, Մարցում (վերջինիս բնակիչները այդտեղ են վերաբնակվել Ճաճշաղինից), Գուգարքում, Քարինջում (Մարցից): Երևանի խանությունից՝ ողջ Փամբակածորում[192], ինչպես նաև Լոռու և Բորչալուի գավառներում հաստատվեց մոտ երկու հազար ընտանիք, որոնց մի մասը ցարական վարչության հորդորով հետագայում տեղափոխվեց Ելիզավետպոլի գավառ: Երևանից ու Արարատյան դաշտից տեղափոխվել են, Կուրթան[193], Լոռու բերդի բնակչության մեծ մասը եկել էր Ապարանից և Արարատյան դաշտից[194]:

Արցախից եկածները հաստատվել են Արդվիում, Ուռուտում, Շահալիում, Ղարաքիլիսայում, Կուրթանում, Դսեղում, Օձունում, Շնողում, Ճոճկանում, Մարցում: Մելիք-Զումշուդի, Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրեյդունի հետ Լոռի և Փամբակ եկած ավելի քան երկու տասնյակ ընտանիքներ դեռևս 1799 թ. բնակություն էին հաստատել Ղարաքիլիսայում[195]:

Լոռու մի տարածքից մեկ այլ տարածք են տեղափոխվել. Շահալի և Մարց գյուղերից՝ Ղամշկուտ, Մարցից՝ Քարինջ, Հաղպատից՝

[188] Լալաեան Ե, Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», էջ 340:
[189] Լոռու մարզ..., էջ 142:
[190] Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, էջ 69:
[191] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 458, էջ 7-8:
[192] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 458:
[193] Լալաեան Ե, Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», էջ 339:
[194] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22, վավ. 50, թթ. 1-2:
[195] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., նշվ. աշխ., էջ 80:



Աթան, Օձունից՝ Շահալի, Մղարթ, Դսեղից՝ Շահալի, Համզաչիման[196], Ծաթերից՝ Սադիբագդի: Արճիսի բնակիչների մեծ մասն այստեղ են տեղափոխվել Շնող գյուղից: Չորագյուղի բնակիչները Դսեղից գնացած վերաբնակիչներ էին[197]: 1829 թ. այս գյուղ են վերաբնակվել Շնող գյուղի մոտ գտնվող համանուն գյուղատեղիի բնակիչները:

Փամբակի գավառի տարբեր բնակավայրերից հաստատվել են Գուլաքարակում, Կուրթանում, Վարդաբլուրում: Գուլաքարակի և Կուրթանի վերաբնակիչները եկել են 1818 թ.[198]: 1832-1842 թթ. ընթացքում շուրջ 359 ընտանիք կամ 1087 շունչ (այդ թվում՝ 284 ընտանիք՝ կամ 859 շունչ Արևմտյան Հայաստանից, 29 ընտանիք կամ 71 շունչ Հայկական մարզից, 12 ընտանիք կամ 46 շունչ Շորագյալի գավառակից) տեղափոխվել ու վերահաստատվել է Փամբակի 39 գյուղերում: Ընդ որում, նորեկներից 183 ընտանիքը կամ 602 մարդ հաստատվելով գավառակում, հիմնել է 12 գյուղ, իսկ մնացած 176 ընտանիքը կամ 485 շունչը համալրել է արդեն գոյություն ունեցող գյուղերի բնակչության թիվը[199]:

Ղազախից գավառից բնակիչներ են տեղափոխվել Կուրթան, Շահալի (Աչաջրից), Լորուտ (Ղալաչայից, 1850-ական թթ.)[200]:

Պարսկաստանից ներգաղթել են Ուռուտ, Համամլու (հատկապես Խոյից):

Այսպիսով, 1820-ական թթ. հետո Լոռու վերաբնակեցման գործընթացը ռուս հրամանատարության կողմից նոր թափ ստացավ, քանի որ տարածքը տնտեսապես վերականգնելու դեպքում մեծ եկամուտներ էր խոստանում:

Կովկասի ռուսական պետական պաշտոնյաները, ռուսական բանակի զինվորական հրամանատարության ներկայացուցիչները՝ կայսրին և ռազմական բարձրաստիճան ներկայացուցիչներին

[196] ԳԱԱ, ՀԱԻ արխիվ, գ. 359, էջ 126:
[197] Լալաեան Ե., նշվ. աշխ., «Ազգագրական հանդէս», էջ 339:
[198] Լալաեան Ե., Բորչալուի գաւառ, էջ 86:
[199] Հայրապետյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Փամբակի գավառում XIX դարի առաջին քառասնամյակում, «Հայոց պատմության հարցեր», 2008, N 9, էջ 133:
[200] Լալաեան Ե., նշվ. աշխ., «Ազգագրական հանդէս», էջ 340, 351:

ուղղված իրենց զեկուցագրերում, նամակներում և հրամանագրերում նշում են Լոռու վերաբնակեցման կարևորությունն ու օգտակարությունը[201]: Դա բացատրվում էր տարածքի սահմանամերձ գոտի լինելով, ուստի առաջնային էին դառնում ցարական կառավարության պաշտպանական ռազմավարական նկատառումները. բնակչության պաշտպանության առիթով, հնարավոր կլիներ այնտեղ տեղադրել ռազմական զորաջոկատ և ռազմամթերք տեղափոխելու համար բացել ճանապարհը Փամբակի և Շորագյալի հետ:

Կենսական էր տարածքում հարկատու բնակչություն ունենալը, տեղի հանքերի շահագործումը, տնտեսական կյանքին զարկ տալու անհրաժեշտությունը:

Թե ինչքան կարևոր էր Լոռու բնակեցումը ռուսների համար, երևում է այն փաստից, որ նախատեսվում է Լոռիում բնակվել ցանկացողներին տալ ամեն տեսակի արտոնություններ[202], իսկ Տորմասովն անգամ պարգևատրում է խոստանում կայսեր անունից՝ Լոռիում նոր բնակիչներ տեղավորելու դիմաց[203]: 1811 թ. նոյեմբերի 7-ին գեն Լիսանևիչը մարկիզ Պաուլուչչիին գրում է. «Լոռու տափաստանի վերաբնակեցումը միանգամայն օգտակար է Վրաստանի և Փամբակի համար, և ես այնտեղ բնակվել ցանկացողներին պատրաստ եմ տալ ցանկացած արտոնություն»[204]:

Այսպիսով, ռուսական հրամանատարությունը, ելնելով վերը նշված կետերի անհրաժեշտությունից և առաջնորդվելով ցարական կառավարության գաղութային քաղաքականության շահերով, ամեն գնով ջանում էր բնակիչներ տեղափոխել Լոռի, ինչն ամբողջովին իրագործել չհաջողվեց: Պատճառն այն էր, որ նախ՝ Ռուսաստանին անցած տարածքները, այդ թվում Լոռին, XIX դ. ամբողջ 30-ամյակի ընթացքում լինելով պատերազմական իրադրության մեջ, ապահով

[201] Տես՝ АКАК, т. 2, док. 383, с. 204, док. 384, с. 205, док. 392, с. 211, док. 405, с. 216, док. 1229, с. 615, т. 4, док. 252, с. 172, т. 5, док. 145, с. 111; Присоединение..., док. 169, с. 197-198, док. 171, с. 202, док. 186, с. 240.
[202] АКАК, т. 4, док. 50, с. 52, т. 5, док. 145, с. 111.
[203] АКАК, т. 4, док. 50, с. 52.
[204] Նույն տեղում, т. 5, док. 145, с. 111.



չէին բնակության համար. պարսկա-թուրքական հաճախակի կրկնվող ասպատակություններին երբեմն գումարվում էին լեզգիների հարձակումները: Վերաբնակիչները նոր բնակավայրերում մնացին անօգնական, զուրկ ապրուստի տարրական պայմաններից: Նման պայմաններից ելնելով նրանցից շատերը հետագայում ռուսական տիրույթներում դարձյալ տեղից-տեղ անցավ:

Վերաբնակեցումների արդյունքում Լոռու բնակչությունը չկորցրեց իր էթնիկ պատկերը. տարածքը մնաց հայաբնակ:

# ՎԵՐՋԱԲԱՆ

XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակի Լոռու ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածքի քաղաքական, վարչական և տնտեսական իրավիճակների փոփոխություններն անմիջականորեն կապված են սահմանային փոփոխությունների հետ: Օտար տիրապետությունների հաստատումը Լոռու տարածքում իր ազդեցությունն է թողել ոչ միայն տեղի ազգաբնակչության կազմի փոփոխության և էթնիկ տեղաշարժերի, այլև տարածաշրջանի վարչական բաժանման վրա: Այդ բաժանումների ժամանակ հիմնականում անտեսվել է էթնիկ սկզբունքը:

XVIII դ. սկզբներին Անդրկովկասում ստեղծված նոր ռազմաքաղաքական իրադրությունը պայմանավորված էր հյուսիսկովկասյան ցեղերի (լեզգիներ, ավարներ) մշտական հարձակումների, պարսկաթուրքական ավերիչ արշավանքների և երկրամասի նկատմամբ Ռուսական կայսրության հետաքրքրությունների աճով: Ամբողջ XVIII դ. ընթացքում հյուսիսկովկասյան լեռնականների, պարսից Աղա Մահմադ խանի արշավանքների հետևանքով խիստ նվազեց Լոռու, Փամբակի, Բորչալուի, Ղազախի, Շամշադինի բնակչությունը: Սակայն իրադրության կայունացմանը զուգընթաց, տարածաշրջանը լքած բնակիչների զգալի մասը վերադարձավ և նորից շենացրեց իր օջախները:

Վրացական տիրապետությունը չկարողացավ փոխել Լոռու հայկական էթնո-մշակութային պատկերը հօգուտ վրացականի: Հետևաբար XIX դ. սկզբին Լոռու բնակչությունը շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ:

Լոռու գավառը թե՛ հնդկահայ մեծահարուստ Շահամիրյանին նվիրաբերելը, թե՛ որպես բնակության վայր Արցախի մելիքներին տրամադրելը բխում էր վրացական արքունիքի շահերից, նպատակը՝ տարածքում մեծ քանակությամբ բնակչություն ունենալն էր, քանի որ տարածքը վերջին ժամանակաշրջաններում ասպատակությունների ու ավերածությունների ենթարկվելով՝ բնակչության մեծ չափերի կորուստներ էր կրել և տնտեսության զարգացումը (Լոռին Վրաստանի



հարավային սահմանն էր, ուստի անհրաժեշտ էր վերականգնել տարածքի տնտեսական կայուն իրավիճակը):

Արխիվային փաստաթղթերն ապացուցում են, որ Շահամիրյանի ժառանգներն ամենևին էլ չէին հրաժարվել իրենց ժառանգական կալվածք Լոռիից, ինչպես նշվում է գավառը Արցախի Մելիք-Ջումշուդին տրվող փաստաթղթի մեջ:

Վրացական տիրապետությունը Լոռիում XIX դ. սկզբներից փոխարինվեց ռուսականով: Եկեղեցական ծխամատյանները փաստում են, որ XVIII դ. 20-ական թթ. Լոռու գյուղերը կենսունակ էին և ունեին հայկական բնակչություն: Ծխամատյաններից տեղեկանում ենք, որ գյուղերի բնակչությունը կանոնավոր կարգով վճարել է վանքերին հասանելիք հարկերն ու տուրքերը:

Ռազմաքաղաքական իրադրության հետ կապված՝ տարածաշրջանի ծխամատյաններում հիշատակվող մարդկանց թվաքանակը մշտապես փոփոխվում է: 1810-ական թվականների կեսերից սկսած, իրավիճակի քիչ թե շատ կայունացմանը զուգընթաց՝ այդ հարկացուցակները դառնում են համեմատաբար կանոնավոր:

1815-1816 թթ. Հաղպատ գյուղի սեփականության շուրջ պայքար է գնում Լոռու ազնվականներ Բարաթովների, Դոպունաբեկովների և Թիֆլիսի հայոց հոգևոր թեմի միջև: Բնականաբար, վանքն ուներ բավական թվով վանքապատկան բնակչություն, որից մեծ եկամուտներ էր ստանում: 1817 թ. Ղալաչա, Կոդբ, Դոստլու, Բարան, Կոթիգյուղ, Բաղանիս և Շնող գյուղերի բնակչությանն ուղղված շրջաբերականում Ներսես Աշտարակցին նշում է, որ ուղարկում է Խաչատուր վանականին՝ որպեսզի եկեղեցական հարկերը հանձնեն նրան: 1826 թ. Ն. Աշտարակեցու գրությամբ Մարտիրոս ավագ քահանա Ջաղինյանը գործակալ է նշանակվում վանքապատկան 10 գյուղերի վրա և պաշտոնավարության հրահանգներ է ստանում: 1817-1820-ական թթ. վանքերի եկամուտների և ծախսերի, տարբեր վանքապատկան գյուղերի մկրտվածների, ամուսնացածների, մահացածների ծխամատյանների ուսումնասիրությունը բերում է եզրակացության, որ Լոռու գյուղերն ունեցել են վանքապատկան բնակչության մեծ զանգված (թեև ցուցակները խիստ թերի են, քանի որ տվյալները

վերաբերվում են միայն արական բնակչությանը): Քահանաների կողմից կազմված առանձին անհատների գույքացուցակները ևս դրա ապացույցն են: Աղբյուրները բազմիցս հիշատակում են, որ յուրաքանչյուր գյուղ ունեցել է իր տանուտերը (քյոխվա): Արդեն 1830-ական թթ. սկսած, հատկապես 1840-ական թթ. գյուղերի ծխամատյաններում բնակչության թիվը կտրուկ մեծանում է, ինչը ևս վկայում է նախորդ տասնամյակների հարկացուցակների խիստ թերի լինելու մասին:

Այս և այլ շատ նման փաստերից ելնելով, գալիս ենք այն եզրակացության, որ Լոռու գյուղերը, 1815-1820-ական թթ. ոչ միայն ունեին բավականին թվով բնակչություն, այլև բացառապես հայաբնակ էին:

Անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ, նոր որակ և զարգացում են ստանում հայ-ռուսական բազմակողմանի հարաբերությունները: Հայ հասարակական-քաղաքական գործիչները (Հովսեփ Արղության, Գրիգոր վարդապետ, Ներսես Աշտարակեցի, Շահամիր Շահամիրյան, Լազարյաններ և ուրիշներ) թուրք-պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրության գործը դիտում էին շաղկապված Ռուսաստանի ռազմական աջակցության ու արտաքին քաղաքականության հետ: Ուստի պատահական չէ, որ այսուհետև հայ քաղաքական գործիչները, Արցախի մելիքները (Մելիք-Ջումշուդ, Մելիք-Աբով և ուրիշներ), անգամ հայոց կաթողիկոսը (Հովհաննես Կարբեցին) ռազմական աջակցության, Վրաստանում հաստատված հայերի իրավունքների պահպանման և այլ հարցերով անմիջապես դիմում են Անդրկովկասում ռուսական կառավարության տեղական ներկայացուցիչներին, ռուս ռազմական գործիչներին կամ էլ ուղղակի ռուսական կայսրին: Այդ նամակներից տեղեկանում ենք, որ Լոռի եկած մելիքները խիստ դժգոհ էին վրաց ազնվականության վերաբերմունքից, ինչն էլ դարձավ պատճառներից մեկը, որ նրանք վերադառնան Արցախ:

XIX դարասկզբի՝ 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ամբողջ ընթացքում պարսկական զորքերի կողմից կատարվող ասպատակությունների հետևանքով Լոռու բնակչության մի մասը սպանվեց, մի մասը գերեվարվեց, մի մասն էլ պարզապես լքեց իր բնակավայրերը: Ուստի 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատե-



րազմի արդյունքում կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրից հետո (1813 թ. հոկտեմբերի 12), երբ Անդրկովկասի մի շարք տարածքների հետ միասին Ռուսաստանի կազմի մեջ մտավ նաև Լոռին, մարդաթափ եղած Լոռին վերաբնակեցնելու և տնտեսապես վերականգնելու հարցը դարձավ ցարիզմի արևելյան քաղաքականության բաղկացուցիչ մասը: Դրա կարևորությունը բխում էր ցարական կառավարության տնտեսական և քաղաքական գործառույթներից: Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցարիզմը դիմում է ամեն հնարավոր միջոցի՝ տարածաշրջանը վերակենդանացնելու համար: Կարևոր հանգամանք էր պետական հարկատու բնակչություն ունենալու անհրաժեշտությունը: Այս ժամանակահատվածում առկա է դառնում տարածաշրջանը թուրքական տարրով բնակեցվելու վտանգը, ինչը ցարիզմի կողմից տարածաշրջանը վերաբնակեցնելու ճանապարհին էթնիկ սկզբունքներն անտեսելու հետևանք էր:

Նույն իրավիճակն էր նաև 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո կնքված Թուրքմենչայի և Ադրիանապոլսի հաշտության պայմանագրերից հետո, երբ Անդրկովկասի աստիճանական միացման գործընթացով պայմանավորված, արևմտահայ ստվար զանգվածներն, անձի ու գույքի ապահովություն ձեռք բերելու ակնկալությամբ, ցանկություն հայտնեցին ինքնակամ տեղափոխվել ռուսական հպատակություն ընդունած տարածքներ, այդ թվում՝ Լոռի:

Այսպիսով, XIX դարի առաջին քառորդին, ռուսական իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության գլխավոր նպատակն է դառնում Ռուսաստանին անցած Լոռու գավառն արևմտահայ վերաբնակիչների հաշվին վերաբնակեցնելը:

Ռուսական իշխանությունների որդեգրած ժողովրդագրական նմանատիպ քաղաքականությունն առաջին հերթին պայմանավորված էր ռազմաքաղաքական կոնկրետ իրավիճակով և թելադրված էր նվաճված տարածքները հպատակ բնակչությամբ բնակեցնելու հեռահար նպատակներով: Հետևաբար հայ ազգաբնակչության տեղաշարժերը պայմանավորված էին հիմնականում քաղաքական դրդա-

